ՀՅԴ Պաշտօնաթերթ







# ԴՐՕՇԱԿ







Սեպտեմբեր N09 (1624)

2010

ԴՐՕՇԱԿ
ՀՅԴ Պաշտօնաթերթ











# ԴՐՕՇԱԿ

ՀՅԴ Պաշտօնաթերթ



«Դրօշակ»
ամենամսյա պաշտոնաթերթ
Հայ Հեղափոխական Դաշնակցության

Հիմնադիր՝ **ՀՅԴ**

Գլխավոր խմբագիր՝
**Ռուբեն Հովսեփյան**

Խմբագիր՝ **Կ. Խանլարյան**

Համակարգչային շարվածքը՝
**Ս. Խաչատրյանի**

Ձեւավորումը՝ **Ա. Գրիգորյանի**

Ոճը՝ **Ս. Փարթամյանի**

Գրանցման վկայական 897

Երեւան,375010,Մհեր Մկրտչյան 12/ 1
Հեռ. 521 876
էլ.փոստ.droshak@ arf.am

Տպագրությունը՝ «Բավիղ» ՍՊԸ-ի

**"Droshak"** monthly,
ARF dashnaktsoutiun publication

Editor-in-Chief: **Rouben Hovsepian**

12| 1 Mher Mkrtchian,Yerevan,375010
Tel. 521 876
e.mail:droshak@arf.am

Խմբագրական

Ժողովրդավարութիւնը Հայաստանում 2

Սոցիալ-տնտեսական

Եվրոմիության տնտեսական ու պետական պարտքի
ճգնաժամերն ու դրանց
հաղթահարման քաղաքականությունները 4

ԼՂՀ հիմնախնդիր

Այն փոթորկալից օրը (շարունակություն) 10

Հայկական հարց

Սևրաֆոբիայի դրսևորումները Թուրքիայի
հասարակական-գիտական քննարկումներում 15

Տեսակետ

Թուրք-հայկական յարաբերութիւնները
փակուղու մէջ 21

Տարածաշրջան

Ադրբեջան. խոցելի կայունություն 28

Պատմաբանական

Ատելության անատոմիա.
Ճշմարտություն Ստալինի մասին 33

«Դրօշակ»-ը 100 տարի առաջ

Յայտարարութիւն 44

Նոր գրքեր

Հայաստանը 1945-46թթ.
դիվանագիտական փաստաթղթերում 45

Պատկերասրահ

Փարավոն Միրզոյան 48

Հ.Յ.Դ. ԲԻՒՐՈՅԻ ԳՐԱԴԱՐԱՆ
A.R.F. BURO LIBRARY



Digitized by ARF PR Office

# Ժողովրդավարութիւնը Հայաստանում

Ժողովրդավարութիւն հասկացութիւնն էլ, սոցիալիզմ, արդարութիւն, ազատութիւն, ազգայնութիւն, մշակոյթ եւ բազմաթիւ այլ հասկացութիւնների պէս, ըստ էութեան, համամարդկային գաղափար է եւ ունի բնորոշման տիեզերական կամ համընդհանուր սահմանում: Սակայն ըստ ձեւի, իրականացման եւ գործադրման առումով, դարձեալ նշուած հասկացութիւնների նման, ունի ազգային հենք եւ կախուածութիւն տեղական պայմաններից:

Ըստ դասական մարքսիստական տեսութեան, ազգերը, առաւել եւս փոքր ազգերը, կապիտալի կենտրոնացման գործընթացին զուգահեռ, պէտք է ուծացուէին, ձուլուէին եւ, ի վերջոյ, վերանային կապիտալիզմի դարաշրջանի աւարտով: Սոյն տեսութիւնը մեծապէս ձեռնտու էր բոլշեւիկների ծաւալապաշտական նկրտումներին, նրանց ռուսացման քաղաքականութեանը, որի գաղափարախօսական ֆոնի վրայ ի յայտ եկաւ «համաշխարհային սոցիալիզմ» կոչուող շաբլոնը եւ դրան զուգորդուող մի ամբողջ վարդապետական մտակեցուածք: Այս բոլորի շղարշի ներքոյ փաստօրէն ռուսական կայսերապաշտութիւնն էր թաքնուած:

Պարագան, ձեւական մի քանի մանրամասնութիւններից զատ, շատ էլ տարբեր չէ նորօրեայ «արեւմտեան կայսերապաշտութիւն»-ից: Գաղափարախօսական առումով, այստեղ «ինտերնացիոնալիզմի» փոխարէն գործում է «աշխարհաքաղաքացիութիւնը» (կոսմոպոլիտիզմ), «համաշխարհային սոցիալիզմ»-ի փոխարէն՝ «համաշխարհային դեմոկրատիզմ»-ը:

Կարծես կրկին վերակենդանացել է Պրոկրուստեսը՝ մարդկանց հասակը իր մահճով չափելու բուռն ցանկութեամբ: Նոր շաբլոններով «ստուգւում» են բոլոր նրանք, ովքեր չեն ցանկանում տեղաւորուել «նոր աշխարհակարգի» խրթին համակարգի պրոկրուստեան մահճում: Լեգալացուած ու շաբլոնացուած «ազգայնականութեան» փոխարէն ճշմարիտ ազգայնութեան գաղափար դաւանողները համարւում են նացիստ, ազգերի ինքնորոշման իրաւունքին հաւատացող, ազգային պահանջատիրութեան եւ ազգային-ազատագրական դատին հետամուտ քաղաքական ուժերը դասւում են «արեւմտեան անվտանգութեան» հետ համագործակցութեան բաւականին մութ անցեալ ունեցող Բեն Լադենի գլխաւորած ահաբեկչական կազմակերպութիւնների շարքին, սոցիալիզմին եւ սոցիալական

արդարութեան սկզբունքին հաւատացողները նոյնացւում են կոմունիզմ քարոզողների հետ:

Պրոկրուստեան ստուգումները անծանօթ երեւոյթներ չեն 120 ամեայ ՀՅ Դաշնակցութեան համար, ով քաղաքական բեմում ակտիւ ներկայութիւն է ունեցել մի քանի նոր ու հին աշխարհակարգերի ծագման ու անհետացման ժամանակ:

Ահա այս վերջին աշխարհակարգում էլ գործում, եւ ամեն քայլափոխի իր ծանրակշիռ տիրապետութիւնն է զգացնել տալիս «դեմոկրատիայի համաշխարհային ստանդարտներ» կոչուող հասկացութիւնը:

Պատմական փաստ է, որ հայութեան համար հնաւանդ մտայնութիւն է եղել ժողովրդավարութիւնը: 19-րդ դարում, երբ նոյնիսկ եւրոպական մի շարք կայսրութիւնների պետական կեանքը կառավարւում էր բացարձակ միապետութեամբ, պետականազուրկ հայութիւնը սահմանադրական բարեփոխումներ էր մտցնում իր ազգային-կազմակերպական միակ կառոյցի՝ եկեղեցական կեանքում: Կամ 1918 թ. անկախացած Հայաստանում, օրինակ, գործում էին ժողովրդավարական այնպիսի օրէնքներ (ասենք՝ կանանց եւ տղամարդկանց իրաւահաւասարութեան մասին օրէնքը), որոնք մինչ այդ գոյութիւն չունէին նոյնիսկ եւրոպական որոշ պետութիւններում:

Արդ մի քանի տարի է, որ փորձում են այդ նոյն պետութեանն ու ազգին խեղճացնել՝ միջազգային բեմում ժողովրդավարութեան «համաշխարհային ստանդարտներին» չհամապատասխանելու համար:

ՀՀ եւ իշխանութիւնները, եւ ծայրայեղ ընդդիմութիւնը, իշխանութիւնը պահելու կամ նուաճելու իրենց վարած քաղաքականութեան մէջ, գերազանցապէս, առաջնորդւում են «նոր աշխարհակարգի» զուտ քաղաքական չափանիշներով: Միւս հարցերը նրանց համար առաւելապէս «ներքին սպառման» թեմաներ են: Աւելի ճիշտ՝ միւս հարցերում, ասենք՝ արտաքին քաղաքականութեան, սոցիալ-տնտեսական, գիտա-մշակութային եւ բազում այլ բնագաւառներում, նրանք էական տարակարծութիւններ չունեն:

Սակայն իրողութիւնն այն է, որ ներկայումս Հայաստանը տառապում է ոչ թէ «մարդու իրաւունքների» պակասից, այլ խեղճանում է արտաքին քաղաքականութեան բնագաւառում մեր ինքնորոշման իրաւունքի արծարծման եւ պաշտպանութեան հարցում: Հայաստանը տառապում է ոչ թէ հանրահաւաքների մասին օրէնքի անստանդարտութիւնից, այլ տնքում է սոցիալական կեանքի ծանր բեռան տակ, տառապում հէնց սոցիալ-տնտեսական կեանքում դեմոկրատիայի բացակայութիւնից: Հայաստանը տառապում է ոչ թէ քաղբանտարկեալի կարգավիճակի մասին անորոշ սահմանումներից, այլ շնորհիւ «ազատ շուկայական» ծուախեղուած մոդելի համատարած օգտագործումից: Եւ նա աստիճանաբար կորցնում է իր գիտական եւ մշակութային ինքնուրոյն զարգացման արագացումը:

Այս հարցերի լուծման գործում, նոր ազատական, նէոլիբերալ արժէքներ կրողները, լինեն իշխանութիւնների թէ ընդդիմութեան շարքերում, ոչ միայն անտարբեր են, այլեւ անօգտակար, թերեւս նաեւ՝ վնասակար:

Արմատական, ամբողջական եւ համակարգային բարեփոխման ուղենիշները պէտք է որոնել ազգային ընդդիմութեան ոլորտներում:

Հ.Յ.Դ. ԲԻՒՐՈՅԻ ԳՐԱԴԱՐԱՆ
A.R.F. BURO LIBRARY



# Եվրոմիության տնտեսական ու պետական պարտքի ճգնաժամերն ու դրանց հաղթահարման քաղաքականությունները

Մհեր ԾԱՏՈՒՐՅԱՆ
Անկախ խորհրդատու

Եվրոպական Միության տնտեսությունը 2009 թ. ստեղծել է 11.805 միլիարդ եվրոյից ($16.447 միլիարդ) ավելի ՀՆԱ, ըստ որի այն հանդիսանում է աշխարհի ամենամեծ տնտեսությունը: ԵՄ տնտեսությունը բաղկացած է մեկ շուկայից և Առևտրի համաշխարհային կազմակերպությունում ներկայացված է որպես միասնական միավոր:

Տնտեսական արդյունքները խիստ տարբեր են ԵՄ երկրների միջև և վերջին շրջանում բնորոշվում են տարբեր աստիճանի տնտեսական անկումով: ԵՄ հարկաբյուջետային քաղաքականությունը ղեկավարվում է Աճի և կայունության պակտով, ինչը տարածվում է բոլոր անդամ երկրների վրա և ներառում է նաև հստակ կանոններ, որոնք կիրառելի են եվրոգոտու անդամների նկատմամբ: Ըստ նշված պակտի՝ յուրաքանչյուր երկրի դեֆիցիտը չպետք է գերազանցի ՀՆԱ-ի 3 %-ը և պետական պարտքը չպետք է գերազանցի ՀՆԱ-Ի 60 %-ը: Սակայն, մեծ անդամներից շատերը շարունակաբար ունեցել են 3 %-ից զգալիորեն բարձր դեֆիցիտ, և եվրոգոտու, որպես մեկ ամբողջության, պարտքի տոկոսը գերազանցում է 60 %-ը: Ստորև տրվում են ԵՄ և նշված չափանիշներով ԵՄ համեմատությամբ առավել խնդիր ունեցող անդամ երկրների, ինչպես նաև Հայաստանի համապատասխան ցուցանիշները 2009 թ. համար՝

| Երկիր | ՀՆԱ, միլիարդ $ | ՀՆԱ-ն ԵՄ ՀՆԱ-ի % | ՀՆԱ անկում/աճի % | Պետ. պարտքը | Դեֆիցիտը (-) կամ ավելցուկը (+) ՀՆԱ % |
|---|---|---|---|---|---|
| ԵՄ | 16447,2 | 100,0 | -4,08 | 73,6 | -6,8 |
| Ֆրանսիա | 2675,9 | 15,4 | -2,19 | 77,6 | -7,5 |
| Միաց. Թագ. | 2183,6 | 15,3 | -4,92 | 68,1 | -11,5 |
| Իտալիա | 2118,7 | 12,6 | -5,04 | 115,8 | -5,3 |
| Իսպանիա | 1464,0 | 8,8 | -3,69 | 53,2 | -11,2 |
| Բելգիա | 470,4 | 2,7 | -3,00 | 96,7 | -6,0 |
| Լեհաստան | 430,2 | 2,4 | 1,70 | 51,0 | -7,1 |
| Հունաստան | 330,8 | 2,0 | -1,96 | 115,1 | -13,6 |
| Պորտուգալիա | 227,9 | 1,3 | -2,68 | 76,8 | -9,4 |
| Իռլանդիա | 227,8 | 1,3 | -7,10 | 64,0 | -14,3 |
| Ռումինիա | 161,5 | 1,0 | -7,13 | 23,7 | -8,3 |
| Հունգարիա | 129,4 | 0,8 | -6,33 | 78,3 | -4,0 |
| Լիտվա | 37,2 | 0,3 | -14,96 | 29,3 | -8,9 |
| Լատվիա | 26,2 | 0,2 | -18,01 | 36,1 | -9,0 |
| Հայաստան | 8,7 | 0,1 | -14,42 | 28,1 | -4,7 |

*Աղբյուր՝ IMF World Economic Outlook*

Աղյուսակի չորրորդ սյունակի՝ ՀՆԱ անկման, ցուցանիշները ցույց են տալիս տնտեսական ճգնաժամի ուժգնությունը: Աղյուսակի հինգերորդ ու վեցերորդ սյունակների՝ պետական պարտքի և դեֆիցիտի, ցուցանիշները ցույց են տալիս պետական պարտքի ճգնաժամի ուժգնությունը:

**Տնտեսական ճգնաժամի հաղթահարման միջոցներ**

2007 թ. սկսված համաշխարհային ֆինանսական ճգնաժամին արձագանքելու համար Եվրոպական հանձնաժողովը դեռևս 2008 թ. նոյեմբերին առաջարկեց եվրոպական խթանման ծրագիրը՝ 27 անդամ երկրների տնտեսությունների վրա ճգնաժամի ազդեցության հաղթահարման համար: Ծրագիրը նպատակ ունի ազգային տնտեսական քաղաքականությունների միջոցով սահմանափակել երկրների տնտեսական անկումը՝ նախատեսելով մինչև երկու տարի տևողությամբ միջոցառումներ:

Ծրագրի արժեքը կազմում է 200 միլիարդ եվրո, ինչը համարժեք է ԵՄ ՀՆԱ-ի 1,5 %-ին, և նախատեսում է օգտագործել ազգային կառավարությունների ազգային բյուջեները, ինչպես նաև ԵՄ բյուջեն և Եվրոպական ներդրումային բանկի բյուջեն:

Խթանման ծրագիրը բաղկացած է պահանջարկը խթանելու ու աշխատատեղերը պահպանելու համար նպատակաուղղված ու կարճաժամկետ միջոցներից և ռազմավարական նշանակության ճյուղերում, ներառյալ՝ հետազոտությունները ու նորարարությունը, ներդրումներ կատարելու համար երկարաժամկետ միջոցներից: Միջոցների նպատակն է խթանել աճը և ապահովել կայուն բարեկեցություն:

Ծրագիրը ներառում է լայնածավալ գործողություններ ազգային և ԵՄ մակարդակով՝ սպառողներից ու արդյունաբերական ընկերություններին (հատկապես ավտոմեքենաշինության և շինարարության) օգնելու համար: Միջոցները ներառում են՝

- Հարկաբյուջետային ու դրամավարկային միջոցներով տնտեսության խթանում՝ Հանձնաժողովը անդամ երկրներին թույլատրում է խախտել Աճի և կայունության պակտը երկու կամ երեք տարով:

- Ներդրումային խթաններ՝ ծրագիրը նախատեսում է կլիմայի փոփոխության դեմ պայքարի խրախուսման միջոցներ և խթանում է էներգետիկ ու էներգաարդյունավետ տեխնոլոգիաներում ռազմավարական ներդրումները:

- Ցածր տոկոսադրույքներ՝ Եվրոպական կենտրոնական բանկին առաջարկվում է նվազեցնել իր տոկոսադրույքները:

- Հարկային նվազեցումներ՝ կանաչ տեխնոլոգիաների ու էկո-բարենպաստ մեքենաների նկատմամբ հարկման նվազեցում՝ հին բարձր արտանետումներով մեքենաների ժամանակակից մեքենաներով փոխարինման ծրագրերին զուգահեռ:

- Սոցիալական միջոցներ՝ Հանձնաժողովը առաջարկել է կառավարություններին ժամանակավորապես ավելացնել գործազրկության վճարումներն ու դրանց տևողությունը, ավելացնել ընտանեկան նպաստները, նվազեցնել ցածր եկամուտների նկատմամբ հարկերը, նվազեցնել գործատուներից ցածր աշխատավարձերի համար գանձվող սոցիալական ապահովության վճարումները, նվազեցնել ցածր եկամուտ ունեցող աշխատողների վճարած աշխատանքի ծախսերը, հատկացնել սուբսիդավորված վարկեր կամ վարկային երաշխավորություններ ընկերությունների համար, նվազեցնել ժամանակավորապես ԱԱՀ-ի դրույքը սպառնմանն օժանդակելու համար: Հանձնաժողովը առաջարկել է նաև նվազեցնել ԱԱՀ-ի դրույքները բարձր աշխատուժի ներգրավվածությամբ ծառայությունների համար (օրինակ՝ հասարակական սնունդ):

ԵՄ անդամ երկրների ազգային ծրագրերը հաճախ մոտ են ՀՆԱ-ի 1,2 %-ին, ինչպես առաջարկել է Եվրոպական հանձնաժողովը: Սակայն, Գերմանիան ու Իսպանիան հայտարարել են հարկաբյուջետային խթաններ՝ համապատասխանաբար սեփական ՀՆԱ-ների 3,3 % և 3,7 %-ի չափով:

Հանձնաժողովի կողմից հայտարարված ծրագիրը առաջարկել է տնտեսությունը աշխուժացնող միջոցներ, բայց շատ չի բնորոշել ծրագրերի բնույթը: Որոշ ծրագրեր կենտրոնացած են պահանջարկի խթանման ուղղությամբ (Միացյալ Թագավորություն, մասամբ Իսպանիա, Իտալիա կամ Գերմանիայի երկրորդ ծրագիրը), այլ ծրագրերի հիմքում ավելի շատ ընկած են առաջարկի խթանները (ֆրանսիական ծրագիրը, գերմանական առաջին ծրագիրը):

Պահանջարկը բարելավելու համար ծախսումների նկատմամբ ձեռնարկված միջոցները ընդհանուր առմամբ ներառում են միջնաժամկետ աճին օժանդակող միջոցներ՝ ենթակառուցվածքների (ճանապարհային ցանցեր ու երկաթգիծ) վրա ավելացված պետական ծախսումներ և բնակարանապահովման հատվածին օգնություն (մասնավորապես՝ շինարարություն և վերանորոգում): Բազմաթիվ երկրներ նաև հայտարարել են կարճաժամկետ միջոցներ՝ ամենաաղքատ մարդկանց վրա ճգնաժամի ազդեցությունը մեղմացնելու համար (ցածր եկամուտ ունեցող ընտանիքներին ու գործազուրկներին տրվող վճարումների ու նպաստների աճ): Սակայն այս օգնությունները տնտեսության վրա հաճախ ունեն սահմանափակ ազդեցություն, որովհետև դրանց քանակը աննշան է:

Մյուս միջոցները ազդեցություն ունեցան ազգային հարկային համակարգերի վրա: Միացյալ Թագավորությունը միակ երկիրն էր, որ որոշեց ժամանակավորապես 2,5 տոկոսային կետով նվազեցնել ստանդարտ ԱԱՀ-ի տոկոսադրույքը: Գերմանիայում գործատուներից գանձումները նվազեցվեցին: Ծրագրերի մեծ մասը ներառում են փոքր ու միջին ձեռնարկություններն ու կանաչ էներգետիկայի զարգացմանը ուղղված խթանող միջոցներ: Ստորև տրվում են Եվրոպական խթանման ծրագրի շրջանակներում ԵՄ անդամ որոշ երկրների հատկանշական որոշ միջոցների չափերը՝ արտահայտված միլիարդներով ու ՀՆԱ-ի վրա հարաբերությամբ (%), և կառուցվածքը.

| | | |
|---|---|---|
| **Գերմանիա** | | |
| Առաջին ծրագիր | €32 (1,3) | Ներդրումներ ենթակառուցվածքներում |
| Երկրորդ ծրագիր | €50 (2) | Հանրային ներդրումներ |
| **Ֆրանսիա** | | |
| Խթանման ծրագիր | €26 (1,3) | Ավտոմեքենաշինության օգնություն (2 մլրդ.)<br>Շինարարության ու բնակարանապահովման օգնություն (2 մլրդ.)<br>Հանրային աշխատանքներ (10,5 մլրդ.)<br>Ընկերությունների լիկվիդայնության բարելավման օգնություն (10 մլրդ.) |
| **Իտալիա** | | |
| Ընտրական խոստումներ | €20 (1) | Նվազագույն աշխատավարձի մինչև 2012 թ. բարձրացում E570-ից մինչև 800<br>Հարկային նվազեցումներ |

| | | |
|---|---|---|
| | | Եկամուտ չունեցող ընտանիքին E400 նպաստ |
| | | Բնակարանապահովման հատվածին հարկային նվազեցումներ |
| | | Հարստության հարկի նվազեցում |
| Առաջին ծրագիր | €20 | ՓՄՁ օգնություն |
| | | Սոցիալական բնակարանների շինարարություն |
| Երկրորդ ծրագիր | €11 | Գանձումների նվազեցում և խթաններ նոր աշխատատեղերի համար |
| | | Հետազոտությունների և զարգացման ծախսումներ |
| | | Ավտոմեքենաշինության օգնություն |
| **Իտալիա** | €9 (0,6) | |
| Ընտրական խոստումներ | | Արտաժամի հարկման նվազեցում |
| | | Բնակարանապահովման հարկի նվազեցում |
| Հակաճգնաժամային ծրագիր | | Ցածր եկամտի ընտանիքներին օգնություն (3 մլրդ.) |
| | | Ընկերությունների (2,3 մլրդ.) և ընտանիքների (0,7 մլրդ.) հարկային նվազեցումներ |
| **Նիդեռլանդներ** | | |
| Բյուջե | €2,5 (0,4) | Ընտանիքների և ընկերությունների հարկային նվազեցումներ |
| | | ԱԱՀ-ի բարձրացման դադարեցում |
| | | Գործազրկության վճարների իջեցում |
| Խթանման ծրագիր | €6 (1) | Հարկային նվազեցումներ |
| | | Սոցիալական վճարումներ |
| | | Ընկերությունների լիկվիդայնության բարելավման օգնություն |
| | | Հանրային ծախսումներ (աշխատանքներ) |
| **Միացյալ Թագավորություն** | | |
| Հրատապ միջոցներ | £1 | Անշարժ գույքի հատվածի օգնություն |
| Խթանման ծրագիր | £20 | Մինչև 2010 թ. ԱԱՀ-ն նվազեցվել է 17,5-ից 15 % |
| Լրացուցիչ միջոցներ | £10 | 100.000 աշխատատեղ ստեղծելու շինարարական ծրագիր (դպրոց, հիվանդանոց, կանաչ էներգետիկա) |

**Պետական պարտքի ճգնաժամ**

2010 թ. վաղ որոշ եվրոպական երկրների, մասնավորապես ԵՄ անդամներ Հունաստանի, Իսպանիայի ու Պորտուգալիայի հետ կապված առաջ եկան պետական պարտքի ճգնաժամի մտահոգություններ: Սա հանգեցրեց վստահության ճգնաժամի, ինչպես նաև այս երկրների ԵՄ այլ անդամների, հատկապես Գերմանիայի համեմատությամբ պարտատոմսերի դրույքաչափերի և վարկերի ապահովագրության ռիսկի աճին:

Կառավարությունների աճող դեֆիցիտների ու պարտքի մակարդակների վերաբերյալ մտահոգությունը տագնապ ստեղծեց ֆինանսական շուկաներում: Պարտքի ճգնաժամը մեծ մասամբ կենտրոնացած է Հունաստանի վրա, որտեղ կառավարության պարտքի ֆինանսավորման ծախսի աճի մտահոգություն կա: 2010 թ. մայիսին եվրոգոտու երկրներն ու Արժույթի միջազգային հիմնադրամը համաձայնեցին Հունաստանին €110 միլիարդ վարկ տրամադրել՝ պայմանավորված Հունաստանի կողմից հարկաբյուջետային խիստ միջոցների իրագործմամբ: Միաժամանակ, Եվրոպայի ֆինանսների նախարարները հաստատեցին մոտ մեկ տրիլիոն դոլար արժողությամբ օգնության համապարփակ փաթեթը, որը նպատակաուղղված է ամբողջ Եվրոպայում ֆինանսական կայունության ապահովմանը՝ ստեղծելով Եվրոպական ֆինանսական կայունության գործիքը:

Եվրոպայի դրամական միության չափանիշներին համապատասխան երևալու համար Հունաստանի կառավարությունը հետևողականորեն և դիտավորյալ կերպով խեղաթյուրել է երկրի պաշտոնական տնտեսական վիճակագրությունը: Մասնավորապես, թաքցվել է վարկառության իրական մակարդակը, որի շնորհիվ կառավարու-

թյունը կարողացել է ծախսել իր միջոցներից ավելին, պահպանել հունական սոցիալական մոդելը և ֆինանսավորել պետական հատվածի աշխատատեղերը, կենսաթոշակներն ու այլ սոցիալական նպաստները՝ միաժամանակ ԵՄ դիտորդներից թաքցնելով իրական դեֆիցիտը: Նման երևույթ նկատվել է նաև ԵՄ այլ երկրներում, հատկապես Իտալիայում, սակայն Հունաստանը ամենավատ դեպքն է:

Հունաստանի կառավարության պարտատոմսերի շուկան կախված է օտարերկրյա ներդրողներից՝ որոնց գնահատումների համաձայն այդ պարտատոմսերի մինչև 70 %-ը պահվում են դրսում: Չնայած ճգնաժամին, հունական կառավարության պարտատոմսերի բոլոր աճուրդները գերակատարվել են 2010 թ.: Հունվարին ներդրողներից պարտատոմսերի համար ստացվել է 20 միլիարդ եվրոյի պատվեր՝ սպասվածից չորս անգամ ավելի շատ: Մարտին վաճառվել է 5 միլիարդ եվրոյի պարտատոմս և ստացվել է երեք անգամ ավելի շատ պատվեր:

Հունական կառավարության ձախողման մտահոգությունների ազդեցության տակ հունական պարտքի վարկանիշը իջեցվեց ապրիլին, որին հաջորդեց կառավարության պարտատոմսերի դրույքաչափերի աճը: Հարցականի տակ է դրվել Հունաստանի իր պարտքը վերաֆինանսավորելու կարողությունը, քանի որ ձախողման դեպքում ներդրողները, ըստ որոշ գնահատականների, կկորցնեն իրենց գումարների 30-50 %-ը:

Մայիսին Եվրոպական կենտրոնական բանկը անորոշ ժամանակով անտեսեց հունական պարտքի նվազագույն շեմը և հունական բանկերին հունական պարտատոմսերի գրավադրմամբ կենտրոնական բանկի էժան ֆինանսավորման հնարավորություն տվեց՝ չնայած այդ պարտատոմսերի ցածր վարկանիշին: Այս քայլը նաև մեծացրեց հունական պարտատոմսերի գրավչությունը ներդրողների համար: Արդյունքում՝ հունական պարտատոմսերի դրույքաչափերը զգալիորեն նվազեցին:

Մարտին Հունաստանի պառլամենտը ընդունեց Տնտեսության պաշտպանության ակտը, որը պետք է խնայեր 4,8 միլիարդ եվրո՝ մի շարք միջոցների շնորհիվ, ներառյալ պետական հատվածի աշխատավարձերի նվազեցումները: Ապրիլին հունական կառավարությունը պահանջեց, որ ԵՄ և Արժույթի միջազգային հիմնադրամի օգնության փաթեթը ակտիվացվի: Հունաստանը դրամի կարիք ուներ մինչև մայիս՝ այլապես անհրաժեշտ կլիներ ժամկետը լրացող $11,3 միլիարդ պարտքը փոխարինել նոր պարտքով:

Մայիսին վարկային համաձայնություն ձեռք բերվեց Հունաստանի, եվրոգոտու մյուս երկրների և Արժույթի միջազգային հիմնադրամի միջև: Համաձայնությունը բաղկացած էր 45 միլիարդ եվրո անմիջական վարկից, որ պետք է տրվեր 2010 թ.: Ավելի ուշ ավելի շատ ֆինանսավորման հնարավորություն կա՝ համաձայնեցված գումարային 110 միլիարդ եվրոյի սահմաններում: Եվրոգոտու վարկերի տոկոսադրույքը 5 % է, ինչը համարվում է բավականին բարձր այսպիսի օգնության վարկի համար: Ի հակադրություն երկրում ծախսումների նվազեցման ու հարկերի ավելացման դեմ բարձրացած համընդհանուր դժգոհության ու բողոքի ալիքին՝ Հունաստանի կառավարությունը համաձայնեց իրականացնել խիստ հարկաբյուջետային լրացուցիչ միջոցներ, որոնք ներառում են՝

- Ամբողջությամբ վերացնել պետական հատվածի սահմանային 1000 եվրո կիսամյակային պարգևավճարները նրանց համար, ովքեր վաստակում են ամսական 3000 եվրոյից ավելի:
- 8 %-ով նվազեցնել պետական հատվածի նպաստները և 3 %-ով կրճատել պետական հատվածի կոմունալ ծառայությունների աշխատողների վարձատրությունները:
- 13-րդ և 14-րդ ամսվա կենսաթոշակային վճարումները սահմանափակել ամսական 800 եվրոյով և վերացնել դա այն թոշակառուների համար, ովքեր ստանում են ամսական 2500 եվրոյից ավելի:
- Վերադարձնել բարձր կենսաթոշակների նկատմամբ գործող հասույթ հարկը:
- Փոխել աշխատանքից ազատումն ու արտաժամյա աշխատանքի վարձատրումը կարգավորող օրենքները:
- Հաստատել արտակարգ հարկեր ընկերությունների շահույթների նկատմամբ:
- Բարձրացնել ԱԱՀ-ն մինչև 23 %, 11% և 5,5%:
- Ավելացնել 10 %-ով շքեղության հարկերը և ալկոհոլի, սիգարետների ու վառելիքի նկատմամբ հարկերը:
- Հավասարեցնել տղամարդկանց ու կանանց կենսաթոշակային տարիքների սահմանները:
- Կենսաթոշակի ընդհանուր տարիքը չփոխել, բայց ընդունել մեխանիզմներ դա կյանքի տևողության փոփոխություններին համապատասխանեցնելու համար:
- Ստեղծել ֆինանսական կայունության հիմնադրամ:

- Ավելացնել միջին կենսաթոշակի անցնելու տարիքը պետական հատվածի աշխատողների համար՝ 61-ից մինչև 65:

- Նվազեցնել պետական սեփականության ընկերությունների թիվը՝ 6000-ից մինչև 2000:

Հունաստանի ստացած վարկերի չափը պետք է ծածկի երկրի ֆինանսավորման կարիքները հաջորդ երեք տարիների համար, որոնք գնահատվել են 30 միլիարդ եվրո 2010 թ. մնացած մասի և 40 միլիարդ եվրո 2011 և 2012 թթ. յուրաքանչյուրի համար: Միևնույն ժամանակ հարկաբյուջետային կրճատումը զգալիորեն խիստ է: Դա կհասնի գումարային 30 միլիարդ եվրոյի և բաղկացած կլինի ՀՆԱ-ի 5%-ի չափով կրճատումից 2010 թ. ու հետագա 4 %-ով կրճատումից 2011 թ.:

Քանի որ Հունաստանը եվրոգոտու անդամ է, այն չի կարող միակողմանիորեն խթանել իր տնտեսությունը դրամավարկային քաղաքականությամբ՝ մասնավորապես ըստ էության նոր դրամ տպելով և գնելով առկա պարտքը՝ նոր դրամը համակարգի մեջ ներարկելով, ինչպես դա արեց ԱՄՆ-ը: Այս հանգամանքներում ճգնաժամը հիմնավորում է հանդիսանում Հունաստանին հարկաբյուջետային խիստ միջոցներ պարտադրելու համար՝ եվրոպական ֆինանսավորում հասկացնելու դիմաց: Այդ ֆինանսավորումը կարող է նվազեցնել Հունաստանի կառավարության վարկառության ծախսերը, սակայն խիստ հարկաբյուջետային քաղաքականության բացասական ազդեցությունը կարող է չեզոքացնել վարկառության ցածր ծախսերի դրական ազդեցությանը և ավելին՝ արդյունքում ստեղծվող սոցիալական ճեղքվածքը երկարաժամկետ պլանով կարող է զգալի բացասական ազդեցություն ունենալ ներդրումների ու աճի վրա:

Օգնության վարկի համաձայնության այլընտրանք կարող էր լինել Հունաստանի եվրոգոտուց դուրս գալը, որին պետք է հաջորդեր արժույթի արժեզրկումը: Եվրոգոտում մնալով և կառավարության բարձր դեֆիցիտի պատճառով ընդունելով պարտատոմսերի բարձր դրույքաչափերը՝ Հունաստանը արդյունքում կունենա բարձր տոկոսադրույքներ, որոնք կնվազեցնեն պահանջարկը, կավելացնեն խնայողությունները և կդանդաղեցնեն տնտեսությունը: Թերևս դա իր հերթին կհանգեցնի առևտրի հավելկշռի բարելավման և օտարերկրյա կապիտալից ավելի քիչ կախվածության:

**Հետևություններ**

Իհարկե, Հայաստանի ու ԵՄ անդամ երկրների իրողություններն ու աղյուսակում նշված չափանիշներով վստահելիության միջազգային վարկանիշները տարբեր են, այնուամենայնիվ ցուցանիշների համեմատությունից երևում է, որ Հայաստանի վիճակը ԵՄ խնդիրներ ունեցող երկրների համեմատությամբ ավելի բարվոք է: Սակայն, մյուս կողմից, Հայաստանի տնտեսական բարձր անկումը վկայում է տնտեսության խթանման համար պետական պարտքի ու դեֆիցիտի լծակների ժամանակին ու արդյունավետ կերպով չօգտագործելու մասին:

Թերևս նշված լծակների օգտագործման ծայրահեղության հասնող օրինակ է Հունաստանը, որը ԵՄ Աճի և կայունության պակտով սահմանված թույլատրելի մակարդակից շատ բարձր պետական պարտքի ու դեֆիցիտի պայմաններում ունեցել է նվազագույն տնտեսական անկում (տես աղյուսակը): Ոչ պատահական քննարկումներով կարելի է ասել, որ Հունաստանը իր ներքին կարևոր սոցիալ-տնտեսական հարցերը լուծել է չարաշահելու աստիճան օգտագործելով Եվրոպական միության հնարավորություններն ու կանոնները:

Առանց ծայրահեղության հասցնելու և միջազգային ու երկկողմ գործընկերության պարտավորությունների հետ համապատասխանություն պահպանելով՝ Հայաստանի համար որոշակիորեն կիրառելի է Հունաստանի օրինակը: Որոշակի մակարդակով սոցիալական խնդիրների լուծման հետ զուգահեռ տնտեսական առողջ կայունություն պահպանելու համար կարելի է մասամբ ողղեգրել Եվրոպայի փորձը՝ համադրելով տնտեսական ճգնաժամի հաղթահարման կիրառելի միջոցները և պետական պարտքի ճգնաժամից խուսափելու միջոցները:

# ԱՅՆ ՓՈԹՈՐԿԱԼԻՑ ՕՐԸ

## (Արցախ. 1988. փետրվարի 20)

Աբրահամյան Հ. Բ.



Պապիկ-Տատիկ, 1967 թ.

*(Սկիզբը՝ նախորդ համարում)*

Ղարաբաղի մետաքսի կոմբինատի կուսկոմիտեի քարտուղար, ժողովրդական պատգամավոր Ռոբերտ Քոչարյանը իր ելույթում շեշտեց, որ արտահերթ նստաշրջանում քննարկվող հարցը պահանջում է ճիշտ և արդարացի լուծում: Ակնհայտ է, որ տասնյակ տարիներ շարունակ հանրապետության ղեկավարության կողմից կոպտորեն խախտվում է մարզի տնտեսական և սոցիալ-քաղաքական հարցերի լուծումը: Նսեմացվել են ինքնավար մարզի տնտեսության, մշակույթի, լուսավորության զարգացման շահերը, մանավանդ ազգային հպարտության զգացմունքը: Այդ տարիներին ակտիվորեն իրագործվել է արցախահայության ոչ հիմնավորված տեղահանում՝ ի օգուտ թուրք-ազերիների թիվն ավելացնելուն: Այդ հակաազգային քաղաքականությունը արդարացիորեն վեր է բարձրացրել երկրամասի բնիկ հայության դժգոհությունը: Ռ. Քոչարյանը առաջարկում է հավանություն տալ և պաշտպանել երկրամասի հայ բնակչության պահանջին՝ մարզը վերամիավորել Հայաստանի հետ: Դրա համար անհրաժեշտ է անհապաղ հրավիրել մարզային խորհրդի արտահերթ նստաշրջան և այդ մասին ընդունել որոշում[18]:

2718-րդ ավտոշարասյան պետ, ժողովրդական պատգամավոր Մաքսիմ Միրզոյանը իր ելույթում շեշտեց, որ թե մարզը և թե Ստեփանակերտը խիստ հուզված են: Դա մի քանի օրվա գործ չէ, դա կուտակվել է տասնամյակներում: Դեռևս հիսունական թվական-

18. ԼՂՀ ՊԱ, Ֆ. 135, ց. 2, գ. 186, թ. 12:

ների վերջից մարզկոմն արգելել է Հայաստանից պատվիրակությունների այցելությունները Լեռնային Ղարաբաղ: Ինչպե՞ս հասկանալ, երբ մարզային թանգարանի տնօրենը աշխատանքից ազատվել է նրա համար, որ թանգարանի արխիվում պահվել են Սարգիս Աբրահամյանի և Բագրատ Ուլուբաբյանի գրքերը: Ինչո՞ւ են մեր տպարանից հանվել հայկական տառերը, չէ՞ որ այդ տառերն են մեզ հասցրել հայ դասականների, հայ հեղինակների, հունական, հռոմեական, արաբական և այլ գիտնականների ստեղծագործությունները: Մեծ հայրենականի տարիներին յուրաքանչյուր երեք արցախցուց մեկը մնացել է պատերազմի դաշտում, այդ այն դեպքում, երբ Ղարաբաղում ռազմական գործողություններ չեն եղել: Մի՞թե պատահական էր, երբ Բաքվի 26 կոմիսարներից 8-ը եղել է հայ: Զարմանում եմ. ինչո՞ւ են թաքցնում մեր պատմությունը, խեղաթյուրում: Եվ դա գիտակցաբար կատարում են հանրապետության գիտնականներ Ս. Ամուրբեյլին, Դ. Ախունդովը, Զ. Բունիաթովը, Ֆ. Մամեդովան և ուրիշներ: Սակայն ժողովրդին չես կարող խաբել, մեր համերաշխությունը անշեղ է[19]:

Ստեփանակերտի կոնդենսատորների գործարանի բանվորուհի, ժողովրդական պատգամավոր Իրինա Գևորգյանը շեշտեց, որ հայ ժողովուրդը հնագույն ժամանակներից ունեցել է զարգացած մշակույթ: Այսօրվա հայ ժողովրդի ձգտումը բխում է ժողովրդավարության և հրապարակայնության պահանջներից: Եվ դա խորթ է թուրք-ազերիների համար: Մենք արդարացիորեն պահանջում և պայքարում ենք լինել մայր ժողովրդի հետ: Ես մայր եմ, իմ ցանկությունն է զավակներս չմոռանան մայրենի լեզուն, հնարավորություն ունենան դիտել հայկական հեռուստացույց, լսել հայերեն ռադիոհաղորդումներ, ուսումնասիրել հայ ժողովրդի պատմությունը, տեր կանգնեն մեր պատմական գերեզմաններին, պահպանեն մեր երկրամասի ճարտարապետական հուշարձանները: Ես պահանջում եմ Ղարաբաղը վերամիավորել մայր Հայաստանի հետ[20]:

«Սովետական Ղարաբաղ» թերթի խմբագրությունից, ժողովրդական պատգամավոր Արտաշես Գասպարյանը կատարելով թիվ 56 ընտրական օկրուգի իր ընտրողների հանձնարարությունը, մտցնում է հետևյալ առաջարկությունը՝ «Խնդրել քաղաքային սովետի նըստաշրջանին ԼՂԻՄ-ում անցկացնել հանրաքվե և նրա արդյունքների հիման վրա քննարկել ԼՂԻՄ-ը Հայկական ՍՍՀ-ի հետ միավորելու հարցը»[21]:

Ստեփանակերտ քաղաքի թիվ 10 միջնակարգ դպրոցի տնօրեն, ժողպատգամավոր Ա. Պողոսյանը նշեց, որ վերջին 20 տարում մարզի 32 բնակավայրերում փակվել են հայկական դպրոցները, 30 դպրոց էլ գտնվում է փակման եզրին: Վերջին 15 տարում, 1973 թվականից հետո, մարզի հայկական դպրոցներում աշակերտների թիվը կրճատվել է 39 տոկոսով: Զարմանալի է նաև այն, որ Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտի պատմության ֆակուլտետում հայ ժողովրդի պատմություն չի դասավանդվում: Կարելի է նման փաստեր շատ բերել: Պատգամավորն արտահայտելով իր ընտրողների ցանկությունը, առաջարկում է ԼՂԻՄ-ը վերամիավորել Հայկական ՍՍՀ-ի հետ[22]:

Կուսակցության քաղկոմի քարտուղար Համլիկ Մամիկոնյանը իր ելույթում նշեց, որ մեր հասարակության կյանքում իշխող լճացման պայմանները չեն կարող չանդրադառնալ ազգային հարաբերությունների վրա: Այդ պայթյունավտանգ վիճակը կուտակվել է տասնամյակներում: Այս օրերին, երբ վրդովված է ամբողջ մարզը, համոզված ենք, որ վերադաս իշխանությունները կլսեն մեր ժողովրդի պահանջը և կընդունեն արդարացի որոշում: Այս օրերին ես բազմիցս եմ հանդիպել հանրապետության կոմկուսի Կենտկոմի քարտուղարներ Կոնովալովի, Մեհտիևի, Օրուջևի, բաժնի վարիչ Ասադովի և այլոց հետ: Մենք ներկայացրել ենք մարզի սոցիալ-տնտեսական և հոգևոր կյանքի զարգացման վերաբերյալ բավականին փաստեր ու հիմնավոր այլ պատճառներ: Ես համաձայն չեմ հանրապետության և մարզային կուսակցության ղեկավարության կարծիքի հետ, թե իբրև այս ամենը «ծայրահեղական» և «խուլիգանական» խմբերի ձեռքի գործն է: Սա մեր ամբողջ ժողովրդի ցանկությունն է, որը պետք է կատարվի: Այս պահին Ստեփանակերտի հրապարակում և փողոցներում կուտակված մարդիկ սպասում են մեր ճիշտ և արդարացի որոշմանը[23]:

Ապա Ստեփանակերտի քաղխորհրդի 20-րդ գումարման չորրորդ արտահերթ նստաշրջանը որոշում է.

1. Կոչ անել քաղխորհրդի բոլոր աշխատողներին, հիմնարկ-ձեռնարկությունների ղեկավարներին տեղերում ապահովել ռիթմիկ աշխատանքը, ամրապնդել արտադրական ու հասարակական աշխատանքային կարգապահությունը և կատարել արտադրական պլանները:

2. Արտահայտելով աշխատավորների կամքը, քաղխորհրդի նստաշրջանը պաշտպանում է Լեռնային

19. Նույնը, թ. 14-15:
20. Նույնը, թ. 16-17:
21. Նույնը, թ. 18:
22. Նույնը, թ. 19-20:
23. Նույնը, թ. 22-23:

Ղարաբաղի ինքնավար մարզը Ադրբեջանական ՍՍՀ կազմից Հայկական ՍՍՀ կազմ հանձնելու վերաբերյալ նրանց պահանջը: Նստաշրջանը գտնում է, որ ԼՂԻՄ-ը Հայաստանին վերամիավորելը բխում է մարզի հայ բնակչության արմատական շահերից, նրա կուլտուրական և հոգևոր պահանջներից:

3. Խնդրել ԼՂԻՄ մարզգործկոմին ժողովրդական պատգամավորների մարզային խորհրդի նստաշրջանում քննարկել այդ հարցը:

4. Խնդրել Ադրբեջանական ՍՍՀ Գերագույն խորհրդի նախագահությունից, Հայկական ՍՍՀ-ից և ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նստաշրջանից քննարկել և դրականորեն լուծել Լեռնային Ղարաբաղը Ադրբեջանական ՍՍՀ-ի կազմից Հայկական ՍՍՀ-ի կազմ հանձնելու հարցը[24]:

Այդ որոշումն անմիջապես հանձնվում է մարզխորհրդի գործկոմ:

Հրապարակում հավաքված ցուցարարներն անընդհատ պահանջում էին «սեսիա»: Նախատեսված էր մարզխորհրդի արտահերթ նստաշրջանը սկսել ժամը 16-ին, սակայն քվորումը չապահովվելու պատճառով այն ուշացվեց: Ասենք, որ դեռևս նախորդ օրերին ստեղծվել էր արտահերթ նստաշրջան հրավիրելու համար նախաձեռնող խումբ, որը գլխավորում էր շինանյութերի արտադրության ձեռնարկության տնօրեն Արկադի Մանուչարովը: Նա կանգնած լինելով շարժման գլուխ, առաջիններից մեկն էր, որը պահանջում էր հրավիրել մարզխորհրդի արտահերթ նստաշրջան: Այդ նախաձեռնող խմբի մեջ էին Վարդան Հակոբյանը, Արմեն Ծատուրյանը, Ռազմիկ Պետրոսյանը, Գուրգեն Գաբրիելյանը, Հրաչիկ Բեգլարյանը, Մաքսիմ Հովհաննիսյանը, Ռոլես Աղաջանյանը, Բենիկ Օվչյանը, Ժաննա Գալստյանը, Էդվարդ Ղուկասյանը, Համլետ Գրիգորյանը, Էռնեստ Հայրապետյանը, Պավել Նաջարյանը, Վալերի Մառությանը, Արմեն Հակոբյանը, Էդվարդ Ղազարովը, Ռուդիկ Աքայանը և ուրիշներ: Մարզխորհրդի արտահերթ նստաշրջանը օրինավոր անցկացնելու համար իրավական խորհրդատու է հրավիրվում Կարեն Բաբուրյանը: Այնուամենայնիվ՝ երբ պատգամավորի բացակայության պատճառով քվորումը չէր ապահովվում: Նախաձեռնող խմբից Սերժիկ Ասատրյանը մեկնում է Աշան և այնտեղից Ստեփանակերտ բերում մի ժողպատգամավոր կնոջ, որը հիվանդ պառկած էր անկողնում: Պատգամավոր բերվեց նաև Քարինտակից: Ադրբեջանի կոմկուսի Կենտկոմի առաջին քարտուղար Ք. Բաղիրովը ցանկացավ հանդիպել Վարդան Հակոբյանի հետ[25], սակայն վերջինիս պատասխանը մերժողական էր[26]: Արդեն երեկոյան ժամը 20-ն անց 20 րոպեին, երբ դահլիճում ներկա էին 111 պատգամավոր, որոշվում է արտահերթ նստաշրջանը սկսել: «Այդ ժամանակ,- հետագայում պատմել է արտահերթ նստաշրջանի նախագահ Վիգեն Հայրապետյանը,- Լենինի անվան հրապարակը մարդկանցով լեփ-լեցուն էր: Նստաշրջան՝ վանկարկում էր ժողովուրդը: Ստեփանակերտ հասած պատգամավորներին մարդիկ ընդունում էին որպես հերոսների: Մարդկային ծովը նրանց համար ճանապարհ էր բացում դեպի մարզխորհրդի շենքը: Ամեն անգամ, երբ պատգամավորների թիվն ավելանում էր թեկուզ մեկով, հավաքվածներն անսահման ուրախանում էին: Ճանապարհները փակ էին, իշխանություններն ամենուրեք պատգամավորներ էին «որսում»: Բայց նրանք, այնուամենայնիվ, եկան շրջանցելով պահակակետերը, անտառներով ու լեռներով: Ինչ-որ մեկի խելքը կտրեց նրանց կերակրել: Ոտքի վրա նրանք մի կտոր հաց էին ուտում և ներս մտնում:

Կևորկովը երեք անգամ զանգահարում և փորձում է իր մոտ կանչել կոմունիստ պատգամավորներին, սակայն ոչ մեկը չի գնում: Իր շքախմբով մարզխորհրդի նիստերի դահլիճ եկավ Բաղիրովը: Նա «խոնարհ ու բարի» խոստումներ է տալիս, «կոկորդիլոսյան» արցունքներ թափում: Հետո ելույթ է ունենում Մոսկվայի ներկայացուցիչը: Այնուհետև ամբիոնին է մոտենում բանաստեղծ Վարդան Հակոբյանը և ասում. «Դուք խանգարում եք մեզ: Մենք հիմա սկսում ենք նստաշրջանի աշխատանքը: Կարող եք նստել, կարող եք գնալ՝ ինքներդ որոշեք...»[27]:

Ադրկոմկուսի Կենտկոմի առաջին քարտուղար Ք. Բաղիրովի դահլիճից մերժվելուց հետո նա իր շքախմբով հեռանում է: Անհամբեր ժողովրդական պատգամավորները շտապեցին չուշացնել և նստաշրջանը սկսել: Վարդան Հակոբյանի առաջարկությամբ նստաշրջանը ղեկավարելու համար նախագահ է ընտրվում մարզխորհրդի պատգամավոր, մարզժողկրթբաժնի վարիչ Վիգեն Հայրապետյանը[28]:

---

24. Նույնը, թ. 24-26:
25. Արտահերթ նստաշրջան եկող պատգամավորների գրանցումը կատարում էին Վարդան Հակոբյանը և Արմեն Ծատուրյանը:
26. Աբրահամյան Հրանտ, նշվ. աշխ., էջ 45:
27. «Խորհրդային Ղարաբաղ», 20.02.1991:
28. Մարզային միլիցիայի աշխատող Վալերի Քոչարյանը բերում է մի բարձրախոս, որով հրապարակում հավաքված տասնյակ հազարավոր մարդկանց տեղյակ էր պահվում նստաշրջանի ընթացքի մասին: Միևնույն ժամանակ գործկոմի քարտուղար Ռիմա Վասիլևնայի խնդրանքով դահլիճ է բերվում ձայնագրիչ և գրանցվում նստաշրջանի ամբողջ ընթացքը: Հետո այդ ձայնագրության և մյուս նյութերի հիման վրա կազմվել է նստաշրջանի արձանագրությունը: Սակայն ձայնագրված ժապավենը անհետացել է:

ԼՂ ինքնավար մարզի ժողովրդական պատգամավորների 20-րդ գումարման խորհրդի 4-րդ արտահերթ նստաշրջանը բացում է Մարտունու թիվ 109 ընտրական օկրուգից պատգամավոր Սուրեն Դանիելյանը[29]: Նա պատգամավորներին տեղյակ պահեց արտահերթ նստաշրջան պահանջող արդեն 87-ի հասած ժողպատգամավորների իրավասության վերաբերյալ մանդատային հանձնաժողովի ընդունած որոշման մասին և առաջարկեց նստաշրջանը համարել օրինավոր ու սկսել աշխատանքները: Նստաշրջանը մեկնաբանելու համար հրավիրվել էին լրատվության ներկայացուցիչներ: Ժողպատգամավոր Անահիտ Ներսիսյանի առաջարկությամբ նստաշրջանի քարտուղար է ընտրվում ժողպատգամավոր Նիդա Մարտիրոսյանը: Նստաշրջանը քննարկում է «Լեռնային Ղարաբաղի Ինքնավար մարզի մարզային խորհրդի միջնորդությունը մարզը Ադրբեջանական ՍՍՀ-ի կազմից հանելու և Հայկական ՍՍՀ-ի կազմի մեջ մտցնելու մասին» հարցը:

Առաջինը ելույթ է ունենում ժողպատգամավոր Վարդան Հակոբյանը: Նա մասամբ նշում է, որ մարզը թե տնտեսապես և թե կուլտուրապես կտրված է ազգային արմատներից: Տարիների փորձը ցույց է տալիս, որ Լեռնային Ղարաբաղի Ադրբեջանական ՍՍՀ կազմում գտնվելը եղել է սխալ, չի համապատասխանել ազգերի ու ժողովուրդների զարգացման լենինյան դրույթներին: Անցյալի տխրահռչակ այդ սխալը պետք է ուղղվի: Այո, այդ հարցը բարձրացվել է շատ անգամ: Հիմա վերակառուցման շրջան է, այն պետք է լուծվի: Ինձ ընտրողները պատվիրան են տվել պաշտպանել մարզը Հայաստանի հետ վերամիավորելու պահանջը: Անկասկած, պատմական մեր Արցախը պետք է լինի մայր Հայաստանի հետ[30]:

Հետո ելույթ է ունենում կոնդենսատորների գործարանի բանվորուհի, ժողպատգամավոր Արմիդա Գաբրիելյանը: Նա նշում է, որ արժանապատվության կոխկրտում է, երբ հայ մանուկը անհաղորդ է հայ երգին, հայ մշակույթին: Մեզնից ո՞վ է Կոմիտաս լսում, ո՞վ է քաջածանոթ մեր պատմությանը: Մեր երեխաները դպրոցում չորս լեզու են սովորում, սակայն չգիտեն հայ ժողովրդի պատմությունը: Պատգամավորը կոչ է անում՝ ոչ մի նահանջ: Մեր պահանջը հոգևոր սնունդ է, մենք ուզում ենք հայ մնալ, մենք պայքարում ենք մեր ազգի ապագայի համար: Մեր սկսածը արդար, ազնիվ գործ է, օրինական պահանջ[31]:

Ղարմետաքսկոմբինատի ջուլհակուհի, ժողպատգամավոր Սուրայա Գրիգորյանը իր ելույթում ընդգծեց, որ վերջերս Ղարաբաղում տեղի ունեցող ելույթներն ու ցույցերը համոզում են, թե որքան բուռն է ղարաբաղցիների ցանկությունը մայր Հայաստանի հետ վերամիավորվելու համար: Վերջապես՝ լցվել է մեր ժողովրդի համբերության բաժակը: Ս. Գրիգորյանը Ղարմետաքսկոմբինատի երեքհազարանոց կոլեկտիվի անունից կոչ է անում պաշտպանել ղարաբաղցիների արդար պահանջը և վերամիավորվել մայր Հայաստանի հետ: Անհրաժեշտ է Հայաստանից Լեռնային Ղարաբաղի բռնազատման սխալն ուղղել[32]:

Ստեփանակերտի կոշիկի ֆաբրիկայի բանվորուհի, ժողպատգամավոր Սոբոլևա Տասյանան իր ելութում նշեց, որ բարձրացված հարցը երբեք էլ ազգային հարց չէ, այլ ժողովրդի բնականոն ցանկություն, որի նպատակն է պաշտպանել սեփական շահերը: Բոլորին կոչ եմ անում քվեարկել Լեռնային Ղարաբաղը Հայաստանի հետ վերամիավորելու օգտին[33]:

Մարտունու շրջանի Գիշի գյուղի Կարլ Մարքսի անվան կոլտնտեսության զոոտեխնիկ, ժողպատգամավոր Էդուարդ Աղաբեկյանը շեշտեց, որ այս պայքարում արցախահայությունը դրսևորում է բարձր կարգապահություն: Մեր կոլտնտեսության անունից պահանջում եմ Ղարաբաղը վերամիավորել Հայաստանի հետ[34]:

Կաթնամթերման կոմբինատի տնօրեն, ժողպատգամավոր Արմո Ծատուրյանը նշեց, որ արցախահայու-

29. Այստեղ անհրաժեշտ է տալ հետևյալ մեկնաբանությունը: ԼՂՀ պետական արխիվի ֆոնդ 1-ում պահվում է ԼՂԻՄ մարզային խորհրդի նստաշրջանների նյութերը: Այդ ֆոնդում կան ԼՂԻՄ ժողովրդական պատգամավորների 20-րդ գումարման խորհրդի 1-3 և 5-11-րդ նստաշրջանների թե արձանագրությունները և թե մյուս նյութերը, սակայն 4-րդ արտահերթ նստաշրջանի արձանագրությունը և նյութերը չկան, որովհետև դրանք արխիվ չեն հանձնվել: Ի վերջո նստաշրջանի նյութերը գտնվել են և հապշտապ հրատարակվել Արցախի պետական համալսարանի գիտխորհրդի որոշմամբ, որում թույլատրել են մի շարք բացթողումներ: Օրինակ՝
ա) Փաստաթղթերի ժողովածուի տիտղոսաթերթի վրա գրված է 22-րդ գումարման խորհրդի 4-րդ արտահերթ նստաշրջան, մինչդեռ պետք է լիներ 20-րդ գումարման:
բ) Ճիշտ կլիներ պարզաբանվեր, թե ինչու են նստաշրջանի արձանագրությունը և նյութերը հայտնվել ԼՂՀ ազգային խորհրդի նախկին քարտուղարի անձնական նյութերի մեջ:
գ) Նյութերը նախ պետք է հանձնվեին հանրապետական արխիվ, ֆոնդագրվեին, նոր միայն հրատարակվեին: Դա կլիներ գիտական բարեխղճություն:
Հրատարակված այդ փաստաթղթերում կան նաև այլ բնույթի բացթողումներ: Օրինակ. միայն Վարդան Հակոբյանի ելույթում թույլատրվել է 7 կոպիտ սխալ (Պատմական նստաշրջան..., Փաստաթղթերի և նյութերի ժողովածու: Ստեփանակերտ, 2007, էջ 37):
30. Պատմական նստաշրջան..., էջ 36:
31. Նույնը, էջ 38-40:
32. Նույնը, էջ 42:
33. Նույնը, էջ 44:
34. Նույնը, էջ 56-58:

թյունը մեզ ուղեկցելով այս դահլիճ, լիովին համոզված է, որ արդարացիորեն կվճռվի Լեռնային Ղարաբաղը Հայաստանի հետ վերամիավորելու հարցը: Ակնհայտ է, որ 1921 թ. թույլատրվել է կոպիտ սխալ: Այսօր արցախահայությունը չի ցավում այն բոլոր դժվարությունների համար, ինչ որ կրում է, այլ արդարացիորեն պահանջում է վերամիավորվել Հայրենիքի՝ մայր Հայաստանի հետ: Դա հնարավորություն կտա պահպանել սեփական լեզուն, սեփական մշակույթը, ավանդույթները, հոգեբանությունը: Առանց դրան կոչնչանա բազմաչարչար ղարաբաղցի հայը: Ահա թե ինչու է նա պայքարում Ադրբեջանից ազատագրվելու համար: Տեսեք. մեր կոմբինատի կնիքից բացակայում է հայերեն գրառումը, մինչդեռ մեծատառերով գրված է ադրբեջաներեն, այդ այն դեպքում, երբ պատվերում դա չի եղել: Արտահայտելով ինձ ընտրողների ցանկությունը, բոլորին կոչ եմ անում քվեարկել Լեռնային Ղարաբաղը Հայաստանի հետ վերամիավորելու օգտին: Դա կլինի արդարացի[35]:

Ստեփանակերտի սննդի կոմբինատի բանվորուհի, ժողպատգամավոր Նահրա Ավանեսյանը շեշտեց, որ վերակառուցումը, ժողովրդավարությունը վերջապես հնարավորություն տվեցին արտահայտել մեր սրտի խոսքը և դարերից եկող մեր իղձերը: Սա ազգային արժանապատվության հարց է: Մենք զրկված ենք մեր մշակույթից: Միացնում ենք հեռուստացույցը, մայրենի լեզվով ոչինչ չենք լսում ու տեսնում: Մենք ազգությամբ հայ ենք և ցանկանում ենք լինել հայկական հանրապետության կազմի մեջ, մանավանդ, որ Ղարաբաղը՝ պատմական Արցախը դարեր շարունակ եղել է Հայաստանի հետ: Մեր խնդիրը միանգամայն արդարացի է: Պահանջում ենք հարցին մոտենալ օբյեկտիվորեն[36]:

Պատերազմի և աշխատանքի վետերաններից ժողպատգամավոր Մամիկոն Խաչատուրովը մասամբ նշեց, որ արցախցիներն աչքի են ընկել թե ցարական և թե խորհրդային բանակներում: Մեծ հայրենականում Արցախը տվել է 32 գեներալ, 22,5 հազար զոհ, 20 հազար պարգևատրվել են տարբեր մեդալներով: Պատերազմի տարիներին արցախցիները նվիրել են 7 կգ ոսկի և ոսկյա իրեր, 750 կգ արծաթ և արծաթյա իրեր, մոտ 80 հազար տաք հագուստեղեն, 48 հազար ծանրոց: Եվ այսօր մեզ անվանում են ազգայնամոլներ: Արցախցիները կռվել են բոլոր ռազմաճակատներում: Այսօր անամոթաբար հարցնում են. ինչո՞ւ եք ինստիտուտն ավարտել Երևանում: Վերջ: Խնդրում ենք որոշում ընդունել և երկրամասը միավորել Հայաստանին[37]:

Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզը Հայաստանի հետ վերամիավորելու առաջարկությունը պաշտպանում են նստաշրջանում ելույթ ունեցած 45 ժողպատգամավորները:

Որոշման նախագիծը ընդունվում է միաձայն և բարձրախոսով հայտնվում հրապարակում անհամբեր սպասող ցուցարարներին:

ԼՂԻՄ ժողովրդական պատգամավորների 20-րդ գումարման խորհրդի չորրորդ արտահերթ նստաշրջանը ընդունել է հետևյալ պատմական որոշումը, որը ցնցեց ամբողջ աշխարհը:

«Ընդառաջելով ԼՂԻՄ-ի աշխատողների ցանկություններին՝ խնդրել Ադրբեջանական ՍՍՀ Գերագույն սովետին՝ խորն ըմբռնման զգացում դրսևորել Լեռնային Ղարաբաղի հայ բնակչության իղձերին և լուծել ԼՂԻՄ-ը Ադրբեջանական ՍՍՀ-ի կազմից Հայկական ՍՍՀ-ի կազմ հանձնելու հարցը, միաժամանակ միջնորդել ՍՍՀՄ Գերագույն խորհրդի առջև՝ ԼՂԻՄ-ը Ադրբեջանական ՍՍՀ-ի կազմից Հայկական ՍՍՀ-ի կազմ անցնելու հարցի դրական լուծումը»[38]:

Հրապարակում հավաքված տասնյակ հազարավոր ցուցարարները ցնծությամբ են ընդունում արտահերթ նստաշրջանի ընդունած այդ որոշումը: Սակայն պարզվեց, որ մարզխորհրդի գործկոմի նախագահ Վ. Օսիպովը վերցրել էր մարզգործկոմի կնիքը և անհետացել: Ստիպված էին ընդունված որոշումը վավերացնել մարզխորհրդի գործկոմի շտամպով և մարզխորհրդի գործկոմի նախագահության անդամների ստորագրություններով: Արձանագրությունը հաստատում է մարզգործկոմի քարտուղար Ռիմա Խաչիյանը:




35. Նույնը, էջ 64-66:
36. Նույնը, էջ 70:
37. Նույնը, էջ 80-82:
38. «Սովետական Ղարաբաղ», 21.02.1988:

# Սևրաֆոբիայի դրսևորումները Թուրքիայի հասարակական-գիտական քննարկումներում

**Լևոն Հովսեփյան**
Թուրքագետ, փորձագետ

Թուրքիայի հասարակական-քաղաքական գործընթացների ուսումնասիրության տեսանկյունից լուրջ կարևորություն են ներկայացնում այն խնդիրները, որոնք այս կամ այն կերպ առնչվում են պետության զարգացման ու հեռանկարների շրջանակում ընթացող քննարկումներին, այդ երկրում առկա կարծրատիպերին: Վերջին տարիներին Թուրքիայի հասարակական-քաղաքական, գիտական ու վերլուծական տարբեր շրջանակներում ընթանում են Թուրքիայի առջև կանգնած մարտահրավերների, պետության հետագա տեսլականի մասին քննարկումներ, որոնց շրջանակում դրսևորվում են թուրքական հասարակության ու քաղաքական որոշ շրջանակների ֆոբիատիկ ընկալումները: Դրանք կապված են հիմնականում Թուրքիայի տեսլականի ու արտաքին միջավայրի նկատմամբ հասարակական-քաղաքական անվստահության ու կասկածամտության երևույթի հետ: Այս համատեքստում ակտիվացել են տարբեր ոլորտներում քննարկումները Թուրքիայի հնարավոր մասնատման, պետության քայքայման ու արտաքին ուժերի կողմից նման նախաձեռնությունների առկայության մասին: Այդ երևույթը կարելի է անվանել «սևրաֆոբիա» կամ «մասնատման ախտանիշ»: Այսպիսի քննարկումները թուրքական պետական ու հասարակական մակարդակներում առկա բազում խնդիրների համալիր ընկալման արդյունք են, որոնք իրենց հերթին ծնում են մտավախությունների ու ֆոբիաների վրա հիմնված ենթադրություններ:

Իսկ ինչով են պայմանավորված նման ենթադրություններն ու քննարկումները ներթուրքական միջավայրում: Նախ, երկրի ներսում ընթացող հասարակական-քաղաքական զարգացումներն ու առկա հիմնախնդիրները, ինչպես, օրինակ, քրդական հարցը, աշխարհիկ-իսլամ հակադրությունը, ինքնության ճգնաժամը, Թուրքիայի զարգացման հեռանկարը, նոր ընկալումների ու մեկնաբանությունների առիթ են հանդիսացել: Բացի այդ, Թուրքիայի համար արտաքին քաղաքականության ոլորտում նկատվող ոչ նպաստավոր տեղաշարժերը այս կամ այն կերպ ձևավորում են հասարակական տրամադրություն, որի շրջանակում էլ ի հայտ են գալիս այլատյացության կամ ուղղակի արտաքին աշխարհի նկատմամբ կասկածամտության դրսևորումներ:

Թուրքական պետության մասնատման կամ հնարավոր տրոհման մասին քննարկումներն ունեն երկու կողմ՝ ներքին և արտաքին:

Առաջինը վերաբերում է

ներքին պայմաններից բխող, ճգնաժամային զարգացումներով պայմանավորված այնպիսի իրադարձություններից, ինչպիսիք են քրդական հիմնախնդիրը, աշխարհիկ-իսլամ հակադրությունը, ինքնության ճգնաժամը: Երկրորդ կողմն առնչվում է արտաքին ուժերին, որոնց քաղաքականությունը Թուրքիայի նկատմամբ, որը չի համընկնում թուրքական շահերին, ընկալվում է որպես դավադրություն պետության նկատմամբ:

Նման ընկալումները կրում են ինչպես քրդական խնդրի և քրդական պետության հնարավոր ստեղծման, այնպես էլ Հայկական հարցի ու Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման ազդեցությունը: Կարող ենք ասել, որ մասնատման ախտանիշը կամ սևրաֆոբիան ունեն հիմնականում քրդական ու հայկական ուղղվածություն: Չնայած այդ երևույթը շատ դեպքերում առաջին հերթին ասոցիացվում է այս խնդիրների հետ, սակայն այն ունի ավելի խորքային բնույթ, ինչը կապվում է արտաքին դերակատարների կողմից վարվող քաղաքականության հետ:

Նման ընկալումները ճիշտ պատկերացնելու համար կարևոր է անդրադառնալ Օսմանյան կայսրության քայքայման ու հանրապետական Թուրքիայի ստեղծման ժամանակահատվածում տեղի ունեցած իրադարձություններին, որոնք այս կամ այն կերպ ընկած են Թուրքիայի




անվտանգության շուրջ ժամանակակից քննարկումների առանցքում:

Հանրապետական Թուրքիայի հռչակումից հետո քաղաքական ղեկավարության մոտ սկզբնական շրջանում իշխում էր այսպես ասած «ինքնապահպանման բնազդը», որտեղ երկրի անվտանգությունն ամբողջացվում էր հիմնականում տարածքային ամբողջականության ու ինքնիշխանության պահպանման գերխնդրի շրջանակում: Եվ այդ ընկալումները ունեին իրենց օբյեկտիվ պատճառները, քանի որ Թուրքիայի Հանրապետությունը հիմնվեց Օսմանյան կայսրության քայքայման ու մասնատման և պատերազմների գնով կայսրությունից միայն փոքրասիական թերակղզին «փրկած» տարածքների վրա: Իսկ երկար ժամանակ Թուրքիայի քաղաքական մշակույթը կրում էր «մնացածը պահելու» գերխնդրի ազդեցությունը: Հետագայում ևս նման ընկալումները շարունակում էին լուրջ դեր խաղալ երկրի քաղաքական ու զինվորական իշխանական շրջանակների մոտ:

Ժամանակակից քննարկումների ու աշխարհընկալման վրա իրենց մեծ ազդեցությունն են պահպանում Թուրքիայի պատմական անցյալի այն իրադարձությունները, որոնք մինչև օրս իշխում են հասարակական-.քաղաքական շրջանակների աշխարհընկալման վրա: Խոսքը վերաբերում է առաջին հերթին 1916 թ. Անգլիայի ու Ֆրանսիայի կողմից Օսմանյան Թուրքիայի տարածքային մասնատման գաղտնի պայմանագրին՝ Սայքս-Պիկո և 1920 թ. օգոստոսի 10-ին ստորագրված Սևրի դաշնագրին:

Դեռևս Առաջին աշխարհամարտի տարիներին, երբ ակնհայտ էր դառնում Օսմանյան կայսրության փլուզումն ու տարածքային մասնատումը, երիտթուրքական պարագլուխները արդեն իսկ գիտակցում էին նման հանգուցալուծումը և ամեն կերպ փորձում էին ինչ-որ ձևով դիմագրավել դրան, ընդունել Օսմանյան կայսրության պահպանման այլընտրանքային ուղիներ:

«Քառյակ դաշինքի» կազմի մեջ Թուրքիայի մտնելը «Իթթիհաթ վե թերաքքի» երիտթուրքական կուսակցության անդամ Մեվլան Զադե Ռիֆաթը բացատրում է Անտանտի կողմից Օսմանյան Թուրքիան մասնատելու ծրագրի առկայությամբ: Ըստ Ռիֆաթի վկայությունների՝ պատերազմի նախօրեին երիտթուրքական կոմիտեի գաղտնի խորհրդակցություն-




Էրոլ Մանիսալը

ների ժամանակ առաջ էր քաշվում այն դրույթը, որ Անտանտի տերությունները արդեն իսկ ծրագրել են Օսմանյան Թուրքիայի մասնատումը և միակ դաշնակիցը կարող է լինել Գերմանիան:

Առաջին աշխարհամարտի տարիներին արդեն Անգլիան և Ֆրանսիան 1916 թ. գաղտնի համաձայնության էին եկել Օսմանյան Թուրքիայի մասնատման և ազդեցության գոտիների բաժանման վերաբերյալ: Սայքս-Պիկոյի գաղտնի համաձայնագրով Օսմանյան Թուրքիան զրկվում էր իր ասիական տարածքներից, որոնց նկատմամբ հաստատվում էին անգլիական ու ֆրանսիական իրավասությունները: Կովկասյան ճակատում իր ունեցած ռազմական առաջխաղացումից հետո Անգլիան և Ֆրանսիան իրենց ծրագիրը ներկայացրեցին Ռուսաստանին, որը նույնպես մասնակցելու էր բաժանմանը: Ի դեպ, Սայքս-Պիկոյի համաձայնագրի վրա առկա է ռուսական կայսր Նիկոլայ 2-րդի նշագրությունը[1]:

Ինչ վերաբերում է Սևրի դաշնագրին, որն այդպես էլ կյանքի չկոչվեց, այսօր Թուրքիայում ընկալվում է որպես «ստվերված մի գործիք», որը ցանկացած պահի կարող է երևան հանվել արտաքին ուժերի կողմից: Նման ընկալումներն առկա են ինչպես հասարակական, այնպես էլ քաղաքական, գիտական ու զինվորական որոշ շրջանակների մոտ: Ստամբուլի համալսարանի տնտեսագիտության ֆակուլտետի դասախոս, պրոֆեսոր Էրոլ Մանիսալըի 2005 թ. հրապարակումներից մեկի համաձայն՝ ԱՄՆ-ը և ԵՄ-ն ջանքեր են գործադրում Թուրքիայի տարածքային ամբողջականությունը խախտելու, դաշնային տիպի պետություն հիմնելու, թուրքական հանրապետության հիմնադրման ողջ փիլիսոփայությունն ու արժեքները քայքայելու ուղղությամբ, որին էլ ծառայում են Հայկական հարցը և քրդական խնդիրը: Արևմուտքը աջակցում է Թուրքիայում քրդական ահաբեկչությանը, որը նպատակ ունի վերանայել Լոզանի պայմանագիրը՝ Թուրքիայից անջատել Հարավարևելյան Անատոլիան[2]:

Մեկ այլ հրապարակման մեջ Մանիսալըն, հիշեցնելով 20-րդ դարասկզբին Եվրոպայի կողմից նախաձեռնված Սևրի պայմանագրով Թուրքիայի մասնատման քարտեզի մասին, նկատում է, որ եթե նախկինում Եվրոպան զենքի ուժով էր փորձում դա անել, այժմ փոխվել են իրականացման սկզբունքները, և Թուրքիան աստիճանաբար հայտն-




1 Տիգրան Սահակյան, Ցավալի պայմանագրեր, Եր., 2007, էջ 8-35:
2 Erol Manisali, Neden Lozan?, 25.07.2005, http://www.acikistihbarat.com/Haberler.asp?haber=3438. Նշենք, որ է. Մանիսալըն 2009 թ. ապրիլին ձերբակալվել է «Էրգենեկոն» ահաբեկչական խմբավորման գործով: Erol Manisali tutuklandi, Cumhuriyet, 17 Nisan 2009

BURO LIBRARY



Սևրի պայմանագիրը ստորագրող թուրքական կողմը (ձախից՝ Ռիզա Թեֆիկ /բանաստեղծ/, Դամաթ Ֆերիտ փաշա /Մեծ վեզիր/, Հադի փաշա /կրթության նախարար/, Բազդատլը Ռեշիդ Հալիս /Օսմ. Դեսպան Շվեցարիայում/):

վում է «գաղտնի գրավման տակ»[3]: Մեկ այլ թուրք պրոֆեսոր՝ Չեթին Յեթքինը, իր «Սևրը նորից կյանք է առնում» վերնագրված հոդվածում նշում է, որ Սևրի պայմանագրի իրողություն դառնալուց հետո Օսմանյան տարածքում ստեղծվելու էին քրդական ու հայկական պետություններ, իսկ Իզմիրն իր շրջակայքով տրվելու էր Հունաստանին: «Իմպերիալիստները Սևրի դրույթները կրկին կյանքի կոչելու համար սպասում են հարմար պահի և ձեռքներից եկածները անելու են, քանի որ նրանք չեն մոռացել Թուրքիան մաս-մաս անելու պլանների մասին: Ավելի պարզ ասած՝ Սևրի դռները մեկ անգամ ևս բացված են»[4]:

Նշենք, որ Թուրքիայում որոշ առումներով քրդական հարցը ինչ-որ ձևով կապում են Հայկական հարցի հետ՝ փորձելով նույնիսկ քրդական խնդրի մեջ գտնել հայկական հետք: Պատահական չէ, որ տարբեր տարիներին տարբեր մակարդակներով մեղադրանքներ են հնչեցվել այն հիմնավորմամբ, որ «քրդական անջատողականություն ու ահաբեկչությունը աջակցություն են ստանում Հայաստանի ու հայերի կողմից»: Նման հայտարարություններ են արվել նաև թուրք քաղաքական գործիչների կողմից, որոնք մեղադրել են արևմտյան երկրներին քրդական ահաբեկչությանն աջակցելու համար:

Մասնավորապես, 2008 թ. փետրվարին ունեցած իր ելույթներից մեկում Սաադեթ կուսակցության առաջնորդ Ռ. Քութանը, մեկնաբանելով ՔԲԿ-ի վերելքն ու նրանց ձեռքում հայտնվող սպառազինությունը, նշել է, որ ԱՄՆ-ը, ԵՄ-ն և Իսրայելը տարիներ շարունակ աջակցել են քրդական ահաբեկչական այդ կազմակերպությանը[5]:

2006 թ. Աթաթյուրքի 125-ամյակին նվիրված քննարկման ժամանակ թուրք պրոֆեսոր Ահմեթ Սալթըքը, խոսելով Թուրքիայի առջև ծառացած խնդիրների մասին, անդրադարձել է նաև Սևրի պայմանագրին՝ նշելով, որ ԱՄՆ-ը Մեծ Մերձավոր Արևելք ծրագրի շրջանակներում ձևափոխում է տարածաշրջանի քաղաքական քարտեզը, իսկ այս պարագայում Թուրքիան չի կարող խուսափել նման ճակատագրից: Ըստ նրա՝ «Սևրը աստիճանաբար կենսունակ է դառնում և ուղղվում է երկրի մասնատմանն ու տրոհմանը»[6]:

Թունջելիի համալսարանի դասախոս, ծագումով քուրդ, քաղաքագիտության դոկտոր Ալի Քեմալ Օզջանի բնորոշմամբ՝ ԱՄՆ-ին ձեռնտու չէ խաղաղասեր ՔԲԿ, այլ այն ձգտում է կենսունակ պահել մարտնչող ՔԲԿ-ին և մեկուսացնելով Օջալանին, ցանկանում է ՔԲԿ-ում ձևավորել իրեն ավելի մոտ ուղեգիծ և դրանով իսկ հասնել Թուրքիայի մասնատմանը[7]:

Թուրքիայի Էրջիյես համալսարանի տնտեսագիտության բաժնի վարիչ, դոկտոր, պրոֆեսոր Ջիհան Դուրայի 2003 թ. հրապարակման համաձայն՝ Թուրքիան կրկին կանգնած է մասնատման ու տարածքային բաժանման սպառնալիքի առջև: Մասնատման ծրագիրը բաղկացած է 3 քայլից, որը ենթադրում է քրդական, հայկական ու պոնտական (հունական) պետությունների ստեղծում: Ըստ նրա՝ այդ նախաձեռնությունների ու ծրագրերի հետևում կանգնած է Թուրքիայի «ռազմավարական դաշնակից» համարվող ԱՄՆ-ը: Թուրք պրոֆեսորը, ինչպես և մյուս հեղինակները իրենց հրապարակումներում որպես

3 Erol Manisali, AB Muhipleri'nin Sevr Rüyasi mi?, Cumhuriyet, 10.01.2003
4 Tarih Bilmenin Önemi ve ÇETIN YETKIN'in Yazisi:, "SEVR YENIDEN YASANIYOR", http://cahitalptekin.wordpress.com/2009/09/22/tarih-bilmenin-onemi-ve-cetin-yetkinin-yazisi-%e2%80%9csevr-yeniden-yasaniyor%e2%80%9d/
5 Batili ülkeler PKK'ya destek veriyor, 25 Subat 2008, http://www.saadet.org.tr/haber/batili-ulkeler-pkkya-destek-veriyor
6 Prof. Dr. Ahmet Saltik;Sevr Taksit Taksit Uygulaniyor, http://www.corluhaber.com, 11.12.2006
7 "ABD, Türkiye'yi Iraklastirma çabasinda", http://www.tempodergisi.com.tr/toplum_politika/08687/, 09.08.2005

Արևմուտքի նախաձեռնությունների պատմական ապացույց միանգամայն վկայակոչում են Սևրի պայմանագիրը, Վ. Վիլսոնի իրավարար վճիռն ու Եվրոպայի կողմից Օսմանյան Թուրքիայում բարեփոխումների պարտադրանքը[8]:

Այդ քննարկումների առանցքում է գտնվում այն տեսակետը, որ ԱՄՆ-ը և Արևմուտքն ընդհանրապես, Թուրքիայի հեռանկարի հետ կապված ինչ-որ ծրագրեր ունեն և այդ ուղղությամբ Սևրը կարող են օգտագործել որպես խաղաքարտ[9]:

Թուրքական քաղաքական որոշ շրջանակների պատկերացումներով, երբ նույնիսկ ԵՄ-ի կողմից բարձրացվում էր երկրում որոշ բարեփոխումների իրականացման անհրաժեշտությունը կամ ընդունվում որևէ փաստաթուղթ, որը չէր համընկնում այդ երկրի քաղաքական շահերի հետ, ասոցիացվում ու համեմատվում էր Սևրի պայմանագրի հետ: Օրինակ՝ 2000 թ. ԵՄ-ին Թուրքիայի անդամակցության գործակցության փաստաթղթի քննադատության ժամանակ թուրքական մեջլիսի խոսնակ, Ազգայնական շարժում կուսակցության ներկայացուցիչ Օմեր Իզգին այդ փաստաթուղթը նմանեցրել էր Սևրի պայմանագրին՝ նշելով, որ «Եթե Սևրի պայմանագրում անգամ միայն Հաքքյարին ու Հյուսիսային Իրաքն էին դիտվում որպես Քուրդիստան, ապա այս փաստաթղթով՝ ողջ Հարավարևելյան Անատոլիան»[10]:


Թուրքիան ստորագրում է Սևրի պայմանագիրը

2005 թ. փետրվարին Ստրասբուրգում Թուրքիա-ԵՄ համատեղ խորհրդարանական հանձնաժողովի նիստի ժամանակ ֆրանսիացի պատգամավոր Ժակ Թյուբոնի այն հայտարարությունը, թե Թուրքիան պետք է ճանաչի Սևրի պայմանագիրը, նոր քննարկումների առիթ հանդիսացավ Թուրքիայում: Թուրքական Cumhuriyet թերթում սկըսեցին հայտնվել դրա մեկնաբանությունները ու Սևրի պայմանագրի քննարկումները: Մասնավորապես Cumhuriyet-ի 2005 թ. մարտի 23-ի համարում հրապարակված Մ. Վելիդեդօղլուի «Կրկին հրատապ դարձող Սևր, թուրք. Yeniden Ateslenen Sevr» վերտառությամբ հոդվածը, որտեղ անդրադարձ է կատարվում Թուրքիայում Սևրի սինդրոմի առկայությանը[11]: Հոդվածագիրը նույն թերթի օգոստոսի 10-ի համարում նշում է, որ չնայած Սևրի պայմանագրի ստորագրումից 85 տարի է անցել, սակայն նրա տեղը Թուրքիայի նկատմամբ Արևմուտքի տեսլականի մեջ դեռևս պահպանվում է[12]:

Նախկին դիվանագետ և 1990-ականների սկզբին պետնախարարի պաշտոնն զբաղեցրած Քամրան Ինանը թուրքական Cumhuriyet թերթին տված հարցազրույցում,

8 ABD Türkiye'yi bölmeye hazirlaniyor, http://www.turksolu.org/35/dura35.htm, 21.07.2003

9 2005 թ. Անթալիայի մտավորականության օջախում ելույթով հանդես է եկել Իբրահիմ Դեմիրը, որն անդրադառնալով թուրք-ամերիկյան հարաբերություններին՝ նշել է, որ «ԱՄՆ-ը Թուրքիայի գլխին խաղեր է խաղում, իսկ Արևմուտքն ընդհանրապես չի հրաժարվել Սևրի պայմանագրից»:

10 Sevr'den beter, http://www.aksam.com.tr/arsiv/aksam/2000/11/10/guncel/guncel1.html

11 Meriç Velidedeoglu, Yeniden Ateslenen Sevr…, Cumhuriyet, 25.03.2005

12 Meriç Velidedeoglu, 85 yildir dayatilmaya çalisilan anlasma, Cumhuriyet, 10.08.2005



Ժակ Թյուրոն

մեկնաբանելով Թուրքիայի ԵՄ անդամակցության քաղաքականությունն ու եվրոպական դիրքորոշումն այդ հարցում, նկատում է, որ «Թուրքիայի համար երկու կարևոր իրավական փաստաթղթեր կան: Մեկը Լոզանի պայմանագիրն է, որը վերաբերում է հանրապետության ստեղծմանը, մյուսը՝ Մոնտրոյի պայմանագիրը, որը լրացնում է նախորդին: Ներկայումս դրանց փոփոխության հարցը զննվում է Եվրոպայի օրակարգում: Փոխելով Մոնտրոյի պայմանագիրը՝ կսահմանափակվի Թուրքիայի ազդեցությունը նեղուցներում, իսկ Լոզանի փոփոխության միջոցով Թուրքիան կմասնատվի էթնիկ բաժանման սկզբունքով՝ դառնալով ֆեդերալ պետություն: Այսօր Սևրը կամաց-կամաց կիրառության է դրված, և դա է Եվրոպայի նպատակը»[13]:

Նման բնույթի քննարկումներ են առկա նաև բարձրաստիճան զինվորականների մոտ, որոնք արտահայտելով Արևմուտքի նկատմամբ իրենց անվստահությունը, գտնում են, որ Սևրը հաղթաթուղթ է նրանց ձեռքում: Բացի այդ, նման կարծրատիպերի առկայությունն ու ինչ-որ չափով նաև արհեստական ներդրումը հասարակական-քաղաքական շրջանակներում, ծառայել է որպես պաշտպանական բնազդ, ինչի շնորհիվ հնարավոր կարող էր լինել թուրքական հասարակությանը մոբիլիզացնել արտաքին թշնամու դեմ, սերմանել տարածքային ամբողջականության անսասանության գաղափարը: Թուրքիայի հասարակական լայն շրջանակներում ամենամեծ մարտահրավերը, որ կարող է լինել, դա երկրի մասնատումն է:

Թուրքիայում առկա է և ժամանակ առ ժամանակ ուժեղանում է անվստահությունն ու կասկածամտությունը Եվրոպայի և ընդհանրապես Արևմուտքի նկատմամբ, ինչը ավելի վառ է դրսևորվում ժամանակակից հասարակական-քաղաքական մտածելակերպում և քննարկումներում: Այդ երկրի հասարակական-քաղաքական կյանքում առկա է այն կարծրատիպը, որ Արևմուտքը իր մեջ թաքցնում է պետության քայքայման և մասնատման ծրագրեր: «Սևրաֆոբիա» երևույթն արդեն լայն քննարկումների առարկա է դարձել ոչ միայն արտաքին, այլև թուրքական մամուլի քաղաքական քննարկումներում: Ըստ էության, առկա է այն ընկալումը, որ Սևրի պայմանագիրը կարող է նորից վերածնվել, և դրանում անմասն չի մնա Արևմուտքը:

Թուրքիայում ԵՄ անդամակցության նկատմամբ վերջին տարիներին բացասական տրամադրությունները, կարող ենք ասել, որ մի կողմից երկրում առկա ներքին արժեքային ճգնաժամի, մյուս կողմից էլ թուրք հասարակության կողմից ընդհանուր առմամբ Արևմուտքի նկատմամբ խորացող կասկածանքի ու անվստահության արդյունք են, ինչի վառ դրսևորումը «Սևրի սինդրոմի» կարծրատիպն է հասարակական-քաղաքական քննարկումներում:

Թուրքական Turkish Daily News էլեկտրոնային պարբերականի 2007 թ. հրապարակումներից մեկի համաձայն՝ Թուրքիայի պետական համակարգում կա մի խումբ, որը ոչ մուսուլմաններին, կլինեն դրանք դարեր շարունակ այդ երկրում ապրածները, թե նորեկները, դիտում են որպես սպառնալիքի աղբյուր, որոնց միջոցով արտաքին ուժերը փորձում են մասնատել Թուրքիան: Այլ կերպ ասած՝ «Սևրի սինդրոմը կամ վախի հեգեմոնիան իշխում է Թուրքիայում, ինչը համակել է նաև երիտասարդ սերնդին»:

13 Bülent Sarioglu, “Sevr taksit taksit uygulamaya sokoldu”, Cumhuriyet, 14.

# Թուրք-հայկական յարաբերութիւնները փակուղու մէջ

**2010 թուականի օգոստ. 4-ին, Թեհրանի պետական «Թեհրան» համալսարանում տեղի ունեցաւ «Հայաստան 2010 եւ հեռանկարներ» միօրեայ գիտական միջազգային համագումարը՝ նոյն համալսարանի «Կովկասագիտութեան» հիմնարկի եւ Թեհրանի Հայ Դատի յանձնախմբի միատեղ կազմակերպութեամբ: Համագումարին ներկայ էր նաեւ դոկտ. Օզերթեմը Թուրքիայից, որը հանդէս եկաւ զեկոյցով: Ստանալով դոկտ. Օզերթեմի թոյլտուութիւնը, թարգմանաբար ներկայացնում ենք այդ զեկոյցը, որը թարգմանել եւ մեզ է տրամադրել Գրիգոր Ղազարեանը (Թեհրան):**

Պաղ պատերազմից յետոյ մինչ այսօր, Թուրքիայի արտաքին քաղաքականութիւնն ապրում է փոփոխութիւնների գործընթաց: Ամեն մի փոփոխութիւն իր հետ բերում է նոր տագնապներ եւ առաւելութիւններ, որոնք արժէ որ զգուշօրէն քննարկուեն ու արժեւորուեն: 1990-ական թուականներից Թուրքիան փորձում է կարգաւորել ու վերահասութիւն տալ այս մարտահրաւէրներին՝ որդեգրելով նախաձեռնող (proactive) արտաքին քաղաքականութիւն: Այս ուղղութեամբ, «զերօ-պրոբլեմ» հասկացութիւնը՝ ներկայացուած արտաքին գործերի նախարար Ահմեդ Դաւութօղլուի միջոցով, ազդեցիկ դեր է ունեցել հարեւան երկրների հետ ունեցած խրոնիկ (chronic) խնդիրները յաղթահարելու գործում, ու նաեւ կարողացել է աւելի լաւ մթնոլորտ ստեղծել տարածաշրջանային համագործակցութիւններ ձեռնարկելու համար: Կովկասում Ադրբեջանի հետ սկսած լաւ յարաբերութիւնները վերածուել են շրջանային ինտեգրացման գործընթացի, ինչին նաեւ մասնակից է եղել Վրաստանը՝ 2000-ի սկզբներից: Հարաւային Կովկասն այժմ դարձել է տարանցիկ (transit) մի շրջան՝ առեւտրի, էներգետիկ արտադրութիւնների եւ փոխադրման (transportation) ոլորտներում: Այնուամենայնիւ, Միջին Արեւելքի հետ գոյութիւն ունեցող Թուրքիայի համագործակցութիւնների համեմատութեամբ, սահմանափակ է Կովկասի դինամիզմը: Այս երեւոյթի գլխաւոր պատճառներից պիտի համարել այն, որ Հայաստանը ներառուած չէ տարածաշրջանում իրագործող գերնախագծերի (mega-projects) մէջ: Ադրբեջանի եւ Հայաստանի միջեւ եղած հակամարտութիւնը (conflict) հարցի մի կողմն է: Միւս կողմից էլ թուրք-հայկական յարաբերութիւններում առաջացած փակուղին է, որը բխում է երկու երկրների ներքին ու արտաքին քաղաքականութիւնների բարդ յատկութիւններից, խոչընդոտ համագործակցութիւնների ճամբին: Թուրք-հայկական յարաբերութիւնները նոր շրջան մտան 2008-2009-ին ֆուտբոլային դիւանագիտութեամբ ու երկու երկրների ղեկավարների այցելութիւններով: Այս աշխատութեան մէջ Թուրքիայի եւ Հայաստանի յարա-



Աւերված գյուղ Արևմտյան Հայաստանում

բերութիւնների ներկայ վիճակը ներկայացնելու է քննադատական դիտանկիւնից՝ աւելի ըմբռնելու համար ստեղծուած եւ շարունակուող փակուղու հանգած ընթացքը: Այս ծիրին մէջ մանրակրկիտ կերպով քննարկւելու է Թուրքիայի քաղաքական դինամիզմը եւ ապա համեմատութեան մէջ է դրւելու հայկականի հետ: Արծարծուած հարցերից է այն, որ երկու կողմերն էլ ժամանակ պէտք ունեն, որպէսզի վերագտնեն իրենց ուժը առաջ ընթանալու համար: Այս ժամանակահատուածում տեղի ունեցող որեւէ փոփոխութիւն կարող է կատալիզորի (catalyst) դեր ունենալ յարաբերութիւններում զարգացում արձանագրելու խնդրում:

**Թուրքիան փոխակերպութեան մէջ, բայց ոչ ցանկալի միջավայրում**

Պաղ պատերազմից յետոյ, Թուրքիան չյաջողեց համապատասխանեցնել միջազգային ասպարէզում տեղի ունեցող կառուցուածքային փոփոխութիւններին: ՆԱՏՕ-ի խնդրահարոյց էութիւնը եւ տարածաշրջանում առաջացած հակամարտութիւնները պարտադրեցին Թուրքիային, որ իր արտաքին քաղաքականութեան մէջ ընդունի հակազդողի ոճ: Նոր հասկացութեան կերտելը Թուրքիայի դիւանագիտութեան մէջ հետաձգւեց մինչ 2000-ականները, նոր հասկացութիւնը՝ «զերօ-պրոբլեմ» հասկացութիւնը ունի նաեւ իր թերի կողմերը:

Այս մօտեցման հիմնական սիւներից է թուրք-հայկական յարաբերութիւնները: Խնդիրը բազմակողմանի (multi-dimensional) բնոյթ ունի եւ նոյնիսկ իր ազդեցութիւնն ունի Արեւմուտքի եւ Կովկասի մնացած բաժինների վրայ: Թուրքիան յաջողել է յաղթահարել կամ նուազագոյնի իջեցնել իր հարցերը բոլոր հարևանների հետ՝ տնտեսական, քաղաքական եւ մշակութային քաղաքականութիւններով, ի բացառեալ Հայաստանի: Այս ուղղութեամբ ներքին եւ միջազգային դինամիկները կարեւոր դեր են խաղացել Թուրքիայի ներկայ կացութեան մէջ՝ խոչընդոտելով բնական միջոցներով լուծումների հանգումը: Ինչպէս յայտնի է, Թուրքիան եւ Հայաստանը 2009-ի հոկտ. 10-ին ստորագրեցին արձանագրութիւնները (protocols) յարաբերութիւններ պահպանելու ուղղութեամբ, բայց յիշեալ թականից մինչ օրս, թէ Հայաստանի եւ թէ Թուրքիայի խորհրդարաններում չի յաջողել վաւերացնել փաստաթուղթը: Խնդիրը շարունակեց մնալ քաղաքական հիմնական օրակարգում, սակայն գնալով նուազեց նրա առաջնահերթութիւնը, յատկապէս 2010 թականի գարնանից:

Քաղաքական շրջանակներում խնդրի նուազման պատճառներից մէկը Թուրքիայում քաղաքական եւ տնտեսական փոխակերպութեան գործընթացն (transformation process) է: Ներքին իմաստով քաղաքական կեանքի հաւասարակշռութիւնը վերին աստիճանի զգայուն կացութեան մէջ է: Էրգենեկոնի հարցը, որը ծագեց 2007-ին եւ որի հետեւանքով ի յայտ եկաւ «խորքային պետութեան» միտումը Թուրքիան ապակայունացնելու համար, մեծ ցնցում ստեղծեց երկրի ստատուս-քոյի (Status quo) մէջ: 2010-ին գագաթնակէտին հասաւ դատական գործընթացը Բիւրոկրատիայում (Bureaucracy)՝ եղած մեխանիզմների ու քաղաքական շրջանակների միջեւ: Այս երեւոյթը նուազեցրեց քաղաքական գործիչների արդիւնաւէտութիւնը (efficacy) անհրաժեշտ փոփոխութիւններ ձեռնարկելու եւ հաստատելու, հանգելով վարչագիտական (adminstrative) ապարատների յատկապէս դատական եւ գործադիր մարմիններում (executive and judicial branches): Որպէս հետեւանք ԱԶԿ-ի (Արդարութիւն եւ զարգացում կուսակցութիւնը, որը իշխող կուսակցութիւնն է) կառավարութիւնը արմատական որոշումի հանգեց, առաջարկելով լուրջ բարեփոխումներ Սահմանադրական օրէնքի մէջ, որպէսզի կարողանայ վերացնել իրաւական (legal) թերութիւնները եւ նաեւ զարգացնել ժողովրդավար ու անհատական իրաւունքները: Յիշեալ երկու խնդիրները՝ գումարած ՓՔՔ-ի ահաբեկչական կազմակերպութեան գործողութիւնների սաստկացումը, դարձան երկրի գերակշռող քաղաքական օրակարգերը: Քաղաքական կուսակցութիւնների եւ բիւրոկրատիայի պայքարի բերումով ձեռքերը կապուած կառավարութեան համար դժուար էր Հայաստանի

խնդրով յարատեւ հիմնական լուծումներ ու արմատական (radical) քայլեր ձեռնարկելը, թէեւ խորհրդարանում մեծամասնութիւն է կազմում: Այս բոլորի կողքին նաեւ պիտի ասել, որ գալիք տարուայ ընդհանուր ընտրութիւնների հեռանկարը եւս կառավարութեան համար ստեղծել է ճգնաժամային կացութիւն: ԱԶԿ-ին հովանաւորութիւնները պակսել են վերջերս, քաղաքական այս միջավայրում ոչ ոք չի ցանկանում առաւել ռիսկերի դիմել: Այս կապակցութեամբ մեծ դեր է խաղում նաեւ ազգայնականութիւնը (nationalism), Ղարաբաղին կապուած տարածքային հակամարտութիւնը (dispute) Հայաստանի եւ թրքացեղ (turkic) Ադրբեջանի միջեւ, զգացական (emotional) խնդիր է եւ հակազդեցութիւններ է ստեղծում յատկապէս ազգայնական եւ չափաւոր (conservative) հոսանքների մէջ:

Միաժամանակ՝ ներքին միջավայրն է անբարենպաստ թւում: Վերջին միջազգային դինամիկները սակայն համախառն (mixed) դեր են խաղում հաշտութեան տարածման (fostering) մէջ: 2008-ի ռուս-վրացական պատերազմի հետեւանքով որոշակի փոփոխութիւն է կրել Կովկասի ստատուս-քուոն: Պատերազմի հետագայի ժամանակահատուածում Թուրքիան ներկայացրեց Կովկասեան համագործակցութեան եւ կայունութեան դաշինքը (Caucasion Cooperation and stability pact): Դրանով հանդերձ չյաջողուեց ի մի բերել տարածաշրջանի երկրներին, սակայն կատարուած զրոյցները օգնեցին, որ Թուրքիան իր յարաբերութիւնները զարգացնի Կովկասի իւրաքանչիւր երկրի հետ երթուդարձային դիւանագիտութեան (shuttle diplomacy) միջոցով:

Պատերազմից առաջ գոյութիւն ունէին համագործակցութեան ոլորտներ Վրաստանի, Ադրբեջանի եւ Թուրքիայի միջեւ, ինչը որպէս պատուանդան (planform) հանդիսացաւ գերնախագծեր (mega-projects) իրականացնելու համար (ինչպիսին է Բաքու-Թբիլիսի-Ջէյհան խողովակաշարը, որը ներդրում եւ շահ բերեց տարածաշրջանին): Յաւելեալ համագործակցութիւնների համար պարզապէս պահանջւում է Հայաստանի ներառումը: «Զերօ-պրոբլեմ» դիւանագիտութեան ուղղութեամբ Թուրքիան փորձում է Հայաստանի հետ համագործակցութեան եզրեր գտնել: Այս համատեքստում էր, որ նախագահներ Աբդուլլահ Գիւլի եւ Սերժ Սարգսեանի կողմից սկսուած ֆուտբոլային դիւանագիտութիւնը նախաքայլը եղաւ Ցիւրիխում 2009-ի հոկտեմբերին արձանագրութիւնների ստորագրման:

Չի կարելի անտեսել ԱՄՆ-ի դերը թուրք-հայկական մերձեցման նախագծում: Ինչպէս յայտնի է, ԱՄՆ-ի



Հասան Սելիմ Օզերթեմ

նախագահ Բարաք Օբաման իր նախագահական ընտրարշաւներում, բացայայտ կերպով եւ հրապարակաւ յայտարարեց, որ 1915 թ. դէպքերը պիտի ճանաչուեն որպէս ցեղասպանութիւն: Ուստի եւ Օբամայի 2009-ի ապրիլի 24-ի նախագահական ճառի նախօրէին յատկապէս, Թուրքիան իր ջանքերը կենտրոնացրել էր այն հարցի շուրջ, որ Օբաման 1915-ի դէպքերի մասին խօսելիս խուսափի «ցեղասպանութիւն» բառի գործածութիւնից: Օբաման եւս բացայայտ կերպով չգործածեց «ցեղասպանութիւն» բառը եւ փորձեց նմանութիւն ստեղծելով՝ գործածել «Մեծ եղեռն» բառը, ինչը հայերէնում նշանակում է «Մեծ արհաւիրք» (great catastrophe). ամէն պարագային այս հարցը չազդեց Թուրքիայի որոշմանը՝ ստորագրելու արձանագրութիւնները: Ցիւրիխեան արարողութիւնների ընթացքում իրենց կարեւոր դերն ունեցան թէ ԱՄՆ-ի պետքարտուղարը եւ թէ Ռուսաստանի արտաքին գործերի նախարարը, այդուհանդերձ չպիտի չափազանցել Օբամայի վարչակազմի դերը արձանագրութիւնների առաջացման հարցում: Օբամայի վարչակազմը ունեցաւ կատալիզորի դեր եւ ոչ թէ հիմնադիր, քանի որ սկսել էին երկկողմ գաղտնի բանակցութիւնները Ցիւրիխում արդէն իսկ նախքան Օբամայի նախագահ ընտրուելը: Ցիւրիխում սկսուած գործընթացը դադարեց տարածաշրջանում կառուցուածքային պրոբլեմների պատճառով. այս կապակցութեամբ մանրամասնօրէն պիտի քննարկել Թուրքիայի եւ Ադրբեջանի յարաբերութիւնները: Խորհրդային Միութեան փլուզումից յետոյ

*Թուրքիայի ղեկավարներ Թուրգութ Օզալն ու Սուլէյման Դեմիրելը եւ Ադրբեջանի նախագահ Հէյդար Ալիեւը զարգացրին յարաբերութիւնները բարեկամական եւ երկկողմանի շահերի հիման վրայ: Երկու երկրների կապերն ընդլայնուեցին շատ արագօրէն շնորհիւ մշակութային ու տնտեսական համագործակցութիւնների՝ կրթութեան, առեւտրի ու լրատւական (media) ոլորտներում: Ադրբեջանը դարձաւ Թուրքիայի դուռը դէպի Կովկաս եւ Կասպեան շրջան, իսկ Թուրքիան անդամը լինելով ՆԱՏՕ-ի ու իր Եւրոմիութեան անդամակցութեան հարցի բերումով ելք էր Ադրբեջանի համար դէպի Արեւմուտք: Սակայն Թուրքիայի հետեւողականութիւնն իր «զերօ-պրոբլեմ» քաղաքականութեան հետապնդման մէջ եւ ադրբեջանական զգայնութիւնները՝ ցուցաբերած թուրք-հայկական մերձեցման գործընթացի ժամանակ, պարզ դարձրին այն իրողութիւնը, որ թէեւ Ադրբեջանի եւ Թուրքիայի երկկողմանի յարաբերութիւնները գնահատւում են որպէս «յատուկ» կապեր, սակայն երբ հարցը վերաբերում է ազգային շահերին, Ադրբեջանը քայլեր է վերցնելու ելնելով իրատեսական դրդապատճառներից (realist motives):*

*Ադրբեջանի թէ էլիտ (elite) խաւը եւ թէ հանրային կարծիքը գտնում են, որ Հայաստանի եւ Թուրքիայի յարաբերութիւնների նորմալացումը նշանակում է՝ Թուրքիան լքում է Ադրբեջանին: Այս ուղղութեամբ դժուար կլինի անտեսել Ռուսական լոբբիի բարձրաձայն դերը Բաքւի քաղաքական շրջանակներում. նրանք փորձում են Ադրբեջանի հայեացքը փոխել դէպի Մոսկւա՝ երկրի «լաւագոյն շահի» հաշւին: Թուրքիայի եւ Հայաստանի միջեւ եղած գործընթացը չարաշահուեց եւ Թուրքիան հարկադրուած եղաւ վերահաստատել ու կրկնել 1990-ականներից ընդունած դիրքը՝ թէ մերձեցման երաշխիքը Ղարաբաղի հարցի լուծման մէջ է: Դառը հակազդեցութիւնները հնարաւոր եղան հակակշռել միայն Թուրքիայի արտգործնախարարի, նախագահի եւ վարչապետի հրապարակային յայտարարութիւններից յետոյ, որ կատարուեցին տարբեր բեմերից:*

*Աւելի որոշակիօրէն՝ Թուրքիայի վարչապետ Ռեջեփ Թայիփ Էրդողանի յայտարարութիւնները Ադրբեջանի խորհրդարանում, ուր նա վերահաստատեց, թէ Թուրքիան արձանագրութիւնները չի վաւերացնելու, քանի դեռ հայերը չեն ազատել Ադրբեջանի տարածքները, կրիտիկական կէտ (critical point) էր թուրքական դիւանագիտութեան մէջ: Այս հարցը Թուրքիային շատ փոքր դաշտ տուեց մանեւրելու համար, բայց միաժամանակ օգնեց, որ որոշ չափով յարաբերութիւնները բարոքեն Ադրբեջանի հետ: Այս բոլորով հանդերձ թւում է թէ թուրք պաշտօնատարների ջանքերը դեռ անբաւարար են Ադրբեջանի վստահութիւնը վերաշահելու համար: Ազերի արտգործնախարար Էլմար Մամեդեարովը, որը 2009-ի վերջերին այցելեց Թուրքիա՝ երկու երկրների միջեւ տեսագրի (visa) վերացման հարցով, առանց ստորագրելու համաձայնագիրը լքեց Թուրքիան:*

*Թերեւս հաւանական է, որ Թուրքիայի նախապայմանը (նորմալացման գործընթացը կապել է Ղարաբաղի հարցի հետ), նախքան բանակցութիւնները, արծարծուած է եղել Թուրքիայի կողմից, քանի որ Հայաստանի եւ Թուրքիայի սահմանի փակւելը հետեւանքն է եղել հայկական ուժերի միջոցով Ադրբեջանի տարածքների գրաւման: Ամէն պարագային, ելնելով այս յարաբերութիւնների նուրբ ու զգայուն էութիւնից, ինչը խնդիրներ պատճառեց նաեւ արձանագրութիւնների ստորագրման ժամանակ, հնարաւոր չէր հարցը բացայայտ կերպով առաջ տարւէր: Արձանագրութիւնների մէջ անուղղակի նշումներ կան հակամարտութեան եւ միջազգային իրաւունքի սահմաններում հարցի լուծման անհրաժեշտութեան մասին: Այս խնդրի մասին, ուղղակի եւ բացայայտ կերպով նշում չլինելը կարող է դիտւել որպէս հարց: Ամէն պարագային Թուրքիայի կողմից Ղարաբաղի հարցի օգտագործումը՝ ծառայեցնել որպէս պատրուակ խորհրդարանում արձանագրութիւնները չվաւերացնելու համար մի հարց է, որ անուղղակի կերպով քննադատւել է միջազգային դերակատարների (actors) կողմից: Թէ՛ Ամերիկայի եւ թէ՛ Ռուսաստանի պաշտօնատարները բացայայտ եւ անուղղակի կերպով յայտնել են թէ նորմալացումը չպիտի կապւի Ղարաբաղի խաղաղութեան գործընթացի հետ: Դժուար է ասել թէ Ռուսաստանի եւ ԱՄՆ-ի*



կողմից կատարուած յայտարարութիւնները իրականում կարող են օգնել հարցի լուծմանը, քանի որ նրանք պարզապէս աւելի շատ քաջալերում են հայկական կողմին իր ըմբոստ եւ մերժող դիրքի մէջ, քան՝ նրանց մղում հակամարտութեան լուծման:

Որպէս վերջին կէտ, արժէ նշել Հայաստանի Սահմանադրական դատարանի որոշման մասին, ինչը նաեւ որոշ կասկածներ առաջացրեց Թուրքիայում՝ Հայաստանի անկեղծութեան մասին, քանի որ այդ որոշումը պարպեց արձանագրութիւնները բուն էութիւնից: Միաժամանակ Թուրքիայի կառավարութիւնը, որը պաշտպանն է արձանագրութիւնների, ունի երկու առարկութիւն, մէկը այն է, որ 1915-ի դէպքերը պիտի քննարկուեն երկու երկրների պատմաբաններից բաղկացած միասնական մի յանձնաժողովում, երկրորդ հարցն էլ վերաբերում է Հայաստանի եւ Թուրքիայի սահմաններին, որը գծուել է 1921-ին Կարսի պայմանագրով եւ հաստատում ստացել երկու երկրների կողմից եւ դա պիտի ճանաչի յետխորհրդային Հայաստանը: Այնինչ Հայաստանը իր անկախութեան յայտագրի (declaration) մէջ թրքական հողերը անուանում է «Արեւմտեան Հայաստան» (յօդուած 11):


Քրդստանի բանուորական կուսակցութեան զինյալ

### Հայաստանը՝ գամուած (stuck) ազգայնականութեան եւ սփիւռքի միջեւ

Հայաստանի ներկայ Հանր. նախագահը ի տարբերութիւն իր նախորդի՝ Ռոբերտ Քոչարեանի, եւ ներքին ճնշումներով հանդերձ, հանդիպումներ ունեցաւ ազերի եւ թուրք պաշտօնակիցների հետ տարբեր վայրերում, յատկապէս ռուս-վրացական պատերազմից յետոյ: Թուրք-հայկական մերձեցման խնդրում ներքին խոչընդոտները, որոնց նաեւ դէմ-յանդիման է Թուրքիան, Հայաստանի կառավարութեանը թողեցին քիչ ուժ եւ լծակ: Թուրքիայի հետ երկխօսութիւնը շատ սուր քննադատուեց երկրում, յատկապէս ընդդիմադիր կուսակցութիւնների կողմից, հակազդեցութիւնը աւելի ուժեղ էր հայկական սփիւռքում: Սարգսեանի հանդիպումները Հայաստանում մտաւորականութեան հետ եւ սփիւռքում դրական չէին նախագահի քաղաքական կարիերայի համար: Այնուամենայնիւ թէ Թուրքիայի եւ թէ Հայաստանի կառավարութիւնները շարունակում են դիմել քայլերի, որոնցով հնարաւոր է կոտրել քաղաքական եւ հասարակական թաբուները:

Օգոստ. 31-ին արձանագրութիւնների հրապարակումով եւ ապա 2009-ի հոկտ. 10-ին Ցիւրիխում ստորագրելով թուրք եւ հայ արտգործնախարարները յաղթահարեցին ամենամեծ արգելքները: Հայաստանի արտգործնախարար Էդուարդ Նալբանդեանը անուղղակի եւ միջանկեալ կերպով անդրադառնալով Լեռնային Ղարաբաղի խնդրին, ցանկացաւ շեշտել յարաբերութիւնների առանց նախապայմանով սկսելու սկզբունքը: Բայց իր թուրք պաշտօնակից Դաւութօղլուն ցանկանում էր ընդգծել Հարաւային Կովկասում տարածաշրջանային բոլոր հարցերի լուծման կարեւորութիւնը եւ այդ շարքում անուղղակի անդրադառնում Լեռնային Ղարաբաղի խնդրին: Այս խնդիրների առկայութիւնը նախարարների ճառերի տեքստում արարողութեան ուշացման պատճառ դարձաւ, բայց Թուրքիայի առաջարկը՝ նախարարների ճառի բաժինը զեղչելու, օգնեց հարցի լուծմանը, չնայած որ Մինսկի խմբի անդամների քաղաքական կամքը, որոշակիօրէն Ռուսաստանինը եւ ԱՄՆ-ինը, թէեւ բաւական ազդեցութիւն ունեցաւ հարցի լուծման մէջ, սակայն իրենց հետագայ պահուածքը (attitude) այս գործընթացի պարագային աւելի քիչ կառուցողական եղաւ:

Հայաստանում որոշ խոչընդոտներ, Կովկասում յարատեւ լուծումների հասնելու ճամբին, սկսեցին առաջանալ արձանագրութիւնների ստորագրումից յետոյ: Հայաստանի քաղաքագէտները առաջարկեցին, որ



Ահմեդ Դավութօղլու

նախ Թուրքիայի խորհրդարանը վաւերացնի արձանագրութիւնները: Իրականութեան մէջ նրանք սկսեցին ժամկէտներ պարտադրել յատկապէս 2010-ի ապրիլի 24-ից առաջ: Ինչպէս վերը նշուեց, Թուրքիայի կառավարութիւնը շարունակեց շեշտել Լեռնային Ղարաբաղի խնդրի վրայ, ընդգծելով թէ այս երկու գործընթացներն անկախ չեն միմեանցից: Այս վիճարկմանը յաջորդեցին երեք կարեւոր զարգացումներ: Հայաստանի սահմանադրական դատարանի որոշումը կայացաւ ի հետեւումն կառավարութեան ներկայացրած եւ խորհրդարանում հաստատած մի օրինագծի, որով հեշտացւում էր Հայաստանի համար Թուրքիայի հետ նորմալացման համաձայնագրի չեղեալ համարելը, եւ վերջապէս այն, որ արձանագրութիւնները առկախուեցին:

Այս փուլի հետեւում գոյութիւն ունեցող հիմնական ազդակներից էր սփիւռքի ցուցաբերած հակազդեցութիւնը արձանագրութիւնների նկատմամբ: Սարգսեանը հինգ գաղթօջախներից` Ֆրանսիա, ԱՄՆ եւ Միջին Արեւելք կատարած իր սփիւռքեան ճամբորդութեան ընթացքում հանդիպեց շատ սուր եւ ուժեղ քննադատութիւնների: Հայկական սփիւռքը գլխաւոր եւ ցայտուն ազդակ է հայկական քաղաքականութեան մէջ, նկատի առնելով երկրին կատարած իր ֆինանսական հովանաւորութիւնն ու իր քաղաքական ուժը: Առաւել եւս, Հայաստանից ներս էլ ծայրայեղական (hardliner) Դաշնակցութիւն կուսակցութիւնը սպառնաց կառավարութեանը «իշխանափոխութեամբ» եւ պարտադրանքների դիմեց նախագահի հրաժարման համար: Յիշելով նախկին նախագահ Լեւոն Տէր-Պետրոսեանի փախճանը, որը նման պայմանների ներքոյ հարկադրուած հրաժարուեց, դժուար էր ընդդիմադիր կուսակցութիւնների այս կարգի տեսակէտները հաշուի չառնել: Իրականում, իշխող Հանրապետական կուսակցութիւնը իշխանութեան գլուխ է շնորհիւ կոալիցիոն կուսակցութեան հովանաւորութեան եւ դժուար է ենթադրել թէ խորհրդարանի միւս անդամները թեր կը քուէարկեն այս զգայուն արձանագրութիւններին: Աւելացնենք նաեւ, որ կառավարութիւնը կորցրեց Դաշնակցականների հովանաւորութիւնը 2009-ի ապրիլին: Արժէ յիշել, որ ԱԺ-ում 131 աթոռից 64 աթոռն է պատկանում Հանրապետական կուսակցութեանը, եւ սա բերում է նոր քաղաքական ռիսկեր նախագահի համար:

Վերջում հարկ է նշել, որ համաշխարհային ֆինանսական տագնապը եւ ճգնաժամի ազդեցութիւնը երկրում, դժուարացնում է կառավարութեան համար ոչ ժողովրդական (unpopular) քաղաքականութիւնների պարտադրումը:

Երկրի տնտեսութիւնը կոտրուել է (contracted) 14,4 տոկոսի` 2009-ին եւ լաւատեսութիւններ չկան նաեւ 2010-ի համար: Բացի դա, երբ Թուրքիան բացայայտ կերպով կապեց նորմալացման գործընթացը Լեռնային Ղարաբաղի հակամարտութեան հետ, Սարգսեանն էլ ընտրեց ոչ-ռիսկաւոր (non-risky) ճանապարհը ու սկսեց աւելի ագրեսիւ դիրք որդեգրել արձանագրութիւնների նկատմամբ, մի խօսքով` նա դարձեալ պիտի խաղար ազգայնականների խաղաքարտով, որպէսզի շահէր (to court) հանրային հովանաւորութիւնը:

**Եզրակացութիւն**

Թուրքիայի եւ Հայաստանի միջեւ շարունակում են գոյութիւն ունենալ կառուցուածքային (structural) խնդիրներ. սահմանային հարց, 1915-ի դէպքեր եւ Ղարաբաղի խնդիր: Պրոբլեմատիկ յարաբերութիւնները ինքնին բազմակողմանի են (multidimensional), բայց երբ դրանք գումարւում են երկու երկրների ու տարածաշրջանի միջազգային եւ ներքին դինամիկների հետ, իրավիճակը առաւել եւս բարդանում է: Յաւելեալ սրան` թէ Հայաստանում եւ թէ Ադրբեջանում ժողովրդավարութեան անկատարութեամբ քաղաքական դաշտը նպաստում է, որ Ղարաբաղի խնդիրը քաղաքա-

կանօրէն չարաշահիւ ազգային հակումներով:

Յուցաբերած քաղաքական կամքը դիւանագիտական յարաբերութիւններ սկսելու եւ երկու երկրների միջեւ սահմանը բացելու համար, որ սկսուեց 2008-ին, երկու երկրների ներքին քաղաքականութիւնների ու տարածաշրջանային նուրբ ու զգայուն փոփոխութիւնների բերումով այժմ դադարել է դարձեալ երկու երկրների ներքին քաղաքական ու միջազգային օրակարգերի արագ փոփոխութիւնների պատճառով: Այսուհանդերձ մենք պիտի յոյս կապենք դրական ապագայի եւ այն իրողութեան վրայ, թէ հաշտեցման գործընթացը չի վերացել, այլ միայն առկախուած է: Այն նուրբ ու զգայուն փոփոխութիւնները, որոնք օգնեցին գործընթացին սկսուի, կրկին կարող են օգնել գործընթացի առաջխաղացմանը: Ռուսաստանի եւ Մինսկի խմբի խաղաղութեան աշխատանքները Ղարաբաղի հակամարտութեան հարցում, կարողականութիւնը ունեն ուղղակի ազդելու Հայաստանի եւ Թուրքիայի մերձեցմանը: Ադրբեջանի եւ Հայաստանի կողմից ընդունելի ճանապարհային քարտէզը, ու նաեւ նորմալացման գործընթացի վերսկսումով, հետագայ հետեւանքները նոր հանգրուան են ստեղծելու Կովկասում, ինչը սատար է հանդիսանալու ամբողջ տարածաշրջանի ինտեգրացման նախագծին: Այդ իսկ պատճառով միջազգային հանրութիւնը պիտի ճնշում բանեցնի այս երկու երկրների վրայ յարատեւ մի լուծման հասնելու համար: Ներկայ պայմաններում խաղաղութիւնը Կովկասում գտնւում է նուրբ ու զգայուն գետնի վրայ:

Ուրեմն, Հարաւային Կովկասում գործընթացը միաժամանակ պիտի զուգորդի Ղարաբաղի եւ թուրք-հայկական յարաբերութիւնների հարցի հետ, այլապէս թուրք-հայկական նորմալացումը լինելու է սահմանափակ եւ պոտենցիալ է ստեղծելու նոր քաղաքական ռիսկերի՝ երկու երկրների կառավարութիւնների համար: Ապագայում երկու երկրները պիտի աշխատեն բաց պահել երկխօսութեան կանալները, բայց ոչ ագրեսիւ ոճով: Այս համատեքստում ուժի հաւասարակշռութիւնը Հայաստանի եւ Թուրքիայի միջեւ հաւասար չէ: Երրորդ կողմերի միջոցով թելադրուած պահանջները նոր անդրադարձների պատճառ են դառնալու Թուրքիայում եւ որը չի համընկնում լուծումների հետ: Հակառակ Հայաստանին, Թուրքիան աւելի պատրաստ է առարկայօրէն արժեւորելու գործընթացը, ուստի պահանջներն էլ Թուրքիայից պիտի լինեն տրամաբանական (rational): Հողային պահանջները եւ հատուցման (compensation) պահանջները Թուրքիայից Հայաստանի կամ սփիւռքի հայերի կողմից պարզապէս բացասական են ազդելու յարաբերութիւնների վերականգնման գործընթացի վրայ եւ ճանապարհ են հարթելու աւելի ուժեղ թաբուների համար:

Փոխարէնը, երկու ժողովուրդների յարաբերութիւնները պիտի զարգանան մշակութային կազմակերպութիւնների միջոցով: Նրանք օգնելու են քաղաքական այրերին՝ յաղթահարելու հանրային դիմադրութիւնը: Այս կապակցութեամբ թուրք-յունական յարաբերութիւնը կարող է ծառայել որպէս լաւ օրինակ: Նորմալացման գործընթացը, որ սկսուեց 1999-ին, Ստամբուլի մօտակայքում տեղի ունեցած երկրաշարժի պատճառով, վերածուեց քաղաքական յաջողութեան: Քաղաքական այրերի բարեկամական երկխօսութիւնը եւ երկու ժողովուրդների զարգացող յարաբերութիւնները սատար հանդիսացան, որ յարաբերութիւնները զարգացում արձանագրեն: Դեռ աւելին, հայկական սփիւռքի գերակայութիւնը հայկական քաղաքական կեանքում կարող է իր ազդեցութիւնը ունենալ այս ջանքերի վրայ:

Եւ վերջապէս, դրսի դերակատարները շրջանում, եւ միջազգային հանրութիւնը ապացուցել են իրենց կամքը՝ շրջանում գործնապէս դեր ունենալու համար, սակայն Հարաւային Կովկասի դիմագրաւած խնդիրները լուծելու համար կարիք կայ նաեւ, որ կովկասեան ժողովուրդների միջեւ լինի տրամաբանական եւ խելացի (rationalism) մօտեցում: Տրամաբանական եւ խելացի քաղաքականութիւնները պիտի հետապնդուեն փոխադարձ շահի հիման վրայ, նաեւ պիտի յարգուի միջազգային իրաւունքն ու իւրաքանչիւր ազգի անկախ պետականութիւնը (sovereignty):




Թուրքիան հրաժարւում է առերեսուել սեփական պատմութեան հետ

# Ադրբեջան. խոցելի կայունություն

## Միջազգային ճգնաժամային խմբի զեկույցը

Կարեն ՎԵՐԱՆՅԱՆ

Ս. թ. սեպտեմբերի 3-ին հրապարակվեց Միջազգային ճգնաժամային խմբի՝ Ադրբեջանին նվիրված հերթական զեկույցը՝ բավական խորհրդանշական խորագրով՝ «Ադրբեջան. խոցելի կայունություն»: Զեկույցը բաղկացած է ամփոփագրի ու խորհուրդների բաժնից և հաջորդող 6 գլուխներից, որոնք հետևյալներն են՝

1. Նախաբան
2. Վարչակարգի (regime) քաղաքական դիմագիծը
3. Փոխհարաբերությունները իշխող վերնախավի ներսում
4. Վերահսկողությունը հասարակական կյանքի նկատմամբ
5. Որևէ հնարավորություն բարեփոխման համար
6. Եզրահանգումներ

Այժմ կփորձենք հանգամանորեն անդրադառնալ զեկույցի բուն բովանդակությանը և դրանում տեղ գտած փորձագիտական հիմնական գնահատականներին ու հետևություններին:

Փորձագետները կարծում են, որ Իլհամ Ալիևն առնվազն կարճաժամկետ և միջնաժամկետ տեսլականներում կարողացել է կոնսոլիդացնել իշխանությունը և կայունություն բերել Ադրբեջանում, այնուհանդերձ, իշխանական համակարգի հովանավորչական բնույթը ցույց է տալիս, որ երկարաժամկետ հեռանկարում կայունությունը խոցելի է՝ պայմանավորված վերնախավի կլանային մրցակցությամբ: Ավելին, երկրի խիստ «նավթահեն» տնտեսության զարգացումը ուժեղացնում է առկա ռիսկերը, մասնավորապես երբ նախատեսվող եկամուտները զրոյացվեն, այն կհանգեցնի Ադրբեջանի ողջ տնտեսության անկմանը: Երկրի կայունության խոցելիության կարևոր առանձնահատկություններից մեկն էլ այն է, որ երկրում իրականացված հերթական ընտրությունները ավարտվել են գործադիր իշխանության ձեռքում իշխանության առավել կենտրոնացմամբ, իսկ քաղաքացիական ու քաղաքական ազատությունները արմատապես ոտնահարվել են: Արդյունքում, Ադրբեջանը, ըստ փորձագետների վերլուծության, կիսաավտորիտար համակարգից վեր է ածվել լիարժեք ավտորիտար պետության: Փորձագետները միահամուռ են, որ երկրում 2010 թ. նոյեմբերին նախատեսվող խորհրդարանական ընտրությունները բացառություն չեն լինելու:

Զեկույցում մասնավորապես խոսվում է, որ Ադրբեջանի վարչակարգի ներսում և վերջինիս այս կամ այն հարցերի շուրջ բանավեճերն ու քննարկումները խորապես քաղաքականացված են, և շատ հարցեր ուղղակիորեն բաց քննարկման համար չեն: Արդյունքում, տեղեկատվության պակաս ու կառուցողական փոխանակման բացակայության պայմաններում, երկրի քաղաքական վերլուծաբանների ու փորձագետների շրջանում գոյություն չունի որևէ լայն վերլուծական փոխհամաձայնություն:

Վարչակարգի քաղաքական դիմագիծը ենթագլխում մանրամասն խոսվում է Իլ-

համ Ալիևի կողմից իշխանության կոնսոլիդացման, իշխանության անձնավորման կամ կուռքի վերածման, ինչպես նաև վերնախավի կլանային համակարգում ընթացող գործընթացների մասին: Ինչպես նշում են փորձագետները, անցնելով իշխանության՝ կրտսեր Ալիևը արժանացավ երկրի ընդդիմության սուր քննադատություններին և մեղադրանքներին առ այն, որ անփորձ Ալիևն ի վիճակի չէ կառավարել երկիրը: Ընդդիմադիրներից ոմանք էլ ավելի առաջ անցան՝ կարծելով, թե կրտսեր Ալիևը անցումային ֆիգուր է: Սակայն Իլհամ Ալիևը հստակ գիտակցում էր, որ իր իշխանությանը ներուժված մարտահրավերները գլխավորապես գալիս են ոչ թե բույլ ընդդիմադիր դաշտից, այլ իշխող վերնախավից: Խնդիրը նրանում է, նշում են փորձագետները, որ Հեյդար Ալիևի մահվանից հետո ազատ արձակվեցին վերջինիս վարչակարգի փորձառու անդամներից շատերի ձեռքերը, որոնք չհապաղեցին վերահսկելու անփորձ և երիտասարդ Ալիևին: Նրանցից առանձնանում էին հատկապես նախագահի հորեղբայր Ջալալ Ալիևն ու նրա մտերիմներից մեկը՝ Ալի Ինսանովը: Ի դեպ, վերջինս հանդիսանում էր առողջապահության նախարարը, ազդեցիկ «Երազի» կլանի («երևանյան ադրբեջանցիներ») ղեկավարը: Իշխանական կլանների ակտիվացման զսպման նպատակով կրտսեր Ալիևը սկսեց փնտրել վստահելի դաշնակիցների, որոնց թվում էր առաջին հերթին Ռամիզ Մեհդիևը, որը նույնպես հանդիսանում էր Հեյդար Ալիևի ամենաազդեցիկ թիմակիցներից մեկը և ժամանակին ղեկավարում էր նրա նախագահական վարչակազմը: Ռամիզ Մեհդիևը այն փորձառու քաղաքական գործիչն էր, որը կարող էր հակազդել Ջալալ Ալիևի ու Ինսանովի ազդեցությանը:

Իշխանական սուր պայքար էր սկսվել նաև վերնախավի այլ երկու երիտասարդ անդամների՝ Մաքսային կոմիտեի նախկին ղեկավար Քեմալեդդին Հեյդարովի (նախագահի թիմակից, ներկայում զբաղեցնում է երկրի արտակարգ իրավիճակների նախարարի պաշտոնը) և տնտեսական զարգացման նախկին նախարար Ֆարհադ Ալիևի միջև, որը կարող էր մեծապես սպառնալ վարչակազմի կայունությանը: Դեպքերի նման զարգացումները կանխելու նպատակով Իլհամ Ալիևը դիմեց կտրուկ միջոցների՝ կաշառակերության մեղադրանքներով ձերբակալվեցին Ինսանովն ու Ֆարհադ Ալիևը, իսկ 2005 թ. նոյեմբերին հետևած խորհրդարանական ընտրություններում կառավարությունը կարողացավ բռնի մեթոդներով ճնշումներ բանեցնել ընդդիմության նկատմամբ:

Այդ ընտրություններից անմիջապես հետո, ըստ զեկույցի փորձագետների գնահատականի, ամրապնդվեց կախյալ խորհրդարանի վերահսկողությունը «Նոր Ադրբեջան» կուսակցության (ՆԱԿ) և նրա մենիշխան Իլհամ Ալիևի կողմից: Կրտսեր նախագահը սկսեց իր առաջին գլխավոր քաղաքական վերադասավորումները: Ալիևը նախ և առաջ խորհրդարանական ղեկավարությունից հեռացրեց Ջալալ Ալիևի ու Ինսանովի կլանին հարող օրենսդիրներին, այնուհետև հաջորդեցին նախարարների ու տեղական ինքնակառավարման իշխանությունների զտումները: Դա հնարավորություն տվեց երկրի նախագահին առանցքային պաշտոններում նշանակումներ իրականացնել իր, ինչպես նաև Հեյդարովի թիմակիցներից:

Զեկույցի գնահատականների համաձայն, Իլհամ Ալիևը ավելի քիչ հիմնվեց տեղական կլանների վրա, քան իր հայրը: Խոսքը մասնավորապես վերաբերում է Նախիջևանի ու Հայաստանից արտագաղթած ադրբեջանցիներին: Ինչպես արդեն նշվեց, «Երազի» կլանի առաջնորդ Ինսանովի ձերբակալությունը խորհրդանշեց Ադրբեջանի քաղաքականությունում տեղական կլանների՝ որպես ազդեցության գործոնների ավարտը: Այնուհանդերձ, նախիջևանյան, իսկ ավելի քիչ չափերով նաև «Երազի» կլանների ներկայացուցիչները շարունակեցին ստանձնել առանցքային պաշտոններ, սակայն վերջիններիս անձնական լոյալությունը նախագահին դարձավ առավել ընդգծված, քան տեղական կլանային կապերը: Ի տարբերություն Հեյդար Ալիևի, կրտսեր Ալիևը նախընտրեց իր թիմում տեսնել ավելի շուտ քաղաքային, Բաքվում աչքի ընկած անհատականություններ, իսկ հաճախ՝ հաջողակ գործարարների:

Իլհամ Ալիևի ձեռքում երկրի իշխանության մենիշխան կոնսոլիդացման գործում զգալի նշանակություն ունեցան նավթից ստացվող խոշոր եկամուտները, ինչը հանգեցրեց նաև օլիգարխների ու գործարար համացանցի ազդեցության մեծացմանը:

2008 թ. հոկտեմբերին Ադրբեջանի նախագահական ընտրություններին Ալիևը ձայների ճնշող մեծամասնությամբ՝ 89% քվեներով պահպանեց իր նախագահական աթոռը, չնայած ընդդիմության դժգոհություններին ու մեղադրանքներին՝ ընտրությունների կեղծման առումով: Ի տարբերություն 2005 թ. ընտրությունների, այս ընտրարշավում տեղի չունեցավ ընդդիմության կողմից նախաձեռնված որևէ լուրջ հասարակական բողոք: Եվրախորհրդի՝ Ադրբեջանի հարցերով այդ ժամանակվա համազեկուցող Անդրես Հերքելը բավական սուր արձագանքեց ընտրությունների արդյունքներին՝ մեկնաբանելով, որ «այն իրենից ներկայացնում էր լողալու լավ փորձառություն, սակայն, դժբախտաբար, դատարկ լողավազանում»: Արդյունքում Ալիևը կարողացավ ամրապնդել իր և իր թիմակիցների դիրքերը՝ մենիշխան կերպով էլ ավելի կոնսոլիդացնելով իշխանությունը: Ալիևը չսահմանափակվեց դրանով. ավելին, իշխող կուսակցությունն անմիջապես անցավ սահմանադրական փոփոխություններին, ըստ որոնց վերացվում էր նախագահության երկու հաջորդաբար վերընտրվելու սահմանափակումը և հնարավորություն էր տալիս անորոշ ժամանակով հետաձգելու ընթացիկ նախագահական ու խորհրդարանական ընտրությունները: Այդ փոփոխություններն ընդունվեցին 2009 թ. մարտին՝ հապճեպ կազմակերպված հանրաքվեի արդյունքում: Պատահական չէին ընդդիմադիր դաշտում խորացող արձագանքներն առ այն, որ Ալիևը երկիրը տանում է միապետության, իսկ նրանցից ոմանք էլ անվանում էին կրտսեր Ալիևին «շահ»: Եվրահանձնաժողովը նույնպես բավական բացասաբար արձագանքեց այդ սահմանադրական փոփոխություններին՝ որակելով դրանք որպես «ժողովրդավարության զարգացման համար լուրջ ետընթաց»:

Կառավարությունը կրում է նեո-ֆեոդալական համակարգի բնույթ, երբ երկրի նախագահը բաշխում է տնտեսության եկամտաբեր ճյուղերից ստացված եկամուտները, թույլ տալիս իր թիմակիցներին հավաքագրել ոչ ֆորմալ գումարներ և նույնիսկ վերահսկել տվյալ շրջանը կամ տարածքը: Իշխանական համակարգը գործում է վերևից ներքև սկզբունքով: Իշխող վերնախավն իր շուրջ ստեղծում է նմանատիպ հովանավորչական համացանցեր՝ առանցքային պաշտոններում նշանակելով իրենց թիմակիցներին ու ազգականներին:

Երկրի նախագահը հանդես է գալիս ոչ միայն որպես իշխանության և եկամուտների բաշխող, այլև որպես հարցեր կարգավորող: Մի կողմից նա համակարգը պահում է միասնական՝ հանդես գալով որպես կապող օղակ ու հաշտարար վերնախավի անդամների միջև մրցակցությունում, իսկ մյուս կողմից՝ ինչպես իր հայրը, կիրառում է «բաժանիր, որ տիրես» մարտավարությունը՝ միակենտրոն ու միանձնյա իշխանություն ունենալու նպատակով: Արդյունքում, ըստ էության, Իլհամ Ալիևի թիմից որևէ անդամ հայտնի չէ, սակայն դրա հետ մեկտեղ Ալիևի իշխանությունը մեծապես կախյալ վիճակում է այն մարդկանցից, որոնք իրեն շրջապատում են:

Երկրի իշխանական համակարգում շարունակում է պահպանել իր ազդեցիկությունը Ռամիզ Մեհթիևն ու նրա կլանը. ըստ զեկույցի փորձագետների, նա համարվում է ամենակոնսոլիդացված ուժը իշխող վերնախավում: Պատահական չէ, որ ընդդիմությունում Ռ. Մեհթիևը հայտնի է որպես «մոխրագույն կարդինալ»՝ ներքին քաղաքականությունում նրա ունեցած մեծ ազդեցության համար: Որպես երկրի պետական քաղծառայության հանձնաժողովի նախագահ կամ՝ Chairman of the State Civil Service Committee, վերջինս համարվում է քաղաքացիական ծառայության ոլորտում գրեթե բոլոր նշանակումներում առանցքային որոշում ընդունող ուժը՝ ներառյալ օրենսդիր ու դատական բնագավառները: Բացի այդ, նա ղեկավարում է հակակոռուպցիոն հանձնաժողովը, որը նույնպես մեծ ազդեցություն է տալիս բոլոր քաղաքացիական ծառայողների վրա:

Իշխող վերնախավում երկրորդ խոշոր կենտրոնը այս-



Ռամիզ Մեհթիև

պես կոչվող «օլիգարխներն» են, որոնք հիմնականում բաղկացած են նախարարներից և վայելում են նախագահի աջակցությունը՝ պայմանավորված բիզնեսի համատեղ շահերով: Եթե Մեհթիևի կլանը վերահսկում է պետության վարչական ռեսուրսների զգալի հատվածը, «օլիգարխների» կլանը ղեկավարում է երկրի ֆինանսական ու տնտեսական սեկտորը:

Երկրի վերնախավում երրորդ ազդեցիկ կենտրոնը նախագահի ընտանիքն է, որտեղ առանցքային դեր են կատարում մի կողմից նախագահի հորեղբայրը՝ Ջալալ Ալիևը և նրա քույրը՝ Սևիլ Ալիևան: Վերջիններս, ըստ էության, մարգինալացված են գործում, որովհետև ժամանակին նրանք կասկածի տակ էին դրել Իլհամ Ալիևի իշխանությունը: «Ընտանիքի» կլանի «ռեֆորմիստական» ճյուղը առաջնորդում է երկրի առաջին տիկին Մեհրիբան Ալիևան և բաղկացած է վերջինիս ազգականներից ու թիմակիցներից:

*Հիմնական հետևություններ. հայացք հայաստանյան իրականությունից*

Միջազգային ճգնաժամային խումբը միակ միջազգային հեղինակավոր կազմակերպությունը չէ, որ իր տարեկան զեկույցներում, մեղմ ասած, բավական «տխուր» վիճակ է արձանագրում ադրբեջանական ներքին քաղաքական, տնտեսական ու հասարակական զարգացումներում: Միջազգային վարկանիշային հեղինակավոր կազմակերպությունների հետազոտություններից կարելի է նկատել, որ ի տարբերություն իր հարևան հարավկովկասյան և ԱՊՀ անդամ-հանրապետությունների, առհասարակ, Ադրբեջանի վարկանիշային ցուցանիշները բավական ցածր են քաղաքական, տնտեսական, ժողովրդավարության, պետության կառավարման և այլ վարկանիշավորման աղյուսակներում: Միջազգային կազմակերպությունների կողմից ներկայացվող վարկանիշային զեկույցների և ուսումնասիրությունների արդյունքները ցույց են տալիս, որ վերջին տարիների կտրվածքով տարբեր վարկանիշային թեմատիկ ուղղություններում Ադրբեջանի ցուցանիշները, որպես կանոն, ԱՊՀ անդամ-երկրների շարքում զբաղեցնում են միջնամասային դիրքեր և գերազանցապես զիջում են հարավկովկասյան մյուս երկու հանրապետությունների՝ ՀՀ-ի ու Վրաստանի արդյունքներին: Բերենք մի քանի օրինակներ. ԱՄՆ-ի առաջատար ու հեղինակավոր «ուղեղային կենտրոններից» մեկի՝ «Հերիթիջ ֆաունդեյշըն»-ի (The Heritage Foundation) և «Ուոլ սթրիթ ջորնըլ» (The Wall Street Journal) օրաթերթի կողմից իրականացվող «Տնտեսական ազատության ինդեքս» վարկանիշային 2009 թ. հետազոտության տվյալներով, ԱՊՀ անդամ-պետությունների ցուցակում Ադրբեջանը զբաղեցնում է 5-րդ հորիզոնականը՝ զեկույցում ներառված 183 երկրների շարքում տեղաբաշխվելով 99-րդ դիրքում: Ի տարբերություն զեկույցում ներառված ԱՊՀ առաջատար երկրների՝ ՀՀ-ի, Վրաստանի (այժմ՝ ԱՊՀ նախկին անդամ), Ղազախստանի ու Ղրղզստանի, որոնք բոլորն էլ դասակարգվում են միջին ազատության աստիճանավորման մեջ, Ադրբեջանը գտնվում է հիմնականում ոչ ազատ երկրների ցուցակում՝ արձանագրելով ԱՊՀ անդամ-պետությունների շարքում հիմնականում ոչ ազատ աստիճանավորման դասակարգման մեջ լավագույն արդյունքը: 2009 թ. հունիսի վերջին լույս տեսավ «Ֆորին Փոլիսի Մեգազին» ամսագրի ու «Ֆանդ ֆոր Փիս» կազմակերպության «Ձախողված երկրների ինդեքսը» (Failed States Index) վարկանիշային նախագծի 2009 թ. զեկույցը, որտեղ Ադրբեջանը, ինչպես և կազմակերպության նախորդ


Ալի Ինսանով

զեկույցներում, հիմնականում պահպանում է իր արդյունքը՝ ԱՊՀ երկրների շարքում զբաղեցնելով միջնամասային դիրքեր: 2009 թ. զեկույցում Ադրբեջանը զբաղեցնում է 56-րդ հորիզոնականը՝ 84,6 միավորով: Ինչ վերաբերում է ՀՀ-ին, ապա ինչպես և «Ձախողված երկրների ինդեքսը» վարկանիշային նախորդ հետազոտություններում (2006-2008 թթ.), այնպես էլ 2009 թ. զեկույցում ՀՀ-ն ԱՊՀ երկրների շարքում առաջատար դիրք է զբաղեցրել:

Մյուս կողմից, սակայն, պետք է նշել, որ, ցավոք, առայսօր միջազգային այդ և այլ հեղինակավոր կազմակերպություններից գրեթե ոչ մեկը չարձանագրեց, որ Ադրբեջանի կայունությունը խորապես պայմանավորված է ոչ միայն երկրի զուտ ներքին զարգացումներով, այլև վարած արտաքին քաղաքականությամբ: Իսկ ավելի ստույգ, Ադրբեջանի քաղաքական կայունությունը զգալիորեն կախված է հարավկովկասյան տարածաշրջանային ռազմաքաղաքական գործընթացների անվտանգության ու կայունության ապահովման հիմնահարցերից: Կրկին ցավով պետք է նշել, որ այդ միջազգային կազմակերպություններից որևէ մեկը չամփոփեց իր հաշվետվություններում ու զեկույցներում, որ Ադրբեջանում տեղի ունեցած յուրաքանչյուր նախընտրական գործընթաց էապես ապակայունացնում է հայ-ադրբեջանական բանակցային գործընթացն ու դրանով իսկ վտանգում տարածաշրջանային կայունությունը, և այդ համատեքստում Ադրբեջանում կայանալիք նոյեմբերյան խորհրդարանական ընտրությունները հեռու են բացառություն լինելուց: Միևնույն ժամանակ, սակայն, Բաքվի ագրեսիվ քաղաքական կեցվածքը չպետք է կապել միայն նախընտրական արշավներով, քանզի ՀՀ, ԼՂՀ նկատմամբ Իլհամ Ալիևի ցուցաբերած ագրեսիվությունը դարձել է ավանդույթ՝ երկրում միապետության ու սեփական կլանային վերնախավի դիրքերի պահպանման համար: Եվ խորը վերլուծությունից հետո դժվար է պատկերացնել, որ ադրբեջանական կողմը, չնայած հայ-ադրբեջանական, ԼՂՀ-ադրբեջանական շփման գծում հրադադարի ռեժիմի՝ իր կողմից հաճախակի խախտումներին, լուրջ քայլեր կձեռնարկի ղարաբաղյան հիմնահարցը ռազմական ուղով լուծելու հարցում՝ մի քանի հիմնական պատճառներից ելնելով. նախ՝ Իլհամ Ալիևը հստակ գիտակցում է, որ իր կողմից ռազմական գործողությունների վերսկսման հնարավորության դեպքում վերջինիս «լոյալ» թիմակիցների մեծ մասը վայրկյան անգամ չի մտածի ի վերջո իշխանափոխություն իրականացնելու և ազատվելու շահի տիրապետությունից: Այն է՝ պատերազմի վերսկսման պարագայում Ադրբեջանի ներքաղաքական իրադրությունը կհայտնվի ճգնաժամային վիճակում՝ ընդհուպ մինչև քաղաքացիական բախումներ: Երկրորդ՝ Իլհամ Ալիևը, չկարողանալով իր նախագահության տարիներին երկրում իրականացնել լուրջ սոցիալ-տնտեսական բարեփոխումներ, մեծապես կորցրել է հասարակության վստահությունն ու աջակցությունը, և պատերազմի դեպքում դեռ պարզ չէ, թե ինչ դիրքորոշում կընդունի հասարակության մեծ մասը: Եվ երրորդ, ռազմական գործողությունների վերսկսումը վերջակետ կդնի Իլհամ Ալիևի ու նրա թիմակիցների՝ նավթադոլարներից ստացվող եկամուտների հոսքերին, որոնք առայսօր հանդիսացել են Իլհամ Ալիևի իշխանության պահպանման առանցքային նախադրյալներից մեկը:

Այս ամենից հետո, իսկապես, կարելի է շրջանառության մեջ դնել ավելի շուտ ոչ թե սույն զեկույցի «Ադրբեջան. խոցելի կայունություն», այլ՝ «Ադրբեջան. կայուն խոցելիություն» խորագիրը:



# ԱՏԵԼՈՒԹՅԱՆ ԱՆԱՏՈՄԻԱ. ՃՇՄԱՐՏՈՒԹՅՈՒՆ ՍՏԱԼԻՆԻ ՄԱՍԻՆ

Հայկ Մարտիրոսյան



Այս պատմությունը վեր է հանում Իոսիֆ Ստալինի մասին շատերիս անհայտ բացառիկ էջեր, որոնք պարզ ու հասկանալի հավաստում են, թե ինչո՞ւ էր ժողովուրդների հայրը այդքան ատում հայերիս, ինչո՞վ էինք արժանացել նրա անբարյացակամ վերաբերմունքին: Այս պատմության համար որպես սկիզբ դիմենք բոլշևիկների կայսրության կազմավորման շրջանի տարեգրությանը: Հայկական հարցի բարենպաստ լուծման միամիտ ոգևորությունը շատ արագ տեղի էր տալիս իրատես հիասթափությանը, որպեսզի հաջորդ օրն իսկ նորից բռնենք անհայտի արահետն ու կրկին փորձենք հենարան ու հովանավոր գտնել:

Արևմուտքից դաժանորեն խաբված, մենք՝ հայերս, հայացքը հառել էինք համայնավարների նորելուկ կառավարությանը՝ Լենինին ու Ստալինին, իսկ նրանք էլ մեզ անաստվածաբար խաբում էին: Այսօր որոշ պատմաբաններ, այդ թվում և մեր հայրենակիցներից, փորձում են համոզել, որ ոչ վաղ անցյալի այդ երկու կուռքը հայերի հանդեպ ոչ մի վատ մտադրություն չունեին և եթե մեր երկիրը ծախեցին և մեր հաշվին լավ հարաբերություններ այլոց հետ հաստատեցին, ապա միայն ու միայն՝ ոչ իրենց մեղքով: Իբր հանգամանքներն էին մեղավոր:

Այդպե՞ս է, արդյոք:

Հայաստանի և հայության հանդեպ Խորհրդային Ռուսաստանի վարած քաղաքականության ձևավորման և իրականացման վրա կուսակցական ընդհանուր շահերից բխող դիրքորոշումից զատ վճռական գործոնի դեր է խաղացել նաև անձնական վերաբերմունքի գործոնը: Կուսակցական, պետական առանձին գործիչները և նրանց շրջապատող մարդկանց խմբերը իրենց



Չիչերին

խիստ անձնականացված վերաբերմունքն այդ հարցում քողարկում էին կուսակցական պարտականությունների ծածկույթով:

Այս առումով հստակ առանձնանում են երեք խումբ. հրեական՝ Պարվուսը, Տրոցկին, Ռադեկը, Գենեցկին և ուրիշներ, որոնք հենվում էին անձամբ Լենինի վրա, Ստալինի վրացական խումբը՝ Օրջոնիկիձեն, Էլիավան, Մդիվանին և այլք, և վերջապես՝ ադրբեջանական ազգային կուսակցական խումբը՝ Նարիման Նարիմանովի գլխավորությամբ, որի հենարանը Թուրքիան էր և որը միշտ էլ, անհրաժեշտ պահին, խաղարկվել է Ստալինի կողմից:

Հիշյալ երեք խմբից յուրաքանչյուրն ուներ հայկական պետականության վերացմանն ուղղված քաղաքականության իր սեփական դրդապատճառները:

Հրեական խմբի բացասական ազդեցությունը հայկական հարցի վրա ցայտուն արտահայտվեց դեռևս գերմանա-թուրքական ագրեսիայի՝ Արևմտահայաստանի վերացման և հայկական ցեղասպանության տարիներին, դրան հաջորդած շրջանում, երբ խորհրդային կառավարությունը հրաժարվեց ռուսական ավանդական մարդասիրության սկզբունքներից: Հետագայում Խորհրդային Ռուսաստանում խափանարար կեցվածքը հայկական հարցում հիմնականում զուգադիպեց Ստալինի անվան հետ:

Հայ-թուրքական հարաբերությունների վերաբերյալ խորհրդային արտաքին քաղաքականության մեջ Ստալինի և նրա մարդկանց ծրագրերը հաճախ բախվում էին արտգործժողկոմխսարիատի և նրա ղեկավար Գեորգի Չիչերինի ջանքերին: Ազնվական ծագման տեր Չիչերինը այդ ժամանակ խորհրդային արտաքին քաղաքականության ասպարեզում միակ պրոֆեսիոնալն էր: Նրա պահվածքը բացատրվում էր նախ պանթուրքիզմից բխող վտանգի գիտակցմամբ, անշուշտ նաև այն հանգամանքով, որ Ազգերի լիգան դեռևս որոշակի հետաքրքրություն ուներ հայերի ճակատագրի հանդեպ:

Իշխանության լծակներին տիրանալու Ստալինի ձգտումը իրականացավ դեռևս Լենինի հիվանդության ժամանակ: Բոլշևիկների ստեղծած համակարգը հնարավորություն էր տալիս Ստալինին լիովին դրսևորել միահեծան բռնակալի իր հակումները, փառասիրությունը, կարիերիզմը:

Իշխանական վերին օղակում որքան ամրապնդվում էր Ստալինը, այնքան Կովկասի և հարակից շրջանների նկատմամբ երկրի քաղաքականությունը դառնում էր նրա մենաշնորհը: Հակահայկական գիծը Ստալինն անշեղորեն իրականացնում էր իր մարդկանց միջոցով:

Առաջին հերթին պետք էր ազատվել իրեն խանգարող կադրերից: Եվ ընտրությունը կանգ առավ արտաքին գործերի ժողովրդական կոմիսարի տեղակալ, հայազգի Լևոն Կարախանի վրա: Դեռևս 1919 թվականի օգոստոսին Ստալինն առաջ քաշեց այդ պաշտոնում «հայ» Կարախանին ադրբեջանցի Նարիմանովով փոխարինելու իր «վաղեմի տարբերակը»:

Չիչերինին գրած նամակում Ստալինը հայտարարում է «խորհրդային այսպես կոչված «մուսուլմանական քաղաքականությանը» արտգործժողկոմատի պատասխանատու աշխատակիցների բացարձակ անհամապատասխանության» մասին: Ըրպես իր ասածի հիմնավորում նա պնդում էր, որ «արտգործժողկոմատի կազմում Կարախանի՝ միակ արևելքցու, ծագումով այդ հայի ներկայությունը, որը պետք է արտաքին աշխարհին ներկայացնի արևելյան ժողովուրդներին՝ ականջ է ծակում և խախտում մեր արևելյան քաղաքականության ներդաշնակությունը, թուլացնում մեր քաղաքականության ուժն ու արդյունավետությունը Արևելքի ժողովուրդների և ամենից առաջ բոլոր մուսուլմանների աչքում»: Լենինին առաջարկելով «Կենտկոմում հարց բարձրացնել Կարախանին մուսուլմաններից որևէ մեկով, թեկուզև կուսակցական միջին պատրաստվածության տեր մեկով փոխարինելու մասին», Ստալինը նպատակահարմար է գտնում ադրբեջանցի Նարիմանովի թեկնածությունը: Նա կարևոր չի համարում ոչ այն, որ «Նարիմանովը չունի քաղաքական լայն տեսադաշտ», ոչ էլ



այն, որ այդ նշանակումը կարող էր Հնդկաստանի կողմից բացասաբար ընդունվել: «Եթե Հնդկաստանում փոքրամասնություն կազմող մուսուլմանների և մեծամասնություն կազմող մնացած ազգաբնակչության միջև անհաշտ հարաբերությունները իրոք դեր են խաղում, կամ կարող են խաղալ, ապա այդ հանգամանքը չի խոսում Նարիմանովի կամ որևէ այլ մահմեդականի դեմ, այլ այն մասին, որ Նարիմանովից բացի և նրա կողքին անհրաժեշտ է ունենալ ևս մեկ կամ երկու ռուսի, կամ ընդհանրապես «արևելյան» խնդիրներով զբաղվող աշխատակցի, բայց ոչ մի դեպքում՝ հայի»:

Ստալինն ամեն ինչ անում էր, որ հայերին զրկի իրենց իսկ շահերը անմիջականորեն պաշտպանելու որևէ հնարավորությունից և հիմնավորելու Ռուսաստանի իսկական շահերը հայ-թուրքական հարաբերությունների ծիրում: Ի վերջո նա հասավ Մոսկովյան կոնֆերանսում խորհրդային պատվիրակության կազմից Կարախանի հեռացմանը: Ոչ մի հայ իրավունք չստացավ մասնակցել հայկական հարցում որոշումներ կայացնելու գործընթացին: Հայերի շահերի պաշտպանությունը հանձնարարվեց վրացի և ադրբեջանցի ազգայնամոլ գործիչներին: Իսկ տեղական մակարդակներում էլ Ստալինը հանդուրժում էր այն հայերին, ովքեր իր ցուցումներով պաշտպանում էին թուրքերի և թուրք-ադրբեջանցիների շահերը:

Այն, ինչ Ստալինը ներկայացնում էր որպես «մեզ համար ընդունելի համապատասխանություն մեր քաղաքական գծի և այն իրագործող անձնակազմի միջև», իրականում հետևողականորեն Ռուսաստանյան Դաշնության արտաքին հարաբերությունների ոլորտի ղեկավարական աթոռներին իր հայրենակից վրացիներին նստեցնելն էր, որոնք, ճիշտ է, մահմեդական չէին, բայց այս դեպքում դա կարևորություն չուներ:

Ստալինը Չիչերինին ավելի ու ավելի էր դուրս մղում արևելյան կոչված, բայց իրականում հայերին վերաբերող խորհրդային քաղաքականությունից:

Քեմալականների հետ բանակցություններում որոշում կայացնողները բացառապես Ստալինն ու իր մարդիկ էին:

Չիչերինի և նրա ղեկավարած գերատեսչության փորձերը՝ բոլշևիկների կառավարության դիրքորոշումը Հայկական հարցում նվազագույնս գոնե ընդունելի դարձնել հայերի համար, բախվում էին Ստալինի և նրա խմբի ձեռնարկած հակաքայլերին: Չիչերինի քաղաքականությունը առաջիններից էր, որ դարձավ ստալինականների անառողջ քննադատության թիրախը:

1921 թվականի փետրվարի 12 տարեթվով Լենինին հասցեագրված նամակով Իոսիֆ Ստալինը շեշտում է. «Ընկ. Լենին, ես միայն երեկ իմացա, որ Չիչերինը իսկապես մի տխմար (և պրովոկացիոն) պահանջ է ներկայացրել թուրքերին՝ Վանը, Մուշը և Բիթլիսը (թուրքական գավառներ՝ թուրք բնակչության իսկայական գերակշռությամբ) մաքրելու թուրքերից՝ հօգուտ Հայաստանի: Հայկական իմպերիալիստական այդ պահանջը չի կարող մեր պահանջը լինել: Պետք է արգելել Չիչերինին նման հայտագրեր ուղարկել թուրքերին՝ ազգայնականորեն տրամադրված հայերի թելադրանքով: Ստալին»:

Հատկանշական է որ թուրքական պատվիրակության Մոսկվա ժամանելու և Ստալինի հիշյալ նամակի տարեթվերը համընկնում են: Զուր չէ, որ այն ժամանակվա թուրք գործիչները պատմում են, թե լուրջ դժվարությունների հանդիպելիս անհապաղ դիմում էին Ստալինի օգնությանը:

Ստալինի դիրքորոշումը Հայկական հարցում բխում էր ոչ այնքան նրա բոլշևիկյան աշխարհայացքից, և միջազգային հարաբերություններում թելադրողի դերը զավթելու երազանքից, այլ, ըստ իս, շատ հասկանալի, մեր օրերում ևս կենսունակ վրացական ազգայնամոլությունից: Քչերը գիտեին, որ խորհրդային ինտերնացիոնալիզմի դասական ներկայացուցիչ Ստալինը իրականում, սրտի խորքում նախանձոտ ազգայնամոլ էր: Դա հատկապես դրսևորվում էր հայամերժության մեջ: Չնայած աշխարհում դժվար թե գտնվեն այնքան շատ ընդհանրություններ ունեցող երկու ժողովուրդ, որոնց առաջընթացն իսկ պահանջում է միշտ կողք-կողքի լինել, վրացական անհասկանալի հայատյացությունը միշտ էլ օրախնդիր է եղել:

Ստալինի հակահայ կեցվածքի շատ պատճառներ են այսօր հրապարակ հանվում: Ամենատարածվածը վրեժխնդրության տարբերակն է: Ռուսական աղբյուրներում բազմաթիվ հղումներ կան այդ վարկածին: Բերենք երկու օրինակ: 1995 թվականին լույս ընծայած «Բռնապետի դիմանկարը» գրքում ռուս վերլուծաբան Անտոնով-Օվսեենկոն գրում է. «Ապագա գլխավոր քարտուղարը շատ էր նեղվում ապօրինածնի իր ծագումից, հարուստ կամ անվանի պարոնի անօրինական որդուն վրացիները անվանում են նաբիջվարի և այդ կարգավիճակը Ստալինին նվաստացնում էր, չարացնում:

Կասկածելի ծագման բեռը Ստալինը կրել է ողջ կյանքում: Մի անգամ 1927 թվականին, ժամանելով Թիֆլիս և կայարանում դիմավորողների մեջ տեսնելով իր մորը, բացականչել է. «Դո՞ւ էլ ես այստեղ, բոզ»:

Ստալինի առանձնատունը Կոջորում բավական մեծ էր: Զինակիցները հավաքվում էին մեծ սենյակում, որը միանում էր նրա աշխատասենյակին: Այդ օրն այնտեղ էր Վրաստանի Կենտգործկոմի նախագահ Ֆիլիպ Մախարաձեն: Տեսնելով իր մորը՝ Կոբան որոշեց ծաղրել նրան. «Էս ինչ բան է, Ֆիլիպ, դեռ շինո՞ւմ էս այդ պառավ բոզին»: Մախարաձեն թքեց, շուռ տվեց աթոռը և դուրս եկավ աշխատասենյակից: Մեծ սենյակում, որն այն ժամանակ խճողված էր իրերով, նա ազատություն տվեց իր զգացմունքներին. «Սա ի՞նչ գլխավոր քարտուղար է: Սա ընդամենը անտաշ կինտո է»:

Ստալինը երբեք բաց չի թողել իր մորը հրապարակավ նվաստացնելու առիթը: Վերջին անգամ նա մորը տեսել էր 1935 թվականին, Թիֆլիսում: Եկատերինա Գեորգիևնան մահացավ 1937 թվականի ամռանը, 82 տարեկան հասակում: Գլխավոր քարտուղարը չեկավ նրա թաղմանը: Ստալինը, ինչպես պնդում են նրա ծագումնաբանության ջատագովները, հայ է եղել»:

Մեջբերենք նաև մի հատված Ալեքսանդր Լապշինի 1997 թվականին լույս ընծայած «Ճակատագրական գոտեմարտ» գրքից. «Իոսիֆի մայրը՝ Եկատերինա Գեորգիևնա Գելաձեն, որին Քեթո կամ Քեկա էին անվանում, ծնվել և մեծացել է Գորիում՝ աղքատ հայ ընտանիքում: Ինչու հայ, եթե ազգանունը վրացական է: Գորիում հնուց ի վեր հայեր են ապրել՝ մինչև հիմնուն տոկոս, ժամանակի ընթացքում նրանք վրացացել են՝ կորցնելով իրենց լեզուն, սովորույթները, անունն ու ազգանունը: Օրինակ՝ Մուրադելի (Մուրադյան), Պալիաշվիլի (Պալյան): Քեթոն իր ապրուստը վաստակում էր հարուստների տներում աշխատելով որպես աղախին: Ծառայել է նաև մի հարուստ թիֆլիսահայի՝ կոշիկի գործարանատեր Աղելխանովի տանը: Նրանից էլ ունեցել է Իոսիֆին:



Տրոցկու հետ և առանց Տրոցկու...

Չցանկանալով, որ հայտնի դառնա իր կապը սպասուհու հետ, գործարանատերը Քեթոյի համար շտապ ամուսին է գտնում՝ իր ֆաբրիկայի բանվոր, նույնպես հայ, կոշկակար Վիսարիոն Ջուղաևին, որին պատկառելի գումար է վճարում իղի Քեթոյի հետ ամուսնանալու համար: Այնպես որ Ստալինը հայ էր, հայեր էին թե նրա մայրը, թե հայրը, թե խսկականը և թե դրածոն: Վաղ տարիքից Իոսիֆը մերժված էր, նրա հասակակիցները փողոցով մեկ բղավում էին. «Բոզ Քեթո, բոզ Քեթո»: Եվ չէին խաղում նրա հետ»:

Եվս մեկ վկայություն՝ այս անգամ սկզբնաղբյուրը հայ պատմաբան Մկրտիչ Ներսիսյանի որդին՝ Էմին Ներսիսյանն է. «Շատ տարիներ առաջ ծնողներիս հարևանը՝ ակադեմիկոս Լյուդվիգ Միրզոյանը պատմել է, որ մանուկ Իոսիֆ Ջուղաևին Ցխինվալ քաղաքի հայկական եկեղեցում կնքել է քահանա Սահակ Տեր-Խախանյանցը՝ Վիկտոր Համբարձումյանի մայրական պապը: Դա այսօր հաստատում է Բյուրականի Վիկտոր Համբարձումյանի տուն-թանգարանի տնօրեն, աստղաֆիզիկոս Գրիգոր Բրուտյանը: Այդ փաստը չեն ժխտում նաև Համբարձումյանների ընտանիքում, անգամ լրացնում են որոշ մանրամասներ»:



Երիտասարդ Ստալինը

Իր կյանքի այդ շրջանի մասին Ստալինը նախընտրում էր չծավալվել: Կենսագիրներն էլ շատ հպանցիկ էին անդրադառնում առաջնորդի վաղ շրջանի մանկությանը: Խորհրդային ժողովրդին ներկայացված, հենց Ստալինի կողմից հրատարակչություններին հանձնարարելի համարված կենսագրության պաշտոնական տարբերակում մի քանի ժլատ տողով էին ներկայացվում այդ տարիները. «Ստալին (Ջուղաշվիլի) Իոսիֆ Վիսարիոնովիչը ծնվել է 1879 թվականի դեկտեմբերի 21-ին Թիֆլիսի նահանգի Գորի քաղաքում: Նրա հայրը՝ Վիսարիոն Իվանովիչը, ազգությամբ վրացի, ծագումով Թիֆլիսի նահանգի Դիդի-Լիլո գյուղացի էր, զբաղմունքով կոշկակար, հետագայում Թիֆլիսի Ադելխանովի կոշիկի գործարանի բանվոր: Մայրը՝ Եկատերինա Գեորգիևնան, Գամբարեուլի գյուղի ճորտ գյուղացի, Գելաձեի ընտանիքից: 1888 թվականի աշնանը Ստալինն ընդունվեց Գորու հոգևոր ուսումնարանը»:

Այսքանը ընդամենը: Այսքանի մեջ չտեղավորվող մանրամասնությունների մասին խոսելը վտանգավոր էր: Անգամ լեգենդար Կամոյի համար:

Ընկերական շրջապատից զուրկ Սոսոյի համար Սիմոնը թերևս միակ ընկերն էր, որի հետ լախտի էին խաղում, փող վաստակելու փնտրտուքի մեջ թափառում Գորիի փողոցներում, երբեմն էլ գողություն անում: Սիմոնը այն եզակիներից էր, որ ամեն ինչ գիտեր Սոսոյի և նրա ծնողների մասին: Եվ ահա, տարիներ անց, Լենինի կողմից Կամո կնքված պրոֆեսիոնալ այդ հեղափոխականը, իրականում աներևակայելի համարձակության տեր բախտախնդիր մեկը, 1922 թվականին Թիֆլիսում հեծանիվով բախվում է բեռնատարին ու մահանում: Այդ խորհրդավոր պատմության մանրամասնությունները ևս չկան: Վերծանման բանալի կարելի է համարել թիֆլիսցիներին քաջածանոթ կատակը՝ «Այդ ժամանակ մեր քաղաքում ընդամենը մի բեռնատար կար և ընդամենը մի հեծանիվ...»:

Հայերի հանդեպ Ստալինի անբարյացակամության արմատները փնտրելն այսօր անիմաստ զբաղմունք է, մանավանդ երբ առանձնապես մեծ պատիվ էլ չէ արյունոտ ձեռքերով և խղճով նման եղկելի մեկին սեփական ազգից համարելը: Վարկածներից յուրաքանչյուրը՝ ծագումնաբանական վրեժխնդրությունը լինի, վրացական անժխտելի հայամերժությունը, թե պարզապես բոլշևիկյան դաժանության դրսևորումը, թեր ու համոզիչ կողմեր ունի:

Անժխտելին ու իրականը Ռուսաստանի անունից մեր ժողովրդի հանդեպ Ստալինի ու նրա մարդկանց իրագործած լկտի, դաժան ու հետևողական քաղաքական խաղերն էին, որ բախտորոշ եղան մեզ համար: Իր ձեռքում կենտրոնացնելով Խորհրդային Ռուսաստանի արևելյան քաղաքականության բոլոր լծակները, Ստալինը հենվում էր իր առաջ քաշած կադրերի վրա: Կովկասում դա Սերգո Օրջոնիկիձեն էր՝ Ռուսաստանի կոմկուսի Կենտկոմի Կովկասյան բյուրոյի ղեկավարը, կուսակցական և կառավարական բոլոր առանցքային օղակների տնօրինողը:

1920 թվականի հունիսի 8-ին Ստալինի մեկ այլ հայրենակից՝ Էլիավան ստանում է քեմալական Թուրքիայում Ռուսաստանի դիվանագիտական և զինվորական ներկայացուցչի պաշտոնը: Որոշ ժամանակ անց, չնայած Չիչերինի վրդովմունքին, Էլիավային փոխարինեց մեկ այլ վրացի՝ Մդիվանին, որն իր հովանավոր թուրքամետ ծրագրերն իրագործելու համար խիստ անհրաժեշտ տեղեկություններ էր հայթայթում: Ստալինի այդ դրածոյի մասին Չիչերինը անաչառ կարծիք է հայտնել՝ «Նա շատ հեշտ է թուրքերին տեղի տալիս և վերջին շրջանում այդ պատճառով շատ անտակտություններ է թույլ տվել»:

Այդ ոլորտում Ստալինի մեկ այլ դրածո՝ Ադրբեջանի Հեղկոմի նախագահ Նարիման Նարի-



Ռակովսկի և Տրոցկի

մանովը Լենինին գրած իր հաշվետվություններում արդարացնում էր թուրքերի հարձակումը Հայաստանի վրա, գրեթե բառացիորեն կրկնելով այն նույն հիմնավորումները, որ ներկայացնում էր Թուրքիան:

Օսմանյան կայսրությունում Հայոց ցեղասպանության մասին պատմող իր մեծարժեք գրքում մեր հայրենակից, պրոֆեսոր Յուրի Բարսեղովը Ստալինի հայատյացության առաջին դրսևորումը համարում է Թուրքահայաստանից ռուսական զորքերի դուրս բերումը:

Ազգությունների գծով ժողովրդական կոմիսարի պաշտոնում Ստալինը 1917 թվականի դեկտեմբերի 29-ին Լենինի հետ ստորագրեց Ժողկոմխորհի դեկրետը Թուրքահայաստանի անկախության մասին: Փաստաթուղթը, որ կարծես կոչված պիտի լիներ ոգևորելու հայերին, իրականում Արևմտահայաստանի դամբանականի դեր խաղաց: Որպես հայերի ինքնորոշման ազատ կամքի երաշխիք այդ դեկրետով որոշվեց ռուսական զորքերը դուրս հանել Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ ռուսների գրաված Թուրքահայաստանի տարածքից՝ իբր հնարավորություն ընձեռելով այդ հողերի պատմականորեն սեփականատեր հայերին իրենց տնօրինելու դրանց ճակատագիրը:

Ստալինյան այդ ծրագրի իրականացման համար բոլշևիկները շատ համառ ջանքեր գործադրեցին: Այն որպես պարտադիր իրագործում պահանջող խնդիր ներկայացվեց նախ Ժամանակավոր կառավարությանը, իսկ երբ իրենք իշխանության հասան, առանց ժամանակ կորցնելու իրականացրին: Առաջին աշխարհամարտին մասնակից բոլոր երկրներին կոչ անելով զորքերը դուրս բերել գրավյալ տարածքներից, Ռուսաստանը փորձեց օրինակ ծառայել մյուսներին, առաջինն ինքը զորքերը հանելով իր նվաճած տարածքից, հույս ունենալով, որ Գերմանիան և նրա դաշնակիցները կհետևեն իրեն:

Հայերիս անդառնալի, ծանր կորուստներ պատճառած դավաճանական այդ քայլով, սակայն, Ռուսաստանը հարվածեց նաև ինքն իրեն: Ստորագրելով «խաղաղության պայմանագիր» հորջորջված փաստաթուղթը, Ռուսաստանը Արևմտահայաստանից հետո կորցրեց նաև Մերձբալթյան երկրները, Ուկրաինան և Ռուսաստանի եվրոպական մասի զգալի մի հատված:

Հայերի դեմ Ստալինի նյութած դավադրության արդյունքում բոլշևիկները հույս ունեին Թուրքահայաստանից հանված զինորական ուժն օգտագործել որպես Կովկասյան հեղափոխության պատվար, սակայն ռուս զինվորների մեծ մասը այդպես էլ հայրենիք չհասավ: Ադրբեջանի Շամխոր կայարանում նրանց թուրքավարի մորթեցին, և նպատակը ոչ այնքան զինամթերքի թալանն էր, ինչպես կատարվածը ներկայացվեց: Պարզապես Արևմտահայաստանը սկուտեղի վրա նվեր ստացած թուրքերը չցանկացան, որ մարտերում թրծված ռուսական այդ զորքը տիրանա Բաքվին:

Ռուսաստանի արևելյան դիվանագիտության փաստացի ուղղորդող Ստալինը չէր կարող չհասկանալ, թե զորքերը Արևմտահայաստանից դուրս հանելը ինչ հետևանքների կհանգեցնի: Իր վրացի և ադրբեջանցի դրածոներից նա ստույգ տեղյալներ ուներ, որ պատերազմական գործողություններից հետո եղեռնից փրկված հայերի բեկորները ձգվում են դեպի պատմական հայրենիք, վերադարձած հայերի օջախները նորից սկսել էին ծխալ հայրական շեմերի ավերակների վրա: Նրանց պաշտպանել էր պետք, սակայն դրան կոչված քաղաքական ուժը ամենավճռական պահին նրանց դավաճանեց: Ռուսները բարոյական պարտք ունեին հայերի հանդեպ: Թուրքերը հայերին իրենց բնօրրանում բնաջնջեցին՝ առաջին աշխարհամարտում ռուսական ուժերի դաշնակիցը լինելու մեղադրանքով: Եվ ահա, ստալինյան այն դրույթը, թե այդ հողերից ռուսական զորքերի հետկանչը անհրաժեշտ է «հայերին՝ կամքի ազատ ընտրության համար», անամոթ սուտ էր:

Կովկասյան գործերով խորհրդային կառավարության արտակարգ կոմիսար Ստեփան Շա-

հումյանը «Կավկազսկի ռաբոչի» թերթի 1917 թվականի դեկտեմբերի 20-ի համարում տագնապ է հնչեցնում. «Ռուսական զորքերի անակնկալ ետքաշումը Թուրքահայաստանում ստեղծում է ծայրաստիճան ծանր իրավիճակ: Մենք արդեն գիտենք այդ անիծյալ պատերազմում հայերի հարյուր հազարավոր զոհերի մասին... Իմանալով այդ դժբախտ երկրում առկա իրավիճակը, մենք պետք է համոզված լինենք, որ այնտեղ նոր դժոխք է ստեղծվում, որի պատճառով կհոսեն անմեղ բնակիչների արյան նոր գետեր: Մեր հեղափոխական բանակը չի կարող անտարբեր մնալ այդ մարդկանց ճակատագրի հանդեպ: Ռուսական զորքը Թուրքահայաստանում պահելն է այնտեղ վերադարձած մարդկանց անվտանգության միակ երաշխիքը»:

Ռուսական զորքերը Արևմտահայաստանում թողնելու խնդրի կարևորությունը բոլշևիկյան կառավարությանը համառորեն փորձում էր հասկացնել բանաստեղծ Վահան Տերյանը: 1917 թվականի նոյեմբերին նա ժողովրդական կոմիսարների խորհրդին է ներկայացնում Թուրքահայաստանի մասին մի զեկուցագիր, որը բանաստեղծի՝ լավատեսությամբ տոգորվածության խիկական դրսևորում է. «...1914 թվականի հունվարի 26-ին ստորագրված ռուս-թուրքական համաձայնագրից հետո, որ հայկական վիլայեթներում չափազանց էական ռեֆորմ էր մտցնում, հայերը կարող էին հույս տածել, որ ավել կամ պակաս բարենպաստ պայմաններում այդ ռեֆորմի բնական հետևությունը կլիներ ինքնավար Հայաստանի ստեղծումը, և դա հայերին իսկական ազգային ինքնորոշման հնարավորություն կտար»:

1914 թվականի մայիսին հայերը ձեռնամուխ եղան Հայաստանի կառուցմանը նոր հիմունքներով՝ համաձայն Ռուսաստանի և Թուրքիայի միջև նույն թվականի հունվարին կնքված պայմանագրի, բայց վերահաս պատերազմը վերջ դրեց ամեն ինչին: Թուրքիան, խառնվելով պատերազմին, անմիջապես վերացրեց Ռուսաստանի հետ կնքած համաձայնագիրը Հայաստանի վերաբերյալ: Վերացվեցին նաև այն բոլոր արտոնությունները, որոնցից վաղուց ի վեր օգտվում էին հայերը որպես կրոնական համայնք:

Ամբողջովին պանիսլամիզմի գաղափարով տոգորված երիտասարդ թուրքերի կառավարությունը, հայկական չարաբաստիկ հարցից մեկընդմիշտ ազատվելու պատրվակ որոնող Էնվերի ու Թալեաթի տիպի իմպերիալիստական երազողների գլխավորությամբ, օգտվեց համաշխարհային հրդեհից, որպեսզի ամենաարմատական ձևով լուծեր հայկական հարցը: Այդ կառավարությունը վճռեց հայերին ֆիզիկական բնաջնջման ենթարկել, որպեսզի դրանով իսկ մեկընդմիշտ վերջ տար Հայաստանի վերաբերյալ հարցին:

Սկսվեց մի կողմից Թուրքահայաստանի խաղաղ և անզեն հայ ազգաբնակչության անողոք բնաջնջումը, իսկ մյուս կողմից՝ հայերի բռնի արտաքսումը Միջագետք, ըստ որում՝ արտաքսումը զուգակցվում էր ոչ միայն հայերի ամբողջ ունեցվածքի կողոպուտով, այլ շատ հաճախ արյունալի դատաստանով, այնպես որ արտաքսվողների կեսից ավելին դաժանորեն ոչնչացվեց մարդասպանների ձեռքով, աքսորավայրը չհասած:

Բնաջինջ արվող ու արտաքսվող հայերի այդ ամբողջ զանգվածից շատ քչերն ազատվեցին: Ամերիկյան միսիոներների վկայությամբ՝ Միջագետքի զանազան կետերում կենտրոնացած են մոտ կես միլիոն հայեր, որոնք հազիվ են քարշ տալիս իրենց խղճուկ գոյությունը:

Ռուսաստան կարողացան փախչել միայն երեք հարյուր հազարից փոքր-ինչ ավելի հայեր, որոնք տեղաբաշխված էին Անդրկովկասի զանազան կետերում՝ սպասելով, թե երբ հնարավորություն կտրվի վերադառնալ իրենց հարազատ օջախները և վերականգնել ավերված տնտեսությունը:

Քանի դեռ Եվրոպայում իշխանությունը գտնըվում է իմպերիալիստների ձեռքին, հայերը չեն կարող բարենպաստ վերաբերմունք հուսալ եվրոպական տերությունների կողմից: Հայտնի է, որ սոցիալիստ Կերենսկու գլխավորած կոալիցիոն կառավարությունը թեպետև խոսքով ընդունեց «Ազգերի ինքնորոշման իրավունքը», բայց հարկ չհամարեց որոշակիորեն ասելու իր մտադրությունը ինքնավար Հայաստան ստեղծելու և հայերին հարազատ օջախները վերադարձնելու մասին:

Եվ ահա հասել է վերջապես ժամանակը, երբ մենք կարող ենք հայ մասսաներին ասել՝ «աջակցեք Բանվորների և Գյուղացիների կառավարությանը և հաստատ հավատացեք, որ նա ձեզ չի խաբի, նա ձեզ կտա ազատություն, որը ապարդյուն ջանում էիք ստանալ մինչև այժմ, հանուն որի այնքան արյուն ու արցունք եք թափել... Ինքնին հասկանալի է, որ այժմ իշխանության գլուխ կանգնած մեր առաջնորդները – ժողովրդական կոմիսարները, աջակցած կլինեին մեզ, եթե հնարավոր գտնեին այժմ իսկ մի դեկրետ հրապարակել, որով հաստատվեր կառավարության հաստատ մտադրությունը՝ վճռականորեն պաշտպանել թուրքահայերի լիակատար ազգային ինքնորոշման ձգտումը... Շատ կարևոր է այժմ իսկ հայտարարել, որ ռուսական զորքերը դուրս չեն բերվի պատերազմի իրավունքով մեր կողմից

գրավված Հայաստանի մասից, մինչև այնտեղ չստեղծվեն անձնական անվտանգության հաստատուն երաշխիքներ, և մինչև այնտեղ նոր կարգ չհաստատվի»:

Զեկուցագրի հետ Տերյանը ներկայացնում է նաև Արևմտահայաստանի մասին դեկրետի իր կազմած տարբերակը և այդ առիթով հանդիպում է Ստալինին: Այս մասին ուշագրավ վկայություն կա բանաստեղծի արխիվում պահպանված մի նամակում, որը Տերյանը 1917-ի նոյեմբերի վերջին գրել է ընկերներից մեկին, ենթադրաբար Պողոս Մակինցյանին: Ինչպես երևում է նամակից, առաջին իսկ հանդիպման ժամանակ Ստալինը անհանդուրժողաբար է վերաբերվել զորքերը տեղում թողնելու Տերյանի առաջարկին: Ահա բանաստեղծի նամակից հատված. «Ստալինն ասաց՝ մենք իսկույն ևեթ կկարգադրենք, որ զորքերը հեռանան և հայերին հնար տրվի ինքնորոշվելու: Ես վիճեցի: Դա ասաց իմ զեկուցագիրը տալու ժամանակ, բայց այսօր երբ արդեն կարդացել էր զեկուցագիրս, ուրիշ կերպ էր խոսում: Լենինին ես բացատրեցի և նա, իհարկե, շատ լավ հասկացավ բանն ինչումն է: Տեսնենք ինչ է լինելու»:

Բանաստեղծի լավատեսությունը սակայն անհիմն էր: Դեկտեմբերի սկզբին՝ Թուրքահայաստանի անկախության մասին Ժողկոմխորհի դեկրետի ընդունումից օրեր առաջ, Տերյանը խոր հիասթափությամբ գրում է, որ «չնայած Լենինը համաձայնվեց բավարարել զորքերը չհանելու հայերի խնդրանքը, բայց և այնպես Ստալինը կատեգորիկ այն մերժեց»:

Ստալինի կողմից Հայաստանի հաշվին քեմալականներին կատարած բացահայտ զիջումները առաջացնում են Խորհրդային Ռուսաստանի արտաքին գործերի ժողովրդական կոմիսար Գեորգի Չիչերինի տարակուսանքն ու դժգոհությունը, սակայն վերջինիս բողոքները արժանանում են Լենինի քար լռությանը:

Անդրկովկասում Ստալինի հանձնակատարների խայտառակ պահվածքը խարխլեց հայերի դիրքերը, հակահայ տրամադրություններն այնքան ակնբախ էին, որ Ղարաբաղում և Զանգեզուրում գտնվող 11-րդ բանակի սպայական կազմը այդ տարածքներում բացարձակապես անտեսում էր հայկական զորքերի ու նրանց հրամանատար Դրոյի ներկայությունը: Վերջինիս բողոքին ի պատասխան Ռոստովում գտնվող Կարմիր բանակի հրամանատար Վասիլենկոն սպառնաց, որ «կհարձակվի Երևանի վրա և կոչնչացնի Արարատյան հանրապետությունը»: Հայաստանում Ռուսաստանի ներկայացուցիչ Բորիս Լեգրանը բողոքեց այդ հայտարարության դեմ, բայց վերջինիս նման մտահոգները այդ օրերի Ռուսաստանում քիչ էին: Ի լրումն այդ ամենի, ազատագրական պայքարի դաժան բովով անցած հայկական բանակը լուծարվեց և խորհրդային կարգերի նկատմամբ համակրանք տածող հայ սպայակույտը աքսորվեց Հայաստանից:

Նման մտայնությամբ կարելի է բացատրել և 1920 թվականի օգոստոսի 10-ին կնքված Սևրի պայմանագրի նկատմամբ Խորհրդային Ռուսաստանի խիստ բացասական վերաբերմունքը: Սևրից չորս օր հետո, օգոստոսի 14-ին ՌԽՖՍՀ ժողկոմխորհի նախագահ Լենինը Կրեմլում ընդունեց թուրքական պատվիրակությանը, որը գլխավորում էր արտաքին գործերի նախարար Սամի բեյը՝ 1915-ին Տրապիզոնի նահանգապետը, որն անձամբ էր ղեկավարել հայերի բռնագաղթն ու ոչնչացումը: Նրա հրամանով ծնողներից խլված մանկահասակ երեխաներին կազմակերպված տանում էին ծով և այնտեղ ջրախեղդ անում:

Լենինը թուրքերին խոստացավ ամեն տեսակ օգնություն՝ դժբախտ Թուրքիային համաշխարհային կապիտալի ստրուկի վերածող Սևրի անիրավահավասար, կողոպտչական պայմանագրի տապալման գործում:

Տասն օր հետո, օգոստոսի 24-ին, Մոսկվայում քեմալականների և ՌԽՖՍՀ-ի միջև նախնական համաձայնագիր ստորագրվեց բարեկամության մասին, ըստ որի սկսվեցին ռուսական զենքի հապճեպ մատակարարումները Թուրքիային:

Եվս մեկ շաբաթ, և սեպտեմբերի 1-ին Բաքվում Կրեմլի նախաձեռնությամբ հրավիրված Արևելքի ժողովուրդների համագումարում, ի շարս այլ որոշումների, միահամուռ որոշում կայացվեց նաև համաշխարհային հեղափոխության հաղթանակի ճանապարհին վերացնել «Անտանտի վարձկան Հայաստանի Հանրապետությունը»: Համագումարի ընթացքը և մասնակիցների կազմը նախապես էին որոշված Իոսիֆ Վիսարիոնովիչի կազմած սցենարով: Նախագահողներն էին Ստալինի հանձնակատարներ՝ հրեա Գրիգորի Զինովևը և ադրբեջանցի Նարիման Նարիմանովը: Ռուսաստանի մյուս պատվիրակը ևս հրեա էր՝ Կարլ Ռադեկը, որը Թալեաթի մտերիմ ընկերներից էր և ամեն կերպ արդարացնում էր հայերի ցեղասպանությունը: Ի դեպ, խորհրդային կառավարության հրավերով Բաքու էր ժամանել նաև Թալեաթի մերձավոր զինակից Էնվեր փաշան, որը ևս հուզառատ հեղափոխական ճառով կոչ արեց ոչնչացնել իմպերիալիզմի դրածո Հայաստանին:

Սովետների երկրի այսպես կոչված «արևելյան դիվանագիտության» ճարտարապետ Իոսիֆ



Ստեփան Շահումյան

Ստալինի և նրա հանձնակատարներ Օրջոնիկիձեի, Նարիմանովի, Մդիվանու և այլոց ջանքերով ցեղասպանության դաժան արհավիրքն ապրած հայերի և այն իրագործած թուրքերի հավաքական կերպարների փոխատեղում է կատարվում: Զոհի և դահճի փոխատեղման հետևանքով ստեղծվեցին ագրեսոր հայի և ճշմարտություն փնտրող, տառապած թուրքի կերպարները: Խորհրդային պատմաբան ոմն Գուրկո Կրյաժին, օրինակ, 1923 թվականին Մոսկվայում հրատարակված «Թուրքիայում հեղափոխության պատմությունը» գրքում կարող էր հանգիստ գրել՝ «Սևրի հաշտության պայմանագիրը որպես ծանր մղձավանջ ճնշում էր պայքարող ու տառապող Թուրքիային, քանի դեռ Մուստաֆա Քեմալը ծվեն-ծվեն չարեց այն»:

Բոլշևիկա-քեմալական բարեկամությունը բացատրվում էր նաև նրանով, որ Մուստաֆա Քեմալը Մոսկվայի իր գործակալների միջոցով Լենինի շուրջը համախմբված սիոնիստ համայնավարներին հասկանալ էր տվել, որ հաղթանակի դեպքում թուրքական կառավարությունը Պաղեստինում հրեաների համար ազգային օջախ կստեղծի: Հայերի բնաջնջման դիմաց հրեական պետություն ստեղծելու փոխհատուցման խնդիրը ոգևորում էր և Պարվուսին, և Տրոցկուն, և Ռադեկին…

Պատմությունը երբեմն կարող է ֆարսի վերածվել: Մոսկվայից 70 տարի շարունակ Կովկաս հասած պատմաշինարարական կաշկանդիչ հրահանգները կամայականորեն այնպես էին «քանդում-հավաքում» տարածաշրջանային պատմությունը, որ այսօր դրանցից ձերբազատվել փորձող մասնագետներին դժվար է որոմը հացից զատելը: Այնուամենայնիվ մի բան հստակ է: Ամբողջ կյանքում Ստալինը սադիստի բավականությամբ ճնշեց իր շրջապատի հայերին:

Հիշում է գեներալ-գնդապետ, ակադեմիկոս Աբրահամ Ալիխանովը. «1952 թվականին սովետական բանակի օրը Ստալինն իր ամառանոցում, բանակի մեծ թվով բարձրաստիճան պաշտոնյաների ներկայությամբ, բաժակը ձեռքին մոտեցավ ինձ և ասաց. «Ընկեր Ալիխանով, հիմա հայերն էլ մարշալ կունենան: Բայց գեներալիսիմուս դուք չեք ունենա: Փոխարենը դուք իսկական ծովակալ ունեք՝ Իսակովը: Կեցցե, ոտք չունի, բայց գլուխ ունի»: Նա չխկացրեց բաժակիս, կում արեց ու անցավ առաջ: Սակայն առաջնորդն իր խոսքի տերը չեղավ, պարզապես խաբեց: Չնայած Հովհաննես Իսակովի հսկայական ծառայություններին Հայրենական մեծ պատերազմում՝ Ստալինն այդպես էլ նրան Սովետական Միության նավատորմի ծովակալի կոչում չշնորհեց: Այդ, ինչպես և Սովետական Միության հերոսի կոչումը, Իսակովին շնորհվեց առաջնորդի մահից երեք տարի անց:

Նա փառապանծ Հովհաննես Բաղրամյանին ևս բարձրագույն զինվորական աստիճան՝ Խորհրդային Միության մարշալի կոչում չշնորհեց: Դա արեց Նիկիտա Խրուշչովը, 1955 թվականին:

Ճիշտ է, հայերին զինվորական բարձրագույն կոչում չշնորհելու Ստալինի վճռականությունը մի անգամ խախտվեց:

1945 թվականի վերջին Լեռնային Ղարաբաղի Հադրութի շրջանի Մեծ Թաղլար գյուղի մի քանի բնակիչ դիմել էին ԽՍՀՄ պաշտպանության նախարարության պարետատուն՝ իրենց հայրենակից մարշալ Խուդյակովի հետ հանդիպելու խնդրանքով: Միամիտ գյուղացիները համոզում էին հերթապահ սպային, որ Խուդյակովը իրենց համագյուղացի Արմենակ Խանփերյանցն է: Հերթապահը այդ մասին տեղյակ պահեց իր ղեկավարությանը:

Նորությունն անհավանական կայծակնային արագությամբ հասավ վերին օղակներ: Մարշալն անմիջապես նետվեց ներքին գործերի ժողկոմի տանջարան, որտեղ մնաց չորսուկես տարի, մշտապես ենթարկվելով խոշտանգումների: 1950 թվականի ապրիլին մարշալ Խուդյակով-Խանփերյանցը գնդակահարվեց: Զարմանալի չէ, քանի որ Ստալինը մարշալի կոչում էր տվել ռու-

սի, ոչ թե հայի: Եվ իր իսկ սխալի հարուցած զայրույթը պարպեց տարաբախտ մարշալի վրա: Ընդհանրապես վրացիների հայամերժության մեջ միստիկ մի բան կա: Բայց գուցե դրա բացատրությունը ավելի պարզ է, քան իրականում թվում է: Միգուցե դա հայելային անդրադարձն է իրենց հանդեպ մեր իսկ ունեցած վերաբերմունքի: Ինչ որ ցանես, այն կհնձես: Համենայն դեպս Հայաստանում 30-ականների քաղաքական բռնությունների զոհերի գործերին ծանոթանալիս առաջին մեղադրանքը, որ ընդհանրական է գրեթե բոլորին, վրացիների հանդեպ տածած հակակրանքն է:

Հիշեցի արխիվային գործերից ինձ ծանոթ երևանյան հանրահայտ «Տուրիստ» սրճարանում Ներսիկ Ստեփանյանի արած տխուր մի կատակը՝ «Վրացի փոքրիկ ժողովուրդը բոլշևիկների կայսրությունում դարձել է նույնը, ինչ մոնղոլները Ոսկե Հորդայում»: Այս սրճարանի գրեթե բոլոր այցելուներին 1936-1938 թվականներին գնդակահարեցին նացիոնալիզմի համար:

Երբ միտքս բարձրաձայնեցի, այդ շրջանի պատմությանը քաջատեղյակ զրուցակիցս առաջին պահ շատ պարզունակ թվացող հարց տվեց.

- Իսկ հայերին չսիրելու համար որևէ վրացու երբևէ դատե՞լ են:

Հարցն անպատասխան թողեցի: Փորձում էի կենտրոնանալ և, հիշողությունս պեղելով, որևէ նման դեպք հիշել: Չկար:

...Տագնապոտ չարչարանքով հիշողությունս կարծես փորձում էր դուրս վանել մեր հարևանի արած չափից դուրս վիրավորական մի արտահայտություն, որը քերում էր միտքս, ինչպես կաղամորքի մեջ ընկած ավազահատիկ: Կարծես հաջողվեց, այո՝ «իմ երկրում հայ սպանելը մեղք չի համարվում»: Բայց վրացին չէր ասողը: Ասողը Բուդապեշտում քնած հայ սպային կացնահարած մարդանմանի՝ Ռամիլի ինքնավստահ պաշտպանն էր: Ստալին, Բերիա, Նարիմանով, Բագիրով դավադիր ոհմակի կենունակ մերօրյա վերապրուկը:

Նախորդ դարի կեսերին Իոսիֆ Վիսարիոնովիչի անմիջական հովանավորությամբ վրաց ակադեմիկոս Ջանաշիան հեղինակեց մի զեղծարարություն, որը դպրոցական նստարանից հալած յուղի տեղ ընդունեցին խորհրդային մի քանի սերունդ: «Հայ, վրացի և ադրբեջանցի ժողովուրդներն են ուրարտական մեծ մշակույթի ժառանգորդները». հայտնաբերել էր վրաց գիտնականը ու իր մտքի «զոհարը» զետեղել բարձր դասարանների համար նախատեսված դասագրքերում:

Ընդհանրապես, 40-ական թվականները աչքի ընկան մեր հարևանների կողմից Հայաստանի պատմության կամայական վերաձևումներով: Այն պայմաններում, երբ Վրաստանի մասին հայը միայն ներբողներ գրելու իրավունք ուներ, վրաց պատմագրությունն ու գեղարվեստական գրականությունը հեղեղվեցին մեր ազգային արժանապատվությունը խոցող, հակագիտական «զոհարներով»: Դրանք անմիջապես արժանանում էին «ժողովուրդների հոր» խանդավառ վերաբերմունքին և թարգմանվում ռուսերեն: Այդ տարիներին էր, որ Բագրատիոնների տոհմածառը լիովին վրացիացավ, հայ Բագրատունիները հանկարծ դարձան վրացի, նրանց երբեմնի զբաղեցրած հողերն էլ՝ պատմական Վրաստանի անվիճելի տարածքներ:

Վրաց և հայոց պատմության մեծ օիտակի կոչմանը հավակնող Ստալինը ինքն էր այդ բնագավառի յուրաքանչյուր նորության հրատարակման իրավունքը տալիս: Հաճախ էլ ինքն էր խմբագրում:

Ռուսաստանի Գիտությունների ակադեմիայի Պատմության ինստիտուտի աշխատակից, պրոֆեսոր Բորիս Իլիզարովը 2003 թվականին մոսկովյան «Վեչե» հրատարակչությամբ լույս ընծայած իր «Ստալինի գաղտնի կյանքը. Նրա գրադարանի և արխիվի նյութերի հիման վրա» գրքում մի հետաքրքիր պատմություն է անում. «1944 թվականին, վրացական պատմաշինարարության ամենաեռուն շրջանում, երբ ակադեմիկոս Ջանաշիայի մտավարժանքները գիտական անվիճելի ճեռքբերումներ էին համարվում, Երևանում լույս տեսավականավոր գիտնական Հովսեփ Օրբելու սան, Պետական Էրմիտաժի տնօրեն Բորիս Պիոտրովսկու «Ուրարտուի պատմությունն ու մշակույթը» մենագրությունը: Երևանում նման գիրք հրատարակելն արդեն անթույլատրելի խիզախություն էր, էլ չենք խոսում այն մասին, որ հեղինակը Վանի թագավորության պատմությունը որևէ կերպ Վրաստանի և վրացիների հետ չէր կապում:

Մինչ այդ վրաց պատմաբան Ամիրանաշվիլին անզգուշություն էր ունեցել իր «Վրաց արվեստի պատմությունը» գրքում նկատել, որ Ուրարտուն կարծես թե Վրաստանի պատմության հետ անմիջական առնչություն չունի: Կոբան դրանից փրփրել էր: Պատանեկան տարիներից նա գիտեր հայերեն, գրում և կարդում էր այդ լեզվով ու այդ պատճառով էլ իրեն համարում էր հայագիտության մասնագետ:

Մեծ հայրենականի վճռական բեկման տարին էր, և Ստալինի ոխակալ զայրույթը այնուամենայնիվ լիցքաթափման առավել հրատապ բնա-



գավառում էր ցուցաբերվում՝ ռազմաճակատում: Պիոտրովսկու կյանքը մազից էր կախված, բայց հանգամանքները նրա օգտին էին դասավորվել, և Ստալինը կարծես մոռացավ նրա մասին: Բայց երբ 1950 թվականին Պիոտրովսկին հրատարակեց «Ուրարտու» հոդվածը, Ստալինն այն դրեց իր առջև և միանգամից վերածվեց հանցանշաններ փնտրող խուզարկուի:

Գիտնականի տողերում նա հույս ուներ գտնել այն աններելի սխալը, որը հեղինակի համար մահապատժի դատավճիռ կդառնար:

Ահա Պիոտրովսկին գրում է Վան քաղաքին մերձակա Զըմզըմ-Դաղ լեռան վրա գտնվող հանրահայտ Մհերի դռան մասին, հիշատակելով որ նրա վերհուշը «Հազար ու մի գիշերներ» հեքիաթաշարի միջոցով անցել է Եվրոպա՝ Սիմսիմ կամ Սեզամ ձևերով: Ստալինը կապույտ մատիտով տողանշում է այդ միտքը և լուսանցքում հեգնանքով ավելացնում՝ «հա, հա, հա, ծիծաղելի է»:

«Մհերի դուռ». այդպես է դրա հայերեն թարգմանությունը, գրում է Պիոտրովսկին և ավելացնում. «Մհերը մեկն էր սասունցի հսկաների չորս սերնդի մասին պատմող հայկական հին վիպերգի հերոսներից»: Ստալինը երկու ջղային գիծ է քաշում հայկական բառի տակ, սլաքով լուսանցքում հարցական նշան տեղադրելով: Դա նշանակում է, որ «Սասունցի Դավիթ» էպոսի հայկական պատկանելիությունը առաջնորդի համար խիստ կասկածելի է: Իսկ դուռ բառից սկիզբ առնող մեկ այլ սլաքի ծայրին նա ավելացնում է՝ «Դա թուրքերեն է»:

Սեպագրերի մասին Պիոտրովսկու յուրաքանչյուր հիշատակումից հետո Ստալինի զայրույթն ավելանում էր. «Ի՞նչ լեզվով», «Ո՞ր լեզվի մասին է խոսքը», «Լեզուն». շուրջ քսան անգամ կատաղած խզբզում էր նա հոդվածի համապատասխան պարբերության լուսանցքում: Իսկ երբ Պիոտրովսկին գրում է Հայաստանի Գիտությունների ակադեմիայի և Պետական էրմիտաժի՝ Կարմիր բլուրում համատեղ կատարած պեղումների մասին, Ստալինը կարծես զայրույթից շնչասպառ է լինում: «Ի՞նչ կապ կարող է լինել այդ երկուսի միջև». հատ-հատ գրում է նա, և թվում է՝ ահա վերջապես Պիոտրովսկու վերջը հասավ:

Բայց անվանի հնագետը կարծես նախապես իմանալով, որ հոդվածը Ստալինի աչքով մաղով պիտի անցնի (իսկ նա վստահաբար գիտեր առաջնորդի հայատյացության և վրացամեծարության մասին), հոդվածի ամենավերջին պարբերությունում իմաստնաբար ինքն իրեն կեղծում է. «Առաջավոր Ասիայի այդ խոշոր պետության, Ուրարտուի քայքայման ժամանակ նրա կազմի մեջ մտնող փոքր երկրները միավորվելով, ուրարտական մշակույթի հիմքի վրա ծնունդ տվեցին այժմյան Անդրկովկասի երկու ժողովուրդների՝ հայերին և վրացիներին»:

Ստալինը, անսպասելի վերջաբանից ոգևորված, բացականչական մի քանի նշանով արտահայտում է իր գոհունակությունը և թանձր ընդգծում «վրացիներ» էթնոնիմի տակ:

Վտանգն անցած էր… »:

№ 7—9 (213) XX ՏԱՐԻ ՅՈՒԼԻՍ—ՍԵՊՏԵՄԲԵՐ 1910

„Droschak" ORGANE de la Fédération Révolut. Arménienne.

ԴՐՕՇԱԿ

Adresse: RÉDACTION DU JOURNAL „Droschak" GENÈVE (Suisse)

„ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ" ՕՐԳԱՆ

# ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Լեհ Սոցիալիստ Կուսակցութեան Ընդհանուր Ժողովը յայտարարում էր, որ ցարիզմի քաղաքականութիւնը, յենուած ռուս հասարակութեան մի մասի վրայ, միշտ աւելի եւ աւելի մատնում է կատաղի նացիոնալիստական (ազգայնամոլ) ոգի, որի նմանը չի կարելի գտնել նոյնիսկ նախկին բռնակալութեան օրով:

Եւ համաձայն այդ յայտարարութեան, կուսակցութիւնը հրահանգում էր.

**1.** Բոլոր ուժով կռիւ մղել այդ նացիոնալիստական, ազգայնամոլ ձգտումների դէմ:

**2.** Պատրաստել ապագայ զինուած կռիւների համար, կռիւներ, որոնք Ռուսաստանի պէս մի բռնակալ պետութեան մէջ հանդիսանում են, որպէս առաջնակարգ անհրաժեշտութիւն իւրաքանչիւր սոցիալիստ կուսակցութեան համար:

**3.** Ուժեղացնել այդ նպատակով կուսակցութեան մարտական թեւը, աճեցնել կուսակցութեան անդամների ընդունակութիւնը՝ զանգուածային ու զինուած ճակատամարտերի համար:

P.P.S.-ի Ընդհանուր Ժողովը յայտարարում էր. «Յեղափոխութեան հաջողութիւնը կախուած է ոչ միայն այն հանգամանքից, որ շարժումը կը բռնէ ժողովրդի ամենալայն խաւերը, այլ եւ նրանից՝ կը լինի՞ն արդեօք այդ զանգուածների մէջ բաւական թւով անհատներ, որոնք ընդունակ լինին ոչ միայն ղեկավարել քաղաքական-սոցիալական գործունէութիւնը, այլ եւ զինուած շարժումները»:

Ընդհանուր Ժողովը հրահանգում էր՝ հոգ տանել աշխատաւոր դասակարգի զինաւորման եւ զինավարժութեան համար, տարածել ժողովրդական լայն խաւերում ռազմական ծանօթութիւններ, եւ արծարծել միաժամանակ նրանց մէջ այն համոզումը, որ զինուած կռիւը հնարաւոր է: Ձեռնհաս ատեանի այս մի քանի հրահանգներից երեւում է արդէն, թէ ինչ է ներկայացնում P.P.S.-ը, ինչով է նա տարբերւում իր հայրենիքի միւս կուսակցութիւններից եւ նախ՝ սոցիալ-դեմոկրատիայից, որ այնտեղ, Լեհաստանի հողի վրայ եւս, հանդիսանում է ընդհանրապէս նոյն կրաւորական «գործադուլային» ու «պրոպագանդային» մարմինը, ինչպէս կայսրութեան ուրիշ վայրերում:

Եւ Լեհ Սոց. Կուսակցութիւնը գործում է համաձայն իր Կոնգրէսի որոշումներին: Ռէակցիայի վերջին սեւ թուականներում նա լեհ ժողովրդի միակ ռազմական մարմինն է, որ ազդու միջոցներով կռիւ է մղում կառավարութեան դէմ, սիստեմատիկ կերպով ոչնչացնում է, տերրորի ենթարկում բիւրոկրատիայի վատթարագոյն ներկայացուցիչներին, կոտորում է շարունակ, լրտեսներ ու պրովոկատորներ եւ միաժամանակ մեթ ընդ մերթ կազմակերպուած մարտախմբերով յարձակւում է կառավարական հիմնարկութիւնների վրայ – փոստերի, բանկերի, մաքսատների – գրաւում է պետական գումարներ՝ իր կռուի անհրաժեշտ պէտքերը հոգալու համար:

# ՀԱՅԱՍՏԱՆԸ

## 1945-1946 ԹԹ. ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐՈՒՄ

*ՀՀ Ազգային արխիվում տեղի ունեցավ «Հայաստանը և խորհրդաթուրքական հարաբերությունները 1945-1946 թթ. դիվանագիտական փաստաթղթերում» գրքի շնորհանդեսը: Գիրքը «Հայ Դատ» հիմնադրամի մեկենասությամբ հրատարակել է Ազգային արխիվը: Փաստաթղթերի ժողովածուի կազմող, խմբագիր, նախաբանի հեղինակն է պատմական գիտությունների դոկտոր, ՀՀ արտաքին գործերի փոխնախարար Արման Կիրակոսյանը, փաս-*





Արման Կիրակոսյան

*փաթղթերի արխիվային ցնակերպումը կատարել է պատմական գիտությունների դոկտոր, Ազգային արխիվի տնօրեն Ամատունի Վիրաբյանը:*

*Գիրքը կազմվել է 1945-1946 թթ. Խորհրդային Հայաստանի արտաքին գործերի նախարար Սահակ Կարապետյանի պատրաստած թղթածրարի նյութերից, որոնք միտում էին հիմնավորել 1945-ի մարտին Թուրքիայի հետ նոր պայմանագրի կնքման պայմաններից մեկը, խորհրդային կառավարության առաջարկով, Կարսի և Արդահանի մարզերը համապատասխանաբար Հայաստանին և Վրաստանին վերադարձնելը:*

*Ամատունի Վիրաբյանը պատմեց, որ գրքի հիմնական բաժինը կազմող թղթածրարը գտնվել է գրքի խմբագրի հոր՝ 1975-1985 թթ. Հայաստանի արտաքին գործերի նախարար Ջոն Կիրակոսյանի տանը: Արման Կիրակոսյանը թղթածրարը հանձնել է Հայաստանի Ազգային արխիվին:*

*Արման Կիրակոսյանը հայտնեց, որ գիրքը կազմելու և վերջնական տեսքի բերելու համար մեծ թիմով և մեծ նվիրումով են աշխատել. նա շնորհակալություն հայտնեց աշխատանքի բոլոր մասնակիցներին:*

*«Հայ Դատ» հիմնադրամի նախագահ, ՀՅԴ Բյուրոյի անդամ Լևոն Մկրտչյանը կարևորելով ժողովածուի կազմությունը, հատկապես գնահատեց խմբագրի կողմից գիտական ծավալուն նախաբանը, որը համարեց Հայկական հարցի պատմությունը ռուս-թուրքական և խորհրդաթուրքական հարաբերությունների համատեքստում՝ մինչ օրս ստեղծված առաջին ամբողջական մենագրությունը: Լևոն Մկրտչյանը հատկապես կարևորեց այս օրերին նման ուսումնասիրության հրատարակության քաղաքական նշանակությունը, շեշտելով, որ այդ թղթածրարի հիմքը կազմող քաղաքական գիծը եղել է Հայաստանի առաջին Հանրապետությունից ժառանգած քաղաքական գիծը, ինչին պետք է հավատարիմ մնալ նաև այսօր:*

*Գնահատանքի խոսքեր ասացին նաև ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի Արևելագիտության ինստիտուտի տնօրեն Ռուբեն Սաֆրաստյանը, Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետի դեկան Էդիկ Մինասյանը, պատմական գիտությունների դոկտոր Միեր Կարապետյանը, Սևծովյան տնտեսական համագործակցության կազմակերպությունում մեր երկրի առա-*

*ջին ներկայացուցիչ, պատմական գիտությունների դոկտոր Արսեն Ավագյանը: Նրանք շեշտեցին ռուսերեն բնագրով գիրքը անգլերենի թարգմանելու և հրապարակելու կարևորությունը:*

*Շնորհանդեսին ներկա էին նաև ԱԺ պատգամավորներ Գալուստ Սահակյանը և Վահան Հովհաննեսյանը:*

*Շնորհանդեսը ավարտվեց Ամատունի Վիրաբյանի խոստումով, որ առաջիկայում, ԱԺ նորոգված դահլիճում կկայանա Ազգային արխիվի հրապարակած «Հայաստանի Հանրապետության պառլամենտի նիստերի արձանագրություններ. 1918-1920 թթ.» փաստաթղթերի և նյութերի ժողովածուի շնորհանդեսը: Ազգային արխիվի տնօրենը հայտնեց նաև, որ հրապարակության են պատրաստվում Հայաստանի առաջին Հանրապետության արտաքին քաղաքականության վերաբերյալ փաստաթղթերի և կառավարության 1918-1920 թթ. որոշումների հավաքածուները:*



Արման Կիրակոսյան, Ամատունի Վիրաբյան



Լևոն Մկրտչյան



# ՓԱՐԱՎՈՆ ՄԻՐԶՈՅԱՆ

Սանկտ Պետերբուրգի «Կապոյտ հյուրասրահ» ցուցասրահում բացվեց Փարավոն Միրզոյանի ստեղծագործությունների ցուցահանդեսը, նվիրված Սանկտ-Պետերբուրգի հայկական համայնքի հիմնադրման երեք հարյուր ամյակին:

1975թ. Սանկտ Պետերբուրգի Ի. Ե. Ռեպինի անվան Գեղարվեստի ակադեմիան ավարտելուց և հայրենիք վերադառնալուց հետո Փարավոն Միրզոյանն առաջին անգամ ներկայացավ այն քաղաքում, ուր անցկացրել էր իր ուսանողական տարիները:

*«Իհարկե, յուրաքանչյուր իրադարձություն մեր միությունում նշանակալից է: Եվ այսօր, մեր հիասքանչ «Կապոյտ հյուրասրահում» բացվում է մի անկրկնելի նկարչի ցուցահանդես: Յուրաքանչյուր մեր հանդիպումը յուրօրինակ անակնկալ է, գոնե ինձ համար»:*

*Սովորել է նա Գեղարվեստի ակադեմիայում, Միլնիկովի մոտ, հրաշալի, հզոր արվեստանոցում: Եվ մտածում էինք. վերադառնալով հայրենիքից, բերելով իր ցուցահանդեսը, ի՞նչ ցույց կտա: Ի՞նչ մնաց նրանում մեր ինստիտուտից, և ինչպիսի՞ն է նա այսօր, երբ վերափոխված է, ներշնչված հայրենի հողից.. Եվ, պետք է ասեմ, ես հիասթափված չեմ, այլ հիացած եմ այն բանից, որ նա ամեն դեպքում պահպանեց ու ետ բերեց Փարավոն նկարչի բնույթն ու կերպարը, ակադեմիական սկզբի նվիրած ճաշակն ու որակը: Եվ այդ պատճառով այն, ինչ հիմա տեսնում եմ ես, տոն է, իսկական գեղանկարչության տոն, գեղանկարչության մեջ իսկական երաժշտականության տոն, երաժշտականություն, որ նկարչին տրվում է Աստծո կողմից, իբրև տաղանդավոր, հրաշալի կոմպոզիտորի, ով կարողանում է արտահայտել ամենաբարդ զգացմունքները արվեստում: Ահա թե ինչու ես ուրախ եմ նրա համար, և շնորհավորում եմ նրան հրաշալի ցուցահանդեսի առթիվ»*

Ալբերտ Սերաֆիմովիչ Չարկին
*ՌԴ ժողովրդական նկարիչ,*
*ՌԴ Գեղարվեստի ակադեմիայի անդամ,*
*Սանկտ Պետերբուրգի նկարիչների միության նախագահ,*
*պրոֆեսոր*

ԴՐՕՇԱԿ

Պատկերասրահ









# ԴՐՕՇԱԿ






